

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

2 (21)
2019



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003թ., տարին երկու անգամ:

**Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ.Գ.
Խմբագրական խորհուրդ՝**

Աբրահամյան Վ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ.Կ., Կատվալյան Վ.Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Ս. Ս. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерян Р. (Франция), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan A. K., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Knachatryan G. K., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria).

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2019

ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Բանասիր. գիտ.դոկտոր Ռ. Մ. Թոխմախյան

Բանալի բառեր- լեզվամտածողություն, հոգնակիության քերականական կարգ, հավաքական գոյականներ, բակառություն, բազմակիություն, թվային անհամաձայնություն, թվային համաձայնության շեղումներ, տեսական ու գործնական նշանակություն:

Հայերենում գոյականների հոգնակիության քերականական կարգն իր ձևական արտահայտությունն ունի՝ շնորհիվ ձևաբանական ցուցիչների՝ *-եր* միավանկ գոյականների համար՝ *ազգեր, տներ, քարեր* և այլն, և *-ներ*՝ բազմավանկ գոյականների համար՝ *սեղաններ, քաղաքներ, այգիներ* և այլն, մասամբ նաև *-ք՝ գյուղացիք, քաղաքացիք, տներցիք, ծնողք, կրոնք, տղաք¹, -այք կանայք, պարոնայք, տիկնայք* և *-իկ*, միայն մեկ՝ *մարդիկ* բառում: Եվ եթե բառը չունի այդ ցուցիչները, ուրեմն հոգնակի չէ, եզակի թվով է: Այս պնդումը, սակայն, աքսիոմատիկ չէ. այդպիսի վերջնաբաղադրիչ ունեցող մի շարք բառեր՝ *ալեհեր, գիշեր, տնավեր, անվեհեր, տաւմեր, պիտներ, միսիտներ, կուռք, սարք, ծիրք* և այլն, հոգնակի արտահայտիչներ չեն: Հակասական են մնում *ք* ցուցիչով այն կազմությունները՝ *վազք, խելք, միտք* և այլն, որոնք լեզվի պատմության վաղ շրջաններում եղել են հոգնակի ձևեր, ներկայումս դիտարկվում են որպես եզակի հասկացություններ, ուստի և ստանում են *-եր* և *-ներ* ածանցներ՝ *վազբեր, մտքեր, ծեռքեր, ընտանիքներ*: Այդ ածանցով մի շարք բառեր էլ, պահպա-

¹ Հոգնակի այս ցուցիչը հին հայերենին՝ գրաբարին բնորոշ ձևույթ է, որին արդի հայերենում փոխարինում է *-ներ*-ը. որոշ դեպքերում դեռ պահպանվում են գրաբարյան կազմությունները՝ մերոնք, ծերոնք, աշխարիք և այլն, այլ դեպքերում՝ գործածական են զուգահեռ ձևերը՝ *գյուղացիք – գյուղացիներ, տներցիք – տներցիներ, նախնիք – նախնիներ*, իսկ բազմաթիվ այլ բառերում այդ ք-ն կամ ընկել է, կամ էլ մնում է՝ չգիտակցվելով իբրև հոգնակի ցուցիչ՝ *աչքեր, ծեռքեր, մտքեր* և այլն:

նելով հոգնակիության իմաստը՝ *գյուղացիք, քաղաքացիք, տնեցիք, ծնողք, տղաք*, զուգահեռաբար ունեն նաև այլ հոգնակերտ մասնիկներով ձևեր՝ *գյուղացիներ, քաղաքացիներ, տնեցիներ, ծնողներ, տղաներ*։ այլ կերպ ասած՝ ձևական առումով հոգնակիակազմությունը միտված է միօրինակացման, սակայն այդպիսին չէ։

Իմաստային առումով հոգնակի են բոլոր այն բառերն ու հասկացությունները, որոնք մեկ և միևնույն հատկանիշի կրողներն են։ Խայերենում ընդունված է դրանց կոչել հավաքական գոյականներ։ Մ. Ասատրյանը² սրանց ձևաբանական դրսևորման հատկանիշ է համարում միայն –ություն ածանցով կազմված ձևերը, որոնք կարող են ունենալ համապատասխան ու համարժեք –ներով ձևերը՝ *ուսանողություն = ուսանողներ, գյուղացիություն = գյուղացիներ, ոստիկանություն = ոստիկաններ* և այլն, սակայն այս սահմանումը ևս բացարձակ չէ, քանի որ –ությունով ոչ բոլոր ձևերը կարող են հավաքականություն դրսևորել, ինչպես՝ *դասախոսություն, գիտություն, սկզբունքայնություն, գիտակցություն* և այլն։

Սա նշանակում է, որ հավաքականությունը պետք է դիտարկել ոչ թե որպես ձևաբանական հատկանիշ, այլ բառախմբերի դասակարգման իմաստային դրսևորում։ Օրինակ՝ *ազգ, բանակ, ժողովուրդ, պարս, երամ, վտառ* և այլն³։ Ընդ որում, ձևով լինելով եզակի՝ այս գոյականները գրական խայերենում որպես ենթակա գործածվելիս ստորոգյալի հետ համաձայնում են եզակի թվով. օր. *Ազգը* համախմբվեց։ *Բանակը* տեղաշարժվեց։ *Ժողովուրդը* ոտքի ելավ։ Սակայն նույն հավաքականները կարող են ստանալ հոգնակիի ցուցիչներ, ուստի նաև հոգնակի ստորոգյալ։ Թռչունների *երամները* ձախրում էին երկնքում, Մեղունների *պարսերը* գրոհել էին ծաղկած ծառերը։ Եվրոպական *ազգերը* համախմբվեցին։ Նման կիրառությունները ևս կանոնական ձևեր են։

Այլ է վիճակը ածանցավոր հավաքականների դեպքում (*-անի, -եղեն, -ություն նամականի, խմորեղեն, ուսանողություն* և այլն, և *-անք, -ոնք, -ունք*՝ *Վարդանանք, մերոնք, պապոնք, աստղունք, ծաղկունք*)։ Առաջին խումբ ածանցավորները, հիմնականում պահպանելով հավաքականության դրսևորումները, երբեմն կարող են դիտարկվել որպես եզակի գոյականներ՝ տեսականիներ, և ստանալ հոգնակիության ցուցիչներ. օր.՝ *խմորեղենները* դասավորեցին ըստ տեսակների։ Գիտաժողովի ընթացքում համեմատության մեջ դրվեցին Պ. Սևակի և Գ. Մահարու *նամականիները*։

² Մ. Ասատրյան, Ժամանակակից խայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, 1970, էջ 119-121։

³ Որոշ ածանցներ՝ *-եղեն, -անի, -ածու* և այլն, իրենց բառակազմական և իմաստային այլևայլ գործառույթներին զուգընթաց, կարող են դրսևորել նաև բազմակիության, հոգնակիության, հավաքականության գաղափարներ։

Եզոպոսի և Այգեկցու *առածանիները*: Հասարակական *կազմակերպությունները* միավորվեցին նույն բաժանմունքում և այլն: Մինչդեռ երկրորդ խմբի գոյականները միայն հոգնակի թվով են հանդես գալիս (սրանք ոչ թե հավաքական գոյականներ են, այլ հոգնակիության ցուցիչով կազմվածներ), այսինքն՝ հավաքականների դեպքում ևս չունենք միասնական ձևաբանական համակարգ, այլ առաջնորդվում ենք բառերի իմաստային խմբերի առանձնացմամբ: Այլ կերպ ասած՝ քերականական մեկ, այն է՝ ձևաբանություն մակարդակից, անցում ենք կատարում մեկ այլ՝ բառագիտության մակարդակ: Այդ է պատճառը, որ հավաքականության իմաստ արտահայտող – *անք*, *-ենք*, *- ունք*, *-ոնք* ձևայիններով կազմված մի շարք բառեր՝ *Վարդանանք*, *Սուրենենք*, *պապոնք* և այլն, լեզվաբանների մի մասը համարում է հոգնակի մյուս մասը՝ դրանցով կազմված գոյականները քարացած ձևերը, իսկ երրորդ խումբը՝ հավաքական⁴:

Հավաքական գոյական⁵ հասկացության մասին բավականին խոսվում է նաև այլ լեզուների քերականություններում: Փորձում են գտնել ձևաբանական ինչ-ինչ հատկանիշներ նման դասակարգման ենթարկվող բառախմբերի առանձնացման համար: Անգլերենում, օրինակ, հավաքական գոյականը առանձին դեպքերում կարող է համաձայնել ստորոգյալի հետ, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ստորոգյալի հետ⁶. *Family, class, team, police* և այլ բառերը կարող են գործածվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի ստորոգյալների հետ՝ կախված այն բանից, թե խոսողը կամ հաղորդողը այն դիտում է որպես մե՞կ, թե՞ մասերից կազմված ամբողջություն. օր.՝ *My family are getting ready for a journey: my mom is packing her clothes, and my brother is trying on his new suit.* և *My family is invited to the Rachel's wedding.*

Սա անգլերենում կանոնական դրսևորում է՝ կախված հաղորդողի ընկալումից / նպատակադրումից, մինչդեռ թվարկված բառերը հայերենում դիտարկվում են որպես մեկ ամբողջություն և պահանջում են միայն եզակի ստորոգյալ. օր.՝ *Թիմը* հաղթեց, *Ընտանիքը* ժամանեց: *Ղասարանը* ոտքի կանգնեց:

Այսպիսով, հայերենում հավաքականության հասկացությունը պետք է դիտարկել ոչ թե որպես ձևաբանական կարգ, այլ բառերի իմաստային

⁴ Տե՛ս *Ֆ. Հ. Խլղաթյան*, Ժամանակակից հայոց լեզու, Բ մաս, Ե., «Զանգակ-97», էջ 21:

⁵ Լեզվաբանական բառարանում հեղինակներն այսպես են բնորոշել այս բառերը. «Այն գոյականները, որոնք ցույց են տալիս մարդկանց, առարկաների կամ երևույթների բազմություն որպես մի միասնական ամբողջություն». Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 172:

⁶ <https://www.native-english.ru/articles/collective-nouns>

խումբ (դասակարգում)՝ բուսանուններ, կենդանիների կարգեր, տիեզերական առարկաներ և այլն:

Ժամանակակից հայերենի լեզվաբանական գրականության մեջ գործածվում է *բակառություն* կոչված տերմինը՝ որպես շեղում ընդունված կանոնական ձևերից, երբ նախադասության ենթական հավաքական գոյականը, գործածվում է հոգնակի ստորոգյալի հետ. *Ժողովուրդը* ոտքի կանգնեցին: Երևույթ, որը և ժամանակավրեպ է, և ոչ նորմատիվ, թեև որոշ օրինակներ դեռ հանդիպում են. «Իրանի *Ժողովուրդը*, ինչպես աշխարհի ամեն մի ծայրում, այնպես էլ Իրանի բոլոր քաղաքներում, տասնյակ հազարներով *արտահայտեցին...* իրենց սերն ու երախտագիտութիւնը» («Վերածնունդ», 1953, 03, 17#26):

Մեր դիտարկումներից ելնելով՝ այն տեսակետին ենք հանգում, որ լեզվում գործում են այլ օրինաչափություններ. երբ ձևով եզակի ենթական իմաստով հոգնակի ստորոգյալ է պահանջում, և դա բակառություն է: Նման գործածությունները թեև հաճախական չեն, բայց օրինաչափ և կանոնական են: Խոսքը հետևյալ տիպի լեզվական կառույցների մասին է. *մի քանիսը, այն մասը, մի մասը, զգալի մասը, զգալի հատվածը, գերակշռող մասը, ուսանողների կեսը, կեսից ավելին* և այս տիպի բազմաթիվ այլ բառերի իմաստային կապակցություններ, որոնց բառային իմաստները պահանջում են հոգնակի ստորոգյալներ, մինչդեռ դրանց ձևն ու գրական նորմը՝ եզակի ստորոգյալ. օր.՝ Մի քանիսը եկավ = մի քանիսը եկան, Մի մասը դժգոհեց = Մի մասը դժգոհեցին, Աշակերտների կեսից ավելին մնաց = Աշակերտների կեսից ավելին մնացին և այլն: Երկու դեպքերն էլ պետք է կանոնական համարել:

Երկակի կանոնավորության օրինակներից են թվական որոշչով կազմությունները. Երկու ուսանող կտրվեց // Երկու ուսանող կտրվեցին: Հինգից երկուսը անբավարար ստացավ // Հինգից երկուսը անբավարար ստացան:

Մեր այս պնդումները հավաստող տվյալներ հանդիպում են Արևելահայերենի ազգային կորպուսում, որտեղ 5057 օրինակների մեջ 100-ից 2 - ը հոգնակի է. Մեր հայրենիքի կեսը պրոֆեսիոնալներ են, - կատակեցի ես՝ ընդհանուր ծիծաղի տակ, ո՞ր մեկի հետ կապեր հաստատենք (Սիլվա Կապուտիկյան, Գույներ նույն խճանկարից):

Բառային կազմի կեսը չինական փոխառություններ են («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, 1981): Եթե խաչատուրը այն սոսկալի դեպքերից հետո գունաթափվել էր բոլորովին, մյուս առավոտյան, երբ հայելիի մեջ նայեց, տեսավ, որ մազերի կեսը սպիտակել են ... մի խոր ախ ևս քաշեց, առավ վերարկուն և տանից դուրս գնաց մռմռա-

լով... (Վրթ. Փափագյան, Պատմվածքներ): Ավելի խորանալով՝ կարելի է նկատել, թե վրացի բնակչության մի զգալի հատվածը՝ սկսած գրասենյակային աշխատողներից մինչև պատգամավորներ կամ նախարարներ, ունեն իրենց հոգևոր հայրերը, պաս են պահում ոչ միայն Մեծ Պահքի, այլև ամեն շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերը և այլն: Այդ իրադարձությունների մի զգալի մասը գծեցին տարվա տխուր հետագիծը, մի մասն էլ քաղաքական առումով բերեցին եթե ոչ նորություն, ապա գոնե քաղաքական դաշտի ավելի հստակեցում՝ ով-ով («Ազգ», 2006.12.26):

Նման դեպքերը բակառություն չի կարելի համարել, այսինքն՝ նախադասության ենթակայի դերով հանդես եկող գոյականի, կամ որպես այդպիսին գիտակցվողի բառային իմաստն է թելադրում ստորոգյալի թիվը: Եվ այս պարագայում կարևորվում է նաև այն, թե ինչպես է իրողությունն ընկալվել խոսողի, հաղորդողի տեսանկյունից: Առկա օբյեկտիվ իրողության արտացոլումը մեր մտածողության մեջ այնպիսին է, որ օրինակ, «Խնձորի կեսը հոտած էր» և «Ջորամասի կեսը նորակոչիկներ էին / էր» նախադասություններից առաջինում հոգնակիությունը հնարավոր չէ, քանի որ որոշիչը ձևով և իմաստով եզակի է, իսկ երկրորդում՝ նույն անդամը, թեև ձևով եզակի է, սակայն բովանդակությամբ՝ հավաքական, ուստի կարող է պահանջել թե եզակի, թե հոգնակի ստորոգյալներ/ստորոգյալ:

Հաղորդակցման ընթացքում հաճախ նկատելի է, որ արտահայտված մտքերը միշտ չէ, որ կարող են արտացոլել իրականությունը կամ ընկալվել միանշանակ. թերևս պետք է նկատի ունենալ, որ նույն երևույթը կարող է ունենալ տարբեր խոսքային դրսևորումներ. օր.[՝] *Դանակ- պատառաքաղներ կա՞ն սեղանի անկյունում / Դանակ- պատառաքաղներ կա՞ն սեղանի անկյունում* օրինակը ասվածի ապացույցն է:

Այսպիսով՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

1. հավաքականությունը հստակորեն պետք է տարբերակել հոգնակիությունից. այն ոչ թե ձևաբանական կարգ է, այլ բառերի իմաստային խումբ, որի դիտարկումը պետք է կատարել բառագիտության բաժնում,

2. բակառություն կոչված երևույթը ժամանակավրեպ և ոչ նորմատիվ կարգ է. լեզվում հանդիպում են բազմաթիվ օրինակներ, որոնք փաստում են, որ ենթակայի դերում հանդես եկող գոյականի, կամ որպես այդպիսին գիտակցվողի բառային իմաստն է թելադրում ստորոգյալի թիվը: Այդ դեպքերը լեզվական նորմից շեղումներ չեն, կանոնական կազմություններ են, և միտում ունեն տարածվելու. այդ են վկայում լեզվական տարբեր ոճերից և տարբեր ժամանակահատվածներից քաղված օրինակները,

3. հոգնակիությունը հայերենում երբեմն միևնույն առարկայի կամ երևույթի բազմակիությունը, շատ լինելը չի նշանակում. «վասակները»

կնշանակի ոչ թե շատ վասակներ, այլ այդ հատկությամբ օժտված մարդիկ,

4. հոգնակիության քերականական կարգի նկատմամբ չեզոք դիրք են գրավում այն գոյականները, որոնց տվյալ իմաստային դրսևորումը լեզվամտածողության արգասիք է. *ծիրան ուտել, ջուր խմել, հաց ուտել, պար բռնել* և շատ այլ կապակցություններում թվի քերականական կարգի անհրաժեշտություն չի զգացվում,

5. հոգնակիության կարգին անդրադառնալը նաև կարևոր գործնական նպատակ է հետապնդում. նկատելի են նախադասության ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնության բազմաթիվ և բազմապիսի շեղումներ:

Р. М. Тохмахян. Грамматическая категория множественности существительных в армянском языке: собирательные существительные – Рассмотрение грамматической категории множественности существительных в современном литературном армянском языке имеет теоретическое и практическое значение. В литературном восточноармянском языке подлежащее и сказуемое согласуются грамматическим числом и лицом, если подлежащее выражено местоимением, но иногда это правило не функционирует, что приводит к отклонениям в устной и письменной форме языка. В статье рассматриваются эти отклонения и делается вывод о том, что категория множественного числа имеет ряд неоднородных образований, которые имеют тенденцию к распространению.

Ключевые слова: языковое мышление, грамматическая категория множественности, собирательные существительные, численное несоответствие, бакарутюн, множественность, отклонения численного согласования, теоретическое и практическое значение.

R. M. Tokhmakhyan. The grammatical category of the plural of nouns in Armenian language: common nouns – In the modern literary Armenian language, a reference to the grammatical category of the plural of nouns has theoretical and practical significance .. In the literary Eastern Armenian language, the subject and predicate agree each other in their grammatical number. Sometimes this rule does not function, which leads to deviations in the oral and written form of the language. The article discusses these deviations and concludes that the plural category deviations have tendency to spread.

Key words - Linguistic thinking, the grammatical category of the plural, collective nouns, bakarutjun, plurality, numerical disagreement, numerical agreement deviations, theoretical and practical significance.

**ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. Սարգսյան

meri.sargsyan@lang.sci.am

***Բանալի բառեր.** կիրառական լեզվաբանություն, միջգիտակարգային ուսումնասիրություն, հայ լեզվաբանություն, լեզու և տեղեկատվական տեխնոլոգիաներ, լեզվի ուսուցում*

Լեզվաբանությունը, ինչպես գիտության մյուս բնագավառները, հասարակության որոշ կարգի պահանջմունքները (լեզու սովորելու, կիրառելու, ուսումնասիրելու և այլն) բավարարելու նպատակ ունի: Լեզվաբանության ուսումնասիրության առարկան մարդկային լեզուն է: Եվ ինչպես գիտենք, մարդկային գիտելիքներն առաջին հերթին դրսևորվում են լեզվի միջոցով, բացի այդ՝ տրամաբանական և հոգեկան երևույթներն էլ իրենց նյութական արտահայտությունն են ստանում լեզվի մեջ, այսինքն՝ պետք է նկատի ունենալ, որ հասարակության պահանջմունքները միայն գործնական բնույթ չունեն. եթե սկզբնապես գիտության զարգացումը նպատակ ուներ բավարարելու հասարակության գործնական պահանջմունքները, ապա աստիճանաբար առաջ են գալիս նաև տեսական հետաքրքրություններ: Հետևաբար՝ լեզվաբանների առաջնային խնդիրն է այդ պահանջմունքների բավարարումը:

Պետք է նշել սակայն, որ գիտության զարգացման յուրաքանչյուր փուլում գոյություն ունեն լեզվի տարբեր ըմբռնումներ, որոնք հանդես են գալիս լեզվաբանական հոսանքների ու հայեցակարգերի ձևով: Լեզվաբանները լեզվի բնույթի, ծագման, զարգացման ու գործառնական հարցերը քննելիս ելնում են գոյություն ունեցող ընդհանուր ըմբռնումներից կամ առաջ են քաշում սեփական ըմբռնումներ, որոնք լեզվաբանության զարգացման տարբեր փուլերում տարբեր կերպ են դրսևորվում: 20-րդ դարի երկրորդ կեսին թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնների ազդեցությամբ սկսվեց և 21-րդ դարում արդեն հաղթահարվեց լեզվի միակողմանի ուսումնասիրությունը: Լեզվաբանները սկսեցին գիտակցել, որ լեզվաբանությունը մեծ հաջողությունների կարող է հասնել այն դեպքում, եթե մի ուղղության ձեռքբերումները կիրառվեն մյուս ուղղության ներկայացուցիչների կողմից: Լեզվաբանության պատմության նորագույն շրջանը բնորոշվեց ուսումնասիրության նոր բնագավառների և գիտակարգերի առաջացմամբ: Մի կողմից ի հայտ եկան հիմնական և հարակից գիտակարգեր, մյուս կողմից՝ սկսեցին սահմանազատվել տեսական և կիրառական լեզվաբանության ուսում-

նասիրության բնագավառները, մեծացավ անդրատեսության և անդրլեզվաբանության դերը. դա նաև մի բնագավառի կարևոր ձեռքբերումները դարձրեց մյուսների ձեռքբերումները: Եվ այսպես, լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր միտումներ, իսկ դրան զուգընթաց՝ արվեցին լեզվաբանական գիտակարգերի դասակարգման առաջին փորձերը:

Ներկայումս լեզվաբանությունը ազատ փոխգործակցում է այլ գիտությունների հետ: Հետևաբար կարելի է ենթադրել, որ ներփակ լեզվաբանությունը վերածվում է միջգիտակարգային, մարդաբանական լեզվաբանության: Մարտին Հասփելմատը (Լայպցիգի Մաքս Պլանկի անվան էվոլյուցիոն մարդաբանության ինստիտուտի պրոֆեսոր), անդրադառնալով լեզվաբանության զարգացմանը, ընդգծում է, որ լեզվաբանությունը ավելի քանակական է դառնում¹: Լեզվի ուսումնասիրության մեջ ավելի ու ավելի գերիշխող է դառնում քանակական մոտեցումը: Կորպուսային լեզվաբանությունը սկսում է կենտրոնական դեր գրավել լեզվաբանական հետազոտությունների բնագավառում, ինչպես նաև աճում է փորձարարական հետազոտությունների դերը թե՛ քերականության բոլոր բնագավառներում, թե՛ հնչյունաբանությունից մինչև պրագմատիզմ²: Լեզվի տիպաբանությունը նույնպես ավելի քանակական է դառնում, կարևորվում է բարդ վիճակագրության կիրառումը³:

Ինչ վերաբերում է լեզվաբանական նոր ուղղություններին, ապա, պետք է նշել, որ նոր բնորոշումը, իհարկե, պայմանական է: Տեսությունը նոր է այնքան ժամանակ, քանի դեռ լայնորեն չի կիրառվում և չունի հետևորդներ: Այսպիսով՝ պայմանականորեն նոր են այնպիսի ուղղություններ, ինչպիսին են *քաղաքական և իրավաբանական լեզվաբանությունները, լեզվամշակութաբանությունը, կիրառական լեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը, գենդերային լեզվաբանությունը, պրագմատիկ լեզվաբանությունը (գործաբանական լեզվաբանությունը)*: Մի կողմից՝ սրանք արդեն իրենց կայուն տեղն ունեն գիտական ուսումնասիրություններում, մյուս կողմից՝ դեռևս չեն դարձել ավանդական: Լեզվաբանները տարակարծություններ ունեն լեզվաբանական այս նոր ուղղությունների բնորոշման հարցում: Այսպես, դժվար է որոշել սրանք գիտություն են, ուղղություն, բաժին, միջգիտակարգ, բնագավառ, տեսութ-

¹ M. Haspelmath, The future of linguistics: Two trends and two hopes, <http://dlc.hypotheses.org/754>

² K. Bromberek-Dyzman: “Linguistics needs to twist: Go experimental and interdisciplinary”, <http://dlc.hypotheses.org/754>

³ B. Balthasar, Distributional typology: Statistical inquiries into the dynamics of linguistic diversity. In Heine, Bernd & Narrog, Heiko (eds.). *The Oxford handbook of linguistic analysis*. Oxford: Oxford University Press, 2015, pp. 901-923.

յուն, թե հայեցակարգ: Պետք է նշել, որ լեզվաբանական գրականության մեջ այս բոլոր բնորոշումներն էլ հավասարապես կիրառվում են, և դեռևս հստակ և տարրորոշված չէ դրանց կիրառությունը:

Ինչպես գիտենք, «կիրառական լեզվաբանություն» տերմինն առաջին անգամ պաշտոնապես հանդես է եկել Միչիգանի համալսարանում 1946 թ.: Սկզբնական շրջանում, կիրառական լեզվաբանություն ասելով, հասկանում էին մի բնագավառ, որը զբաղվում է օտար լեզուների ուսուցման, անգլերենը օտարախոսներին սովորեցնելու մեթոդաբանության հարցերով: 1950-ականների վերջերին և 1960-ականների սկզբին տերմինի կիրառության ոլորտն աստիճանաբար ընդլայնվեց՝ ընդգրկելով այնպիսի բնագավառ, ինչպիսին «ավտոմատ թարգմանությունն» է: Շուտով ձևավորվեց Կիրառական լեզվաբանության միջազգային ասոցիացիան, որը սովորաբար կոչվում է ֆրանսերեն հապավումով՝ AILA: Այդ շրջանում կիրառական լեզվաբանության ուսումնասիրությունն ընդգրկում էր երկու հիմնական ուղղություն՝ օտար լեզվի ուսուցում և ավտոմատ թարգմանություն⁴:

Այժմ կիրառական լեզվաբանությունը բավական լայն ընդգրկում ունի: Կիրառական լեզվաբանության միջազգային ասոցիացիան՝ AILA-ն նշում է. «Որպես հասարակական կյանքի հատուկ խնդիրները լուծելու բնագավառ՝ կիրառական լեզվաբանությունը հետաքրքրվում է հասարակության բազմաթիվ և բարդ այն ոլորտներով, որոնցում լեզուն կարևոր դեր ունի»⁵: Այսինքն՝ դժվար չէ նկատել, որ կիրառական լեզվաբանության ոլորտին են վերագրվում թե՛ լեզվի ուսուցման հարցերը, թե՛ լեզվաբանության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, թե՛ լեզվի գործառնական հարցերի քննությունը: Պետք է նշել սակայն, որ Հայաստանում կիրառական լեզվաբանությանն առնչվող ուսումնասիրությունները փոքր-ինչ այլ բնույթի են: Այստեղ այս բնագավառն առաջին հերթին կապվում է տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի հետ, և շատ չնչին դեպքերում է վերաբերում լեզվի ուսուցման խնդիրներին: Այսպես, Հայաստանում կիրառական լեզվաբանության բնագավառի առաջին ուսումնասիրությունները վերաբերում են 21 -րդ դարասկզբին⁶: Սկզբնական շրջանում դրանք կա՛մ տեսական ուսումնասիրություններ էին, կա՛մ տեղեկատվական բնույթ էին կրում: Աստիճանաբար անցում կատարվեց նաև գործնական խնդիրների լուծումներին և հետազոտություններին: Կիրառական լեզվա-

⁴ G. R. Tucker, *Applied Linguistics*,

<https://www.linguisticsociety.org/resource/applied-linguistics>, Retrieved 2019-06-01.

⁵ AILA Vademecum. Association Internationale de Linguistique Appliquée. Amsterdam, 1992, p. 2.

⁶ A. Manukyan, A. Sargsyan, R. Urutyun, *The Usage of Information Technologies in Linguistics*, Yerevan, 2014; B. Janpoladyan, *Basics in computer applied technologies*, Yerevan, 2000.

բանության հայալեզու գրականության մեջ այս ուղղության շրջանակներում դիտարկվում են հետևյալ բնագավառները՝ տեքստի ավտոմատ մշակում, ինֆորմացիոն համակարգերի լեզվաբանական ապահովում, մեքենական թարգմանություն, ավտոմատացված ուսուցողական համակարգեր, արհեստական բանականության լեզվաբանական խնդիրներ, ծայնի ճանաչման և սերման համակարգերի լեզվաբանական ապահովում ևն: Ինչ վերաբերում է այս բնագավառում լեզվի ուսուցման խնդիրների քննությանը, ապա նշենք, որ նմանատիպ աշխատանքներ կատարվում են այժմ: Սակայն դրանք վերաբերում են անգլերենի ուսուցմանը՝ որպես օտար լեզու, որպես երկրորդ լեզու ևն: Այդ աշխատանքները հիմնականում դիտարկվում են որպես մեթոդաբանական, ոչ թե կիրառական լեզվաբանության բնագավառի աշխատանքներ: Հավելենք նաև, որ հայերենը ևս այսօր լայնորեն ուսուցանվում է որպես օտար լեզու, սակայն չկա որևէ ուսումնասիրություն, որևէ ձեռնարկ, մեթոդական ուղեցույց, որը ներկայացնի հայերենը որպես երկրորդ լեզու ուսուցանելու խնդիրները և մեթոդները: Պարզելու համար կիրառական լեզվաբանության ուսումնասիրության շրջանակները, ինչպես նաև մասնագետների ընկալումը՝ կատարել ենք կիրառական լեզվաբանության առնչվող հանրալեզվաբանական քննություն: Ըստ այդմ՝ կազմվել է հարցաշար, կազմակերպվել են անանուն հարցումներ: Վերջինները կազմակերպել ենք հետևյալ կերպ. նախ՝ փորձել ենք պարզել հարցվողների հասարակական դիրքը՝ աշխատավայր, մասնագիտացում, գիտական աստիճան, տարիք, ապա՝ կիրառական լեզվաբանության մասին պատկերացումները:

Հարցմանը մասնակցել է 45 մասնագետ՝ Հայաստանի գիտակրթական տարբեր հաստատություններից: Տարիքային խմբերը հետևյալն են՝ 25-35, 36-60, 61-80: Հարցվողները մասնագիտությամբ լեզվաբաններ են: Նրանց մի մասը բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդում է կիրառական լեզվաբանություն:

Հարցաթերթիկի առաջին հարցը հետևյալն է. *Ի՞նչ կամ ինչե՞ր է ուսումնասիրում կիրառական լեզվաբանությունը*: Այս հարցով փորձել ենք պարզել, թե ինչ են հասկանում կիրառական լեզվաբանություն ասելով, արդյո՞ք այն ըմբռնում են նեղ, թե՞ լայն իմաստներով: Հնարավոր պատասխաններից գերակշռողը հետևյալն էր. կիրառական լեզվաբանությունը մի բնագավառ է, որը զբաղվում է լեզուն կիրառելու, գործառնելու հարցերով, ինչպես նաև նոր միջգիտակարգ է, որը զբաղվում է լեզվաբանության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների փոխհարաբերության հարցերով: Հարցվողների 19 %-ը միայն պատասխանեց, որ կիրառական լեզվաբա-

նությունը զբաղվում է լեզվի ուսուցման հարցերով, ընդ որում՝ անգլերենի ուսուցման՝ որպես օտար լեզու, որպես երկրորդ լեզու:

Հաջորդ հարցը փորձում էր պարզել, թե որը կամ որոնք են կիրառական լեզվաբանության բնագավառները: Հետաքրքիր էր, որ հարցվողների մինչև 8 %-ը նշել էր հետևյալ բնագավառները՝ անգլերենը որպես օտար լեզու, հիբրիդ ուսուցում, օտար լեզվի ուսուցում, 14 %-ը՝ տվյալների մշակում, երկլեզվություն և բազմալեզվություն, 50 %- ից ավելին նշել էր հետևյալ պատասխանները՝ լեզու և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ավտոմատ թարգմանություն, ինչպես նաև շուրջ 60%-ը նշել էր հետևյալ սխալ պատասխանը՝ կիրառական հանրալեզվաբանություն:

Այն հարցին, թե *ինչ հարաբերության մեջ են կիրառական լեզվաբանությունը և լեզվի ուսումնասիրությանն առնչվող մյուս միջգիտակարգերը*, հարցվողների գրեթե 90 %-ը պատասխանել էր, որ կիրառական լեզվաբանությունը գործակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառին վերաբերող միջգիտակարգերի հետ: Շուրջ 80%-ը նշել էր հետևյալ սխալ պատասխանը. կիրառական լեզվաբանությունը միջանկյալ դիրք է գրավում. այն միջոց է, որը հնարավորություն է տալիս գործնականում կիրառել տարբեր միջգիտակարգերի ուսումնասիրության արդյունքները: Հարցվողների շուրջ 5%-ը ընտրել էր հետևյալ սխալ պատասխանը. կիրառական լեզվաբանությունը ինքնուրույն միջգիտակարգ է և չի գործակցում որևէ այլ գիտակարգի կամ միջգիտակարգի հետ:

Հարցումների արդյունքները խմբավորել ենք: Այնուհետև մաթեմատիկական վիճակագրության մեթոդով կատարվել է հավաքված և խմբավորված նյութի գնահատումը, որի հիման վրա էլ կատարել ենք որոշակի ընդհանրացումներ: Պետք է նշել սակայն, որ այս տվյալները դեռևս բավարար չեն լիարժեք պատկերացում կազմելու համար, դրանք համադրել ենք նաև կիրառական լեզվաբանության բնագավառում կատարված ուսումնասիրությունների ցուցանիշների հետ: Այդ ամենից հետո միայն հնարավոր է ներկայացնել լիարժեք պատկեր կիրառական լեզվաբանության հայաստանյան արդի վիճակի, խնդիրների, զարգացման միտումների վերաբերյալ: Ըստ այդմ պատկերը հետևյալն է: Եթե արտասահմանում կիրառական լեզվաբանության բնագավառի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է 20-րդ դարում, ապա Հայաստանում 21-րդ դարի սկզբին: Եթե արտասահմանում կիրառական լեզվաբանության բնագավառի սկզբնական ուսումնասիրությունները վերաբերում էին լեզվի ուսուցման խնդիրներին, ապա Հայաստանում ճիշտ հակառակն է. սկզբնական ուսումնասիրությունները վերաբերում էին լեզվի և տեխնոլոգիաների համատեղ կիրառմանը, աստիճանաբար անցում է կատարվում լեզվի ուսուցման հարցերի քննությանը: Եթե արտասահ-

մանում լեզվի ուսուցման հարցերի մեջ դիտարկվում են առհասարակ բոլոր լեզուների ուսուցման հարցերը, ապա Հայաստանում լեզվի ուսուցման հարցերը որպես կիրառական լեզվաբանության բնագավառի հարցեր քննելիս դիտարկում են միայն անգլերենը: Երբեմն անդրադարձ էր լինում նաև այլ լեզուների: Ինչ վերաբերում է հայերենը որպես օտար լեզու քննելու հարցին, ապա դրան բոլորովին անդրադարձ չկա: Չկա նաև հստակ մշակված մեթոդաբանություն հայերենի իմացության մակարդակներն առանձնացնելու համար: Ինչպես գիտենք, միջազգային ընդունված ստանդարտի համաձայն լեզուների իմացության երեք ընդհանուր մակարդակ է առանձնացվում՝ A, B, C: Հայերենի իմացության մակարդակներ այս չափանիշներով չեն առանձնացվում: Եթե նույնիսկ պայմանականորեն փորձենք առանձնացնել, ապա փոքր-ինչ սխալ կլինի, քանի որ հայերենի քերականությունը տարբերվում է այլ լեզուների քերականությունից, և անհրաժեշտ է հենց հայերենի քերականությանը, բառապաշարին համապատասխան չափանիշներ մշակել, հստակ որոշել, թե լեզվական իմացության որ մակարդակում ինչ գիտելիք է պետք: Բացի այդ՝ Հայաստանում դեռևս հստակորեն չի գիտակցվում կիրառական լեզվաբանության և այլ ուղղությունների կապը, ինչպես օրինակ՝ հոգեբանության, մարդաբանության, հանրալեզվաբանության ևն:

М. А. Саргсян. Развитие и проблемы прикладной лингвистики в Армении - Первые исследования в области прикладной лингвистики в Армении относятся к началу XXI века. Первоначально они были либо теоретическими, либо информативными. Также происходил постепенный переход к практическим задачам и исследованиям также был достигнут. В этой статье мы рассматриваем проблемы прикладной лингвистики в Армении. Как показали наши исследования, проблемы прикладной лингвистики различны. К ним относятся преподавание языка, изучение армянского языка как иностранного, ограничения в области прикладной лингвистики, связь между прикладной лингвистикой и другими областями и так далее.

Ключевые слова: прикладная лингвистика, междисциплинарные исследования, армянская лингвистика, языковые и информационные технологии, преподавание языка

М. А. Sargsyan. The development and problems of Applied Linguistics in Armenia - The first studies in the field of applied linguistics in Armenia relate to the beginning of the 21st century. Initially they were either theoretical or informative. The gradual transition to practical problems and research was also accomplished. In this article we address the problems of applied linguistics in Armenia. As our studies have shown, the problems of applied linguistics in Armenia are varied. These include language teaching, examining Armenian as a foreign language, the limits of inclusion in the field of applied linguistics, the connection between applied linguistics and other fields, so on.

Key words: Applied Linguistics, Interdisciplinary Studies, Armenian Linguistics, Language and Information Technologies, Language Teaching

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԹՎԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Սուվարյան

*Բանալի բառեր. Տիպաբանություն, հայերեն և գերմանական լեզուներ.
գրական արևելահայերեն, ժամանակակից գերմաներեն, բառագիտական
տիպաբանություն, ձևաբանական տիպաբանություն*

Հայ և գերմանական քերականագիտության մեջ թվականի՝ իբրև առանձին խոսքի մասի վերաբերյալ եղել են տարակարծություններ: Քերականները գրում են թվականի՝ գոյականների, ածականների, ինչպես նաև դերանունների և մակբայների նկատմամբ ընդհանրությունների դրսևորումների մասին: Նմանատիպ նկատառումներից և խոսքի մասերի դասակարգման շարահյուսական հիմունքից ելնելով՝ թվականը հայ քերականագիտության մեջ համարվել է ածականի տեսակ, գործածվել որոշչի գործառույթով՝ արտահայտելով առարկայի քանակային հատկանիշ: Թվականը, սակայն, բառային ընդհանուր իմաստով տարբերվում է և՛ ածականից, և՛ նշված մյուս խոսքի մասերից: Իսկ բառային ընդհանուր իմաստը կարևորվում է խոսքիմասային կարգերը որոշելիս: Թվականը, ի տարբերություն ածականի և առարկաների ոչ կոնկրետ քանակ արտահայտող բառերի, իմաստաբանորեն այլ բնորոշում ունի, այն է՝ ցույց է տալիս կոնկրետ թիվ, թվային կարգ:

Հայ քերականագիտության մեջ լեզվի զարգացման հին և միջին շրջաններում թվականն առանձին խոսքի մաս չի համարվել: Մ. Ասատրյանը գրում է, որ ելնելով խոսքիմասային կարգի բառային ընդհանուր իմաստից, ձևաբանական, շարահյուսական և հատկապես բառակազմական որոշ առանձնահատկություններից՝ թվականը հայ քերականագիտության վերջին շրջանում առանձնացվում է որպես առանձին խոսքի մաս¹:

Գերմաներենի թվականն ի սկզբանե առանձնացվել է որպես առանձին խոսքի մաս, սակայն գերմանական քերականության զարգացման վերջին շրջանում (մասնավորապես 20-րդ դարում) ռուս և գերմանացի

¹ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե. , 2002, էջ 149:

լեզվաբանների (Ա. Մ. Պեշկովսկի, Վ. Գ. Ադմոնի, Լ. Ջյուտերլին, Վ. Յունգ, Օ. Ի. Մոսկալսկայա և ուրիշներ) կողմից արտահայտվում են կարծիքներ, առաջարկներ, թվականի և վերոնշյալ խոսքի մասերի որոշակի ընդհանրությունների մասին: Հաշվի առնելով թվականների բացառիկ առանձնահատկությունները՝ նրանք գտնում են, որ թվականը, այնուամենայնիվ, պետք է առանձին խոսքի մաս համարել:

Ուս գերմանագետ Օ. Ի. Մոսկալսկայան այս կապակցությամբ գրում է, որ լեզվաբաններից ոմանք, նկատի ունենալով թվականների և գոյականների, ածականների ու մակբայների ընդհանրությունները, առաջարկում էին թվականը այլևս չառանձնացնել և համապատասխանաբար ներառել նշված խոսքի մասերի քերականական կարգում: Միաժամանակ ավելացնում է, որ թվականն ունի նաև այնպիսի յուրահատկություններ, որոնք հիմնավորում են նրա առանձին խոսքի մաս լինելու հանգամանքը²:

Գերմանացի լեզվաբան Վ. Յունգը այն տեսակետն է պաշտպանում, որ թվականը էությանը ածական է, գոյական կամ մակբայ: Անորոշ թվականների և անորոշ դերանունների միջև սահմանները սահուն են, ազատ: Լեզվական բազմաթիվ առանձնահատկությունների պատճառով, սակայն, թվականի՝ առանձին խոսքի մաս քննարկումն է կիրառելի, գործնական³:

Այսպիսով, ժամանակակից հայ և գերմանացի լեզվաբաններն ունեն այն տեսակետը, որ թվականի առանձին քերականական կարգ լինելը իրողություն է:

Թվականի իմաստային և խոսքիմասային ամենաբնորոշ հատկանիշը, ինչպես զուգադրվող լեզուներում նշվել է, թվի հասկացությունն է: Այս խոսքի մասի արմատական բառապաշարը չափազանց սահմանափակ է՝ մեկից տասը, հարյուր, հազար, գերմաներենում նաև անորոշ քանակական թվականների փոքրիկ խումբ (viele, wenige, alle – շատերը, քչերը, բոլորը): Թվականի ամենակարևոր առանձնահատկությունը բառակազմական տեսանկյունից բնորոշվում է ուրույն օրինաչափությամբ, որը ոչ մի խոսքի մասի հատուկ չէ: Սահմանափակ քանակությամբ արմատների և խիստ փոքրաթիվ ածանցների միջոցով բուն քանակական թվականները կազմում են միլիոնավոր թվականներ (քանակականից այնուհետև՝ դասական, կոտորակային): Թվականների գրության հարցում զուգադրվող լեզուներում դրսևորվում են առանձնահատկություններ:

Թվականը գլխավորապես գործածվում է գոյականի հետ որոշչի գործառնությով (ինչպես նաև անվանական ստորոգյալի մաս), որոշիչ-ո-

² Տե՛ս Օ. Ի. Москольская, Грамматика немецкого языка, М., 1956, էջ 181:

³ Տե՛ս W. Yung, Grammatik der deutschen Sprache, Leipzig, 1967, էջ 172:

րոշյալ կապակցության մեջ ածականի նման դրվում է ուղիղ, անփոփոխ ձևով, որովհետև ածականը և թվականը բուն խոսքիմասային իմաստով գործածության ժամանակ զուրկ են թեքման ձևերից: Գերմաներենում ածականն ունի հոլովման ուժեղ և թույլ ձևեր: Քանակական թվականները գերմաներենում հիմնականում չեն հոլովվում, բայց կան նաև բացառություններ, որոնց կանոնադրումները ստորև:

Ս. Աբրահամյանի տեսությամբ թվականի յուրահատուկ մենիմաստությունը ամեն մի թվականի պահում է իր խոսքի մասի համակարգում և թույլ չի տալիս այլ խոսքի մասի իմաստ ձեռք բերելու, որը կլիներ փոխանցման հիմքը: Նշված օրինաչափությունից մասնակի փոքրիկ շեղում է մի թվականի փոխանցումը անորոշ դերանվան (հայերենն ունի *մեկ* թվականը, որը վկայում է թվականի և մյուս խոսքի մասերի սահմանների մասին) և *բյուր* («տասը հազար») գրաբարյան թվականի վերածվելը ածականի⁴:

Թվականի հոլովման վերաբերյալ Վ. Համբարձումյանը գրում է, որ թվականները գրաբարում հոլովման առանձին համակարգ չեն կազմում, այլ հոլովվում են գոյականի պես: Այդուհանդերձ, թվականներն ի հայտ են բերում հոլովական ինչ-ինչ տարբերություններ: Գրաբարում հոլովվում են բաղադրյալ թվականների կա՛մ բոլոր բաղադրիչները, կա՛մ միայն վերջին բաղադրիչը⁵:

Ժամանակակից հայերենում թվականը հոլովվում է փոխանվանաբար գործածվելիս: Երկու տարբեր շաղկապներով («և» կամ «ու», «մինչև») կապված թվականներից գերմաներենում հոլովվում է վերջինը՝ *vor zwei und einer halben Stunde* (երկու ու *կես* ժամ առաջ):

Հ. Աճառյանը, ուսումնասիրելով և համեմատելով աշխարհի հարյուրավոր լեզուների քերականական բազմաբնույթ առանձնահատկությունները, առանձնացնում է «աշխարհիս զանազան լեզուների մեջ բացարձակներից դուրս գտնված թվականների» տասնչորս տարատեսակներ⁶:

Ժամանակակից հայերենում և գերմաներենում առանձնացնում են թվականների քանակական, դասական, կոտորակային, բաշխական տեսակները:

Զուգադրվող լեզուներում թվականի տեսակների, կազմության, ձևաբանական արտահայտությունների և շարահյուսական կիրառություն-

⁴ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975, էջ 90:

⁵ Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018, էջ 145, նաև 149:

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Ե., 1952, էջ 272:

ների ոլորտներում ձևավորվում են ընդհանրություններ, ինչպես նաև առանձնահատկություններ:

Թվականը հայոց լեզվի բառապաշարի ամենահին շերտերից է, և ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հայերենի *մեկից տասը* թվականները հնդեվրոպական ծագում ունեն: Հայրյուր բառի ծագումը դեռ անհայտ է, իսկ *հազար*, նաև *քյուր* («տասը հազար»՝ գրաբարում) բառերը փոխառություն են պահլավերենից: Տասնյակների անվանումները ևս կապվում են հնդեվրոպական նախալեզվի ձևերի հետ: Հայերենի արմատական թվականները ներառում են *մեկից տասը, քսան, հարյուր, հազար*, գրաբարում՝ *քյուր*, ինչպես նաև *միլիոն, միլիարդ* բառերը: *Միլիոն*-ը և *միլիարդ*-ը (ֆրանս. ծագում ունեն) փոխառվել են ռուսերենի միջոցով:

Զուգադրվող լեզուներում *մեկից տասը* թվականները պարզ կան արմատական են: Ժամանակակից գերմաներենում արմատական են համարվում նաև *elf* («տասնմեկ») և *zwölf* («տասներկու») թվականները, որոնք պատմականորեն բարդ բառեր են, և տեղի է ունեցել հին վերին գերմաներենի *einlif, zwelif* ձևերի պարզեցում: Այսպիսով, գերմաներենի վերոնշյալ շրջանում արմատական թվականների քանակը հասել է զրոյից տասներկուսի՝ հայերենի արմատական թվականների նկատմամբ ձևավորելով առանձնահատկություն:

Արտահայտած իմաստով և գործառնություններով գերմաներենում քանակական գոյականները (թվի իմաստ արտահայտող գոյականները) հարում են քանակական թվականներին: Նմանատիպ գոյականների թվին են պատկանում՝ ա)միջազգային *միլիոն, միլիարդ, քիլոն* բառերը, որոնք գերմաներենում գոյականներ են՝ *die Million, die Milliard, die Billion*, և համապատասխանաբար ունեն գոյականի ձևաբանական հատկանիշներ: Կարող են հանդես գալ անորոշ-որոշյալ հոդերով, հոգնակի թվով: Օր.՝ *eine (die) Million, eine (der) Million, eine Million Rubel*- մեկ միլիոն, միլիոնը, մեկ միլիոն ռուբլի: Հմնտ. *Die Zahl der Einwohner dieser Stadt stieg von einer Million auf drei Millionen* = Այս քաղաքի բնակիչների թիվը մեկ միլիոնից հասել է երեք միլիոնի, բ) գոյական թվականներ են նաև *հարյուր - das Hundert (des Hunderts, die Hunderte* և *հազար-das Tausend (des Tausends, die Tausende)* բառերը: Հայրյուր և *հազար* թվականները ածանցվում են գոյականներից, գործածվում որպես թվական, առանց ձևափոխությունների և արտահայտում են կոնկրետ թիվ, իբրև գոյական գործածվելիս եզակի թվում հանդես են գալիս որպես չափի միավոր, իսկ հոգնակի թվի ձևերը արտահայտում են անորոշ մեծ քանակություն (մնալով անորոշ թվական):

Ինչպես Ե. Շենդելսն է գրում, նշված մի քանի թվականները քերականական կրկնակի բնույթի են⁷:

Օ. Ի. Մոսկալսկայան գրում է կրկնակի գրության մասին՝ որպես հետևանք գոյականների և թվականների միջև ոչ բավականաչափ հստակ սահմանների: Իբրև գոյական գործածվելիս գրվում է մեծատառով, իբրև թվական՝ փոքրատառով⁸: An der Kundgebung nahmen Tausende und aber Tausende teil = Ցույցին մասնակցեցին հազարավոր մարդիկ: Hunderte von Studenten erfüllten den Saal = Հարյուրավոր ուսանողներ լցրեցին դահլիճը: Am 1. September kommen in die Auditorien der Hochschulen Tausende neue Studenten = Սեպտեմբերի 1-ին հազարավոր նոր ուսանողներ են գալիս բարձրագույն ուսումնական հաստատությունների լսարանները:

Ըստ Մ. Ասատրյանի՝ հայ քերականության մեջ վերոնշյալ *հարյուրավոր*, *հազարավոր*, *միլիոնավոր* բառերը որոշակի կոնկրետ թվեր չեն արտահայտում⁹, ինչպես օրինակ, հետևյալ նախադասություններում. «*Հարյուրավոր* ուսանողներ էին դուրս եկել ցույցի»: «Արդեն *հազարավոր* զինվորներ են զոհվել այս պատերազմում»: «*Միլիոնավոր* մարդիկ տառապում են աղքատության ճիրաններում»: Նշված բառերը չեն կարող ընկալվել իբրև թվական, այլ պետք է համարել ածական: Հայերենի *հարյուր*, *հազար*, *միլիոն* արմատական թվականները ժամանակակից լեզվում գոյականաբար գործածվում են միայն որոշյալ հոդ ստանալու դեպքում: Առանց հոդի նրանք որոշակի թիվ են արտահայտում: Իսկ գերմաներենում նշված թվականները գոյականական գործածություն ունեն, ինչպես նշվել է նաև անորոշ հոդով կիրառելիս:

Այսպիսով, զուգադրվող լեզուներում առանձնահատկություններ են ձևավորվում գոյականից և այլ խոսքի մասերից թվականի փոխանցման, վերածման ժամանակ: Գերմաներենում երևույթը կարելի է պայմանավորել գոյականի քերականական սեռի առկայությամբ, որն արտահայտվում է անորոշ և որոշյալ հոդերով (արտիկլով) (einer, eine, ein – der, die, das): Մյուս կողմից՝ հայերենում ոչ տարբերակված թիվ արտահայտող բառերը թվական չեն համարվում:

Ս. Աբրահամյանի տեսակետից բխում է, որ այլ խոսքի մասերից թվականի վերածման փաստեր ժամանակակից հայերենում չկան և չեն կարող լինել: Հիմնական պատճառն այն է, որ լեզուն դրա կարիքը չի զգում, քանի որ ամեն մի զարգացած լեզվում (տվյալ դեպքում ժամանակակից հա-

⁷ Տե՛ս E. Schendels, Deutsche Grammatik, M., 1984 էջ 239:

⁸ Տե՛ս Օ. Ի. Москольская, նշվ. աշխ., էջ 186:

⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 150:

յերենում) կա հաշվելու որոշակի համակարգ, որը որևէ լրացումների կարիք չունի:

Իսկ լեզուն այնքան «խելացի» է, որ չի անում այն, ինչի կարիքը չի զգացվում¹⁰:

Ածանցավոր են համարվում տասնավորների անվանումները՝ սկսած *երեսուն*-ից մինչև *իննսուն*: Հայերենում «-սուն» մասնիկը սկզբնապես նշանակել է *տասը*, բայց հետագայում, կորցնելով այդ իմաստը, վերածվել է տասնավորներ կազմող ածանցի¹¹: Հայերենում տասնավորից և միավորից (11-99) կազմված բարդությունները կցական, իսկ հարյուրից բարձր բոլոր բարդ թվականները հարադիր բարդություններ են:

Գերմաներենում նույնպես ածանցավոր են համարվում տասնավորների անվանումները, կազմվում են -zig ածանցով՝ սկսած *քսան*-ից մինչև *իննսուն* (zwanzig, dreißig, vierzig, fünfzig neunzig): Հայերենում *քսան*-ը արմատական թվական է, գերմաներենում՝ ածանցավոր, իսկ *տասնմեկ*-ը և *տասներկու*-ը արմատական են՝ ի տարբերություն հայերենի: Բարդությունները ներառում են բարդ և բարդ ածանցավոր բոլոր թվականները՝ *տասներեք*, *երեսունչորս*, *քառասունվեց*, *տասնութ* = dreizehn, vierunddreißig, sechsundvierzig, achtzehn:

Հայերենում տասնմեկից տասնինը և գերմաներենում տասներեքից տասնինը կազմվում են համապատասխան միավորներով և տասը թվականով (13, 14, 15, 16, 17, 18, 19) – կարդացվում են տասներեք, տասնչորս, և այլն: Իսկ գերմաներենում գրվում և կարդացվում է նախ միավորը, ապա տասնավորը. - *dreizehn*, *vierzehn*, երեք ու տաս, չորս ու տաս, իսկ հայերենում տասնավորը գրվում է միավորից առաջ (*տասներեք*, *տասնչորս*):

Ակադեմիկոս Աճառյանը գրում է, որ գրաբարի ընդունած ձևն էր 11-ից մինչև 19-ը՝ միավորը դնել առաջ և տասնավորը հետո – մետասան, երկուտասան, երեքտասան... ութևտասան, ինըևտասան ձևերը, իսկ 21-ից սկսած մինչև 99-ը՝ տասնավորը առաջ և միավորը հետո (*քսանհմի, քսաններկու, երեսուններեք, իննսունհինն* և այլն): Միջին հայերենը ընդհանրացրել, միօրինակացրել է այս երևույթը. տասնյակները գրել է առաջ, միավորները՝ հետո: Նշանավոր լեզվաբանը հաստատում է, որ այս երևույթը չկա պարսկերենում, նաև արաբերենում, ուստի զուտ հայկական է և առաջացած պետք է լինի ընդհանրացման օրենքով՝ 21-99 թվականների կազմության օրինակով¹²:

¹⁰ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 90:

¹¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, Ե., 1965, էջ 158:

¹² Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 248:

Ի տարբերություն հայերենի՝ գերմաներենում տասներեքից տասնինը թվականների կազմության ժամանակ նախ դրվում է միավորը, հետո՝ տասնավորը (dreizehn, vierzehn, siebzehn – երեք տասը, չորս տասը, յոթ տասը): Գերմաներենի թվականը պահպանում է հին շրջանում հին վերին գերմաներենում գործածվող «և» կամ «ու» շաղկապով տասնավորների ու միավորների միացման ձևը, ընդ որում՝ շաղկապը համարվում է բարդության բաղադրիչ: Նման կազմություններ գործածվել են նաև գրաբարում՝ *քսաններկու, երեսունևութ, հիսունևչորս*, - zweiundzwanzig, achtunddreißig, vierundfünfzig: Շաղկապով բարդությունները ժամանակակից հայերենում հնացած և ոչ գործածական ձևեր են՝ երեսունչորս, քառասունհինգ, գործածական են երեսունչորս, քառասունհինգ ձևերը:

Այսպիսով, գերմաներենում տասներեքից տասնինը և քսանմեկից իննսունինը թվականների կազմության մեջ պահպանվել են հին վերին գերմաներեն և հին հայերենում (գրաբարում)՝ միավորի նախադաս և տասնավորի հետադաս, ինչպես նաև միավորի և տասնավորի շաղկապով կապակցման ձևերը: Նշված բառակազմական երևույթները հին շրջանում զուգադրվող լեզուներում համարվում են ընդհանրություններ, իսկ ժամանակակից տիպաբանությամբ՝ առանձնահատկություններ (հին շրջան գրաբար. – երեքտասան – dreizehn, քսաններեք – *dreiundzwanzig*) *ժամանակակից՝ տասներեք - dreizehn, քսաներեք – dreiundzwanzig*):

Բարդ կազմություններում առանձնահատկություններին զուգահեռ ընթանում են նաև համակարգված շարադասություն՝ ըստ բաղադրիչների դիրքի: Հայերենում տասնմեկից տասնինը, քսանմեկից իննսունինը և գերմաներենում տասներեքից տասնինը, քսանմեկից իննսունինը թվականների գրության (տառերով) համար մշակված են միօրինակացված կանոններ՝ հայերենին հատուկ է տասնավորի նախադաս դիրքը, գերմաներենին՝ միավորի:

Քանակական եռանիշ և քառանիշ թվականների գրության մեջ նույնպես առկա են առանձնահատկություններ: Բարդությունները տառերով գրելիս բոլոր բաղադրիչները գրվում են միասին՝ 2564 – zweitausendfünfhundertvierundsechzig, ի տարբերություն հայերենի՝ տասնմեկից իննսունինի: Տարեթվերը նշելիս սովորաբար սկզբից անվանվում է հարյուրների քանակը, ապա հաջորդող երկնիշ թիվը 1965 - neunzehnhundertfünfundsechzig: Հազարից հազար իննսունինը բացառություն են կազմում վերոնշյալից և հազար հիսունը (1050) կարդացվում է tausendfünfzig, հազար ութսունյոթը՝ tausendsiebenundachtzig: Ժամանակը,

տարեթիվը նշելիս das Jahr, im Jahre բառերը սովորաբար չեն գրվում (Schendels)¹³:

Jerewan wurde 782 v.u.e. gegründet (Երևանը հիմնադրվել է մ.թ.ա. 782), Moskau wurde 1147 gegründet - (Մոսկվան հիմնադրվել է 1147): Հոլովվում է բարդության վերջին բաղադրիչը՝ յոթ հարյուր ութսուներկուսին, հազար հարյուր քառասունյոթին: Բացառություն են կազմում eins, zwei, drei միավորները, eins-ը որոշ զործառնություն կիրառվելու դեպքում հոլովվում է անորոշ հոդի նման, հայերենում, ինչպես նշվել է «մի»-ն անորոշ թվական է, գրաբարում հոլովվում է «ո» հոլովիչով: Այսպիսով, հաշվելիս ասվում է՝ eins, zwei, drei – մեկ, երկու, երեք, իսկ երբ (eins) մեկին գոյական է հաջորդում, այն գոյականի հետ համաձայնվում է քերականական սեռով և թեքվում, ինչպես անորոշ հոդը (արտիկլը): Der Zug bestand aus einem Personenwagen und fünf Viehwagen - Գնացքը բաղկացած էր մի մարդատար և հինգ բեռնատար վագոններից: Լրացյալի պահանջով լրացումը ձևավորվում է անորոշ արտիկլի հոլովված ձևի և կապի միջոցով, հայերենում՝ գոյականի հոլովական վերջավորությամբ:

«Ein» անորոշ թվականը քանակական թվականներից միակն է, որ հոլովվում է ամբողջությամբ, ընդ որում, երբ «ein»-ից առաջ չկա արտիկլ (հոդ) կամ դերանուն, հոլովվում է ածականի ուժեղ հոլովմամբ, իսկ արտիկլի (հոդ) կամ դերանվան նախադաս առկայության դեպքում թույլ հոլովմամբ:

«Մի» (Ein) հայերենում, ինչպես նշվել է, անորոշ դերանուն է համարվում, անորոշ հոդի իմաստով է գործածվում, իսկ գերմաներենում անորոշ արտիկլի, անորոշ թվականի և անորոշ դերանվան իմաստ է արտահայտում: «Մի հավք զարկի ես մի օր» (Հովհ. Թումանյան): «Eins»-ը ինքնուրույն գործածության դեպքում անորոշ դերանվան իմաստ է արտահայտում: Eines der drei Gemälde war nach Dänemark verkauft worden (B. Kellermann) - Երեք կտավներից մեկը վաճառվել էր Դանիայում:

Չին գերմաներենում նույնպես քանակական թվականները հոլովվել են և որպես մնացորդներ պահպանվել են zweier, zweien, dreier, dreien ձևերը, որոնք միշտ դուրս են մղվում կապային կառույցներից՝ die Freundschaft zweier Männer (von zwei Männern) - երկու տղամարդկանց ընկերություն, կայուն բառակապակցություններում հանդիպում են քարացած ձևեր՝ auf allen vieren kriechen չորեքթաթ սողալ, die Soldaten marschieren zu sechsen - զինվորները քայլում են վեցով (վեց հոգով):

¹³ Տե՛ս E. Schendels, նշվ. աշխ., էջ 240:

Քանակական թվականները գոյականաբար գործածվելիս պատկանում են իգական սեռին՝ Frau Hardekopf war nun auch schon weit über die Fünfzig... - (W. Bredel): Տիկին Հարդեկոֆը մոտ է վաթսունին (կամ շատ վաղուց է անցել հիսունը):

Քանակական թվականը, ստանալով հոդ, կարող է հանդես գալ որպես փոխանուն և հոլովվել: Հայերենում - ական, -ավոր ածանցներով կազմվում են ածականներ, գերմաներենում քանակական թվականներից «-er» մասնիկով կազմվում են գոյականներ և ածականներ, որոնք կիրառվում են որոշչի գործառնությամբ և չեն թեքվում՝ die Einer, die Zehner, die Hunderter, in den achtziger Jahren des vorigen Jahrhunderts = միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ, անցյալ դարի ութսունական թվականներին:

«Քանակական թվական և անգամ» կապակցությունը զուգադրվող լեզուներում գործածվում է որպես բայի լրացում և արտահայտում ոչ կոնկրետ, անորոշ քանակ, „Du hast mir hundertmal versprochen“ = «Դու ինձ հարյուր անգամ խոստացել ես»:

Գերմաներենում «Eins»-ը բարդության վերջին բաղադրիչ լինելու դեպքում հոլովվում է՝ „Marchen aus tausendundeiner Nacht“ = «Հազար ու մի գիշերվա հեքիաթ»:

Գերմաներենում «je» մասնիկի, (համարժեք է հայերենի -ական ածանցին), քանակական թվականի և գոյականի կապակցությունը արտահայտում է հավասարաչափ բաշխում՝ Er gab den Kindern je zwei Äpfel = Նա երեխաներին տվեց երկուական խնձոր: Մեկ թվականի հետ գոյականը միշտ եզակի թվով է գործածվում: Մի (մեկ) ուսանող, գիրք - ein Student, Buch: Մեկից բարձր թվականների հետ գոյականը հայերենում կարող է գործածվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ «Երկու տարի է չեմ տեսել նրան», «Երկու երկար ու ձիգ տարիներ չեմ տեսել նրան»: Ի տարբերություն հայերենի՝ գերմաներենում, երկուսից սկսած, թվականների հետ գոյականները դրվում են հոգնակի թվով՝ zwei Bücher, drei Studenten (երկու գրքեր, երեք ուսանողներ և այլն):

Գերմաներենում, ի տարբերություն հայերենի, կոնկրետ թիվ ցույց տվող բառերից բացի, չափ ու քանակ ցույց տվող բառերը, անորոշ դերանունները, որոնց սահմանները հստակ չեն, նույնպես հանդես են գալիս իբրև թվականներ կամ հակառակը՝ թվականը՝ անորոշ դերանուն՝ einer, ander, einige, alle, viele, wenige = մեկը, ուրիշ, մի քանիսը, բոլորը, շատերը, ոմանք, քչերը:

Sie haben mich gequälet, / Geärgert blau und bloß, / Die einen mit ihrer Liebe, / Die anderen mit ihrem Haß (Heine Lyrisches Intermezzo) = Նրանք

ինձ տանջել են, / Ձայրացրել, / Համբերությունից հանել, / Ոմանք իրենց սիրով, / Ուրիշները... ատելությամբ: *Einer* անորոշ թվականը հանդես է եկել անորոշ (*ոմանք*) դերանվան իմաստով:

Դասական թվականները, զուգադրվող լեզուներում կազմվելով համապատասխան ածանցներով, դրսևորում են արտաքին ընդհանրություններ, միաժամանակ նաև ներքին առանձնահատկություններ՝ ածանցների կիրառությամբ պայմանավորված:

Հայերենում հանդիպում են երկուսից չորսը՝ *-որդ*, և հինգից սկսած *-երորդ*, գերմաներենում՝ երկուսից տասնինը և առաջին ու քսանից սկսած *-t(e)* և *-st(e)* վերջածանցներով՝ *der zweite, der zehnte Student, der erste, zwanzigste, hundertste, Millionste* teil - երկրորդ, տասներորդ ուսանողը, (առաջին), քսաներորդ, հարյուրերորդ, միլիոներորդ մասը:

Գործառնություն և կազմությամբ դասական թվականները, ինչպես գրում է Վ. Յունգը, համապատասխանում են ածականի գերադրական աստիճանին: *Erst - der früheste*, ամենավաղ¹⁴:

Ըստ Շենդելսի՝ „*Erster*“ (առաջինը) հին „*er*“ արմատի գերադրական աստիճանն է, «*er*» –ը նշանակում է «վաղ», *der erste - der früheste* ամենավաղ¹⁵: Հայերենում *մեկ* թվականից դասական չի կազմվում, գործածվում է *առաջին* բառը, բայց երբ այն բարդության վերջին բաղադրիչ է հանդես գալիս, դասական ձևը կազմվում է՝ *քսանմեկերորդ, հարյուրմեկերորդ*:

Գերմաներենում դասական թվականները հոլովվում են ածականների նման, նախադասության մեջ գործածվում են հիմնականում իբրև որոշիչ (ինչպես նաև բայի լրացում), սովորաբար գործածվում են որոշյալ արտիկլով (հոդով): *der 1. September* (կարդում ենք) *der erste September. den 1. September* (կարդում ենք) *den ersten September*

Ամսաթվերը նշելիս օգտագործում են դասական թվականների ուղղական կամ հայցական հոլովածները, հայերենում՝ միայն հայցականի ձևը: Թվականի մոտ դրվող կետը նշում է թվի դասական արտահայտությունը գերմաներենում՝ *den 1. Mai, den 8. März*: Հայերենում *Մայիսի մեկին, Մարտի ութին* քանակական թվականը գործածվում է գոյականաբար, դրվում է հայցական հոլովով:

Զուգադրվող լեզուներում քանակական թվականը գոյականին հաջորդելու դեպքում կետ չի դրվում, և քանակական թվականն արտահայ-

¹⁴ Տե՛ս Վ. Յունգ, նշվ. աշխ., էջ 362:

¹⁵ Տե՛ս E. Schendels, նշվ. աշխ., էջ 240:

տում է դասականի իմաստում՝ Kapitel 5, Band 2, hausnummer 6, Zimmer 3 (funf, zwei, sechs, drei) = գլուխ 5, հատոր 2, բնակարան 6, սենյակ 3 և այլն:

Եթե անձնանվանը (տիրակալների) հաջորդում է հռոմեական թվանշան, որից հետո դրվում է կետ, այն կարդացվում է որպես դասական թվական՝ որոշյալ արտիկլով՝ Peter I. = Peter der Erste, Heinrich IV. = Heinrich der Vierte, Katharina II. = Katharina die Zweite = *Պետրոս Առաջին, Հենրիխ Չորրորդ, Եկատերինա Երկրորդ* և այլն: Հայերենում հռոմեական թվանշաններից հետո կետ չի դրվում՝ *Արշակ II, Տրդատ III* կամ *Արշակ Բ, Տրդատ Գ*: Բաղադրյալ դասական թվականների միայն վերջին բաղադրիչն է հոլովվում՝ *des einunddreißigsten* Dezember = դեկտեմբերի *երեսունմեկին*: Գերմաներենում վերջին բաղադրիչը տասնավորն է, հայերենում՝ միավորը:

Կոտորակային թվականները, ինչպես գրում են լեզվաբաններ Վ. Յունգը¹⁶ և Մ. Մոսկալսկայան, կազմվում են դասական թվականների հիմքից: Հայերենում հաճախ հայտարար դասական թվականներին ավելանում է *-ական* մասնիկը և կազմվում են կոտորակային՝ *մեկ տասնորդական, երկու երրորդական* ձևերը: Գերմաներենում, պարզվում է, կոտորակային թվականները կազմվում են ընդհանրապես *-tel* ածանցով. երկուսից տասնինը՝ *fünfte*, *zehn*: *tel*: „-tel“ և „-stel“ ածանցների մասին Մոսկալսկայան¹⁷ գրում է, որ առաջացել են „Teil“ (մաս) գոյականից դեռևս միջին վերին գերմաներենում՝ *drittel*, *viertel* = *der dritte Teil*, *der vierte Teil* - երրորդ մասը, չորրորդ մասը: Իսկ „-tel“ ածանցի „-stel“ տարբերակը ձևավորվել է դասականի „-st“ և „-tel“ կոտորակային ածանցի միաձուլման արդյունքում՝ *hundertst-tel* - *hundert-stel*:

Քանի որ կոտորակային թվականները ծագումով գոյականներ են, կարող են գործածվել և՛ որպես գոյական, և՛ որպես ածական՝ *ein Achtel*, *ein achtel Zentner*, *auf einer sechstel der Erde* = մեկ *ութերորդ* (գոյական), մեկ *ութերորդ* ցեխներ (ածական) երկրագնդի մեկ *վեցերորդում* (գոյական), չորս *հինգերորդ* տոննա (ածական), մեկ *երկրորդ* մասը, բերքի մեկ *քառորդը* (գոյական):

Այսպիսով, վերը թվարկված թվականները (քանակական, դասական, կոտորակային և այլն) առանց ուղեկցող բառի գործածվում են գոյականաբար, իսկ մաս, բաժին բառերի, չափի միավորների հետ՝ ածականաբար: Իբրև գոյական գործածվելիս թվականը գրվում է մեծատառով՝ պայմանավորված գերմաներենի գոյականի ձևաբանական յուրահատկություններով: Կոտորակային մեկ երկրորդ թվականը արտահայտվում է նաև «կես», „halb“, „das Halbe“ գոյականներով: Թվականները գոյականա-

¹⁶ Տե՛ս Վ. Յունգ, նշվ. աշխ., էջ 363:

¹⁷ Տե՛ս Օ. Ի. Москольская, նշվ. աշխ., էջ 187:

բար գործածվելիս հոլովվում են ինչպես գոյականը՝ ein Drittel – eines Drittels, das Drittel – des Drittels: Ջուզադովող լեզուներում թվականների կազմության և գործածության ուսումնասիրությունը բացահայտում է հին շրջանից պահպանված ընդհանրություններ, որոնք, յուրաքանչյուր լեզվի զարգացումներով պայմանավորված, տարբեր ձևով են դրսևորվում:

А. С. Суварян.-Лексическая и морфологическая типология числительного в современном литературном восточноармянском и немецком.-В статье рассмотрена задача сохранения и изучения числительного как отдельной части речи в армянском и немецком языкознании. Исследуются и сопоставляются как разряды, этимология, словообразование, так и вопросы, касающиеся орфографии и орфоэпии числительных. Производится типологическое исследование формирующихся особенностей сохранившихся общностей в древнеармянском и древневерхненемецком, среднеармянском и средневерхненемецком, и в новом времени; выявляются изменения и достижения сопоставляющихся языков на разных этапах развития.

Ключевые слова: *типология, армянский и немецкий языки, литературный восточноармянский, современный немецкий, лексическая типология, морфологическая типология*

A. S. Suvaryan, Lexical and morphological typology of the numeral in modern literary Eastern Armenian and German.- The article considers the problem of preservation and study of the numeral as a separate part of speech in Armenian and German linguistics. The classification, etymology, word formation, as well as questions relating to writing and spelling of numerals are examined and compared. A typological analysis of commonalities maintained from Classical Armenian and Old Upper German, Middle Armenian and Middle Upper German and also of features emerging in modern times is made, changes and achievements at different development stages of comparable languages are revealed.

Key words: *Typology, Armenian and German Languages, literary Eastern Armenian, modern German, lexical typology, morphological typology*

ԲԱՆԱԿԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS.

ՀՆԶՈՒՅԹԻ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՀՆԶՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. Զ. Պետրոսյան
vz.petrosyan@ysu.am

Բանալի բառեր – Պրագայի հնչոյթաբանական դպրոց, Մոսկվայի հնչոյթաբանական դպրոց, Ն. Ս. Տրուբեցկոյ, Ա. Ա. Ռեֆորմատսկի, հնչոյթ, հնչոյթի կամընտրական տարբերակ, հնչոյթի տարատեսակ, այլահնչակ, ազատ փոփոխակում, լրացուցիչ բաշխում

Հնչոյթաբանությունը եղել է 20-րդ դ. տեսական լեզվաբանության բուռն զարգացող բնագավառներից մեկը, որով էլ պետք է բացատրել հնչոյթաբանական բազմաթիվ տեսությունների առաջացումը: Օրինաչափ է, երբ հայեցակարգային տարբերություններով հատկանշվող տեսությունները (օր.՝ ծայնաբանական արտաբերական, գործառական, բաշխական, երկատումային, երկաստիճան և այլն) սկզբունքորեն տարբեր կերպ են մեկնաբանում հնչոյթաբանության առանցքային իրողությունները, ինչպիսիք են հնչոյթը, հնչոյթի և նրա կիրառական տարբերակների (հնչյուն, այլահնչակ, հնչակ և այլն) հարաբերակցությունը, հնչոյթաբանական և հնչյունաբանական գիտակարգերի առնչությունը և այլն: Սակայն ուշագրավ է, որ վերոհիշյալ երևույթների վերաբերյալ էականորեն տարբեր պատկերացումներ են արտահայտվել նաև հիմնական միավորի՝ հնչոյթի բնորոշման հարցում ելակետային ընդհանրությամբ հատկանշվող հնչոյթաբանական տեսություններում, ինչպիսիք են Պրահայի և Մոսկվայի գործառական հնչոյթաբանությունները:

Նշված հնչոյթաբանական դպրոցների հայեցակարգերում հնչոյթի մեկնաբանության յուրահատկությունները բացահայտելու համար հիմք ենք ընդունել Ն. Ս. Տրուբեցկոյի «Հնչոյթաբանության հիմունքները»՝ որպես Պրահայի գործառական հնչոյթաբանության առավել բնութագրական և հիմնարար աշխատություն, և Ա. Ա. Ռեֆորմատսկու հնչոյ-

թաբանական նկատառումներն ըստ նրա «Լեզվաբանության ներածություն» աշխատության, որում առավել արմատական ձևով են արտահայտվել մոսկովյան դպրոցի հնչյութաբանական հայեցակարգի հիմնական դրույթները: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ նույնիսկ առանցքային իրողությունների վերաբերյալ միմյանցից զգալիորեն տարբեր են նաև այդ դպրոցներից յուրաքանչյուրի ներկայացուցիչների պատկերացումները, որոնց ստորև անդրադառնում ենք ըստ անհրաժեշտության:

«Պրահացիները» հնչույթը բնորոշում են որպես՝ ա) լեզվի հնչունական համակարգի հիմնական հնչյութաբանական միավոր, բ) «հնչութաբանական հակադրության» նվազագույն անդամ, որը «հնարավոր չէ տրոհել մեկը մյուսին հաջորդող ավելի փոքր հնչյութաբանական միավորների», գ) «հնչյութաբանորեն էական հատկանիշների ամբողջություն» կամ «փունջ», դ) ձևայինների և բառերի կազմում իմաստատարերակիչ գործառնություն իրականացնող միավոր, ե) վերացարկված միավոր, որն իրացվում է իր խոսքային տարբերակների միջոցով:

Այս բնութագրերից (դրանք ձևակերպումների մասնակի տարբերություններով հանդիպում են ՊՀԴ-ի ներկայացուցիչներից շատերի մոտ¹) մասնակիորեն շեղվող կարծիքներ են հայտնել Լ. Նովակը և Բ. Տրնկան: Լ. Նովակը նույնպես, հնչյութները բնորոշելով որպես «նվազագույն բաղադրիչներ, որոնք չեն կարող ենթարկվել հետագա տրոհման, և որոնք առանձնացվում են տվյալ լեզվի բոլոր ներքին գործառնությունների փոխադարձ հատման շնորհիվ՝ պրոյեկտված այդ նույն լեզվի ձևի վրա», հնչյութային բնութագրից դուրս է թողնում «հնչյութաբանական հակադրությունների» գաղափարը, որովհետև, հիմնվելով լեզվական հակադրությունների մասին սոսյուրյան կանխադրույթի վրա (հմմտ. «... լեզվում կան միայն տարբերություններ»²), կարծում է, որ հակադրությունները բնորոշ են առհասարակ լեզվի ներքին կառուցվածքին և ոչ թե միայն հնչյութաբանությանը³: Լ. Նովակն իր սահմանումը համարել է «ամբողջությամբ լեզվաբանական»՝ ի տարբերություն ինչպես «Պրահայի լեզվաբանական խմբակի» իր գործընկերների, այնպես էլ ուրիշների կողմից հնչյութին տրված բնորոշումների, որոնք, նրա կարծիքով, պարունակում են ոչ լեզվաբանական տարրեր⁴:

¹ St' u Ĭ. Вахек, Лингвистический словарь пражской школы, М., 1964, էջ 230-234: Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 2000, էջ 39-44:

² Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2008, էջ 184:

³ Л. Новак, Проект нового определения фонемы // «Пражский лингвистический кружок», М., 1966, էջ 97:

⁴ Նույն տեղում:

Ըստ Բ. Տրնկայի՝ հնչույթը չի կարող բառային հակադրության նվազագույն անդամ համարվել, որովհետև այն նվազագույն միավոր չէ, այլ բաղկացած է տարբերակիչ հատկանիշներից: Հետևաբար բառերի կազմում միմյանց հակադրվում են տարբերակիչ հատկանիշները, ոչ թե հնչույթները (հմմտ. «Վճռականորեն պետք է առարկել Տրուբեցկոյին (հնչույթի բնորոշման առնչությամբ), որովհետև հնչույթաբանական հիմնական բաղադրիչները ռելևանտ (տարբերակիչ) հատկանիշներն են, որոնց տրոհվում են հնչույթները, և որոնք երբեմն կարող են տարբերակել բառերը, ոչ թե հնչույթները, որոնք իրենցից ներկայացնում են այդ հատկությունների համակցություններից կազմավորված հանրագումարային ամբողջ ...»⁵):

Հնչույթը բնորոշող վերոհիշյալ հատկանիշներն ընդհանուր առմամբ առկա են նաև ՄՀԴ-ի ներկայացուցիչների մոտ: Այսպես, Ա. Ռեֆորմատսկին հնչույթներ է համարում «լեզվի հնչյունական կառույցի նվազագույն միավորները, [որոնք] ծառայում են լեզվի իմաստակիր միավորների՝ ձևույթների, բառերի կազմավորմանը և տարբերակմանը»⁶: Մ. Վ. Պանովը, ըստ էության, կրկնելով Ա. Ռեֆորմատսկուն (հմմտ. «Հնչույթը նվազագույն հնչյունաբանական միավոր է, որը ծառայում է լեզվի իմաստակիր միավորների (ձևույթների և բառերի) տարբերակման և նույնականացման համար»⁷), ի վերջո հնչույթը սահմանում է որպես «ըստ դիրքի հերթագայվող հնչյունների շարքով ներկայացված գործառական հնչյունաբանական միավոր»⁸: Այս բնորոշումը ևս սկզբունքորեն չի հակասում նախորդներին: Ավելին՝ նախորդների հետ նույն տրամաբանության մեջ է՝ մի տարբերությամբ, որ հնչույթը դիտարկվում է հարացույցի մեջ իր տարբերակների հետ գործառական կապի տեսանկյունից:

«Մոսկվացիների» պատկերացումները, սակայն, նույնական չեն հնչույթի բնութագրական հատկանիշներից մեկի՝ նրա իմաստազատիչ գործառույթի առումով: Եթե, օրինակ, ձևույթների և բառերի կազմում հնչույթների տարբերակիչ հակադրություններ ձևավորելու գործառույթը Ա. Ռեֆորմատսկին վերագրում է նրանց իմաստային կողմին (հմմտ. «...լեզվի իմաստակիր միավորների կազմավորման և տարբերակման համար հնչույթները լեզվի համակարգում պիտի հակադրվեն մեկը մյուս-

⁵ Ст'ю «Основные направления структурализма», М., 1964, էջ 64:

⁶ А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, էջ 211:

⁷ М. В. Панов, Современный русский язык. Фонетика, М., 1979, էջ 94:

⁸ Նույն տեղում, էջ 106:

սին»⁹, ինչպես՝ *скот* «անասուն, տավար» - *кот* «կատու» (с~ø), *волот* [во́лот] «խուլ անտառամիջի սայլուղի» - *волк* «գայլ (о~ø)», *ѣдор* «*հնգծ*. հագուստ, հանդերձ» - *дор* I. «փշատերև անտառ» (у~ø), *пар* «գույզ» - *пар* «գոլորշի» (ո~ø) ևն), ապա, ըստ Ռ. Ավանեսովի, այն վերաբերում է «բառածների հնչյունական պատյանների տարբերակմանը»¹⁰: Այսպիսի ձևակերպումով Ռ. Ավանեսովը հարում է հնչույթի ըմբռնմանը ըստ Լ. Շչերբայի¹¹ և առհասարակ՝ ըստ «լենինգրադցիների»՝ այդպիսով *մոսկովյան հնչույթաբանական հայեցակարգի* դիրքերից ընդառաջ քայլ անելով դեպի «լենինգրադյանը»¹²:

Չնայած որ Ա. Ռեֆորմատսկին նույնպես հնչույթը համարում է այլևս անտրոհելի բաղադրիչ, բայց և այնպես նրա կարծիքով հնչույթը «... ոչ թե պարզագույն, այլ բարդ երևույթ է, որովհետև կազմված է հնչույթից դուրս ինքնուրույնաբար գոյություն չունեցող, բայց հնչույթի միասնության մեջ միաժամանակ համագոյակցող հատկանիշների շարքից»¹³: Այս բնորոշումով ևս Ա. Ռեֆորմատսկին միանում է այն «պրահացիներին» (Ն. Տրուբեցկոյ, Յ. Վահեկ և ուրիշներ), որոնք լեզվական կառույցի նվազագույն միավոր էին համարում հնչույթը, այլ ոչ թե հնչույթաբանական հատկանիշը: Եվ իսկապես, լեզվում՝ որպես կառուցվածքի բաղադրիչ, իրական կերպով գոյություն ունի հնչույթը, բայց ոչ՝ հնչույթաբանական հատկանիշը, որովհետև իբրև միավոր՝ հնչույթը առկա է ոչ միայն ձևույթի և բառի կազմում, որոնց բաղադրմանը և տարբերակմանը նա մասնակցում է, այլև դրանցից դուրս՝ առանձնաբար՝ 1) իբրև որևէ լեզվի հնչույթային համակարգի բաղադրիչ, 2) իբրև միահնչույթ ձևույթի կամ միահնչույթ բառի հնչյունական պատյան (հմմտ. հայ.-ի *ապր-ի*. ըղծ. ապառնի, եզ. թ., 3-րդ դ., սահմ. եղ. ցուցիչ, կամ ի արտաքին հոլովման ցուցիչ՝ *գրք-ի*, *պատ-ի*. ռուս. -а. եզ. անվն. հոլ. և քեր. սեռի ցուցիչ՝ իգական (книг/-а, рык/-а), եզ. սեռ. հոլ. ցուցիչ (стол/-а «սեղանի»)). -հիմն. ձևույթ՝ «էակ» նշանակությամբ, օր.՝ *մանրէ* բառի կազմում. բառ՝ «է՛» - որպես կոչական ձայնարկություն), մի բան, որը չի կարելի ասել հնչույթների

⁹ А. А. Реформатский, նշվ. աշխ., էջ 211:

¹⁰ Р. И. Аванесов, Фонетика современного русского литературного языка, М., 1956, էջ 21:

¹¹ Հմմտ. «... կենդանի խոսքում արտաբերվում է բազմազան հնչյունների զգալիորեն ավելի մեծ քանակություն, քան սովորաբար մենք դա կարծում ենք, որոնք տվյալ լեզվում միավորվում են համեմատաբար ոչ մեծ թվով հնչյունական տիպերի մեջ՝ ունակ տարբերակելու բառերն ու նրանց ձևերը» (Л. В. Щерба, Фонетика французского языка, М., 1953, էջ 19. ընդգծումը՝ Վ. Պ.): Ավելի ուշ հնչույթի այդպիսի ըմբռնում արտահայտել են նաև ուրիշները (հմմտ. Ю. С. Степанов, Основы общего языкознания, М., 1975, էջ 76):

¹² См. у А. А. Реформатский, Из истории отечественной фонологии, М., 1970, էջ 82-86:

¹³ А. А. Реформатский, Введение, էջ 212:

տարբերակիչ հատկանիշների մասին: Հնչույթների տարբերակիչ հատկանիշները գոյություն ունեն հարացուցության մեջ, ուր և նրանք կարող են հերթագայվել, բայց ինքնին գոյություն չունեն շարակարգության մեջ, օր.՝ ձևույթի կամ բառի կազմում¹⁴: Շարակարգության մեջ կան միայն հնչույթները՝ որպես կառուցվածքային ամբողջություն, հետևաբար հակադրություն են կազմում հենց հնչույթները, այլ ոչ թե նրանց տարբերակիչ հատկանիշները:

Գործառական հնչույթաբանության երկու դպրոցներն էլ հնչույթի և նրա որոշակի՝ ֆիզիկական, նյութական ներկայացուցչի հարաբերակցությունը դիտում են ըստ լեզվական և խոսքային պլանների՝ հնչույթը վերագրելով լեզվին, իսկ նրա ֆիզիկական ներկայացուցիչը՝ հնչյունը կամ այլափոխակը՝ խոսքին: Ընդ որում, Ն. Տրուբեցկոյը այդ հանգամանքը հատուկ շեշտում է՝ ի տարբերություն ինչպես Պրահայի դպրոցի իր գործընկերների, այնպես էլ ՄՀԴ-ի ներկայացուցիչների: Եվ դա ամփոփ է տվել Ն. Տրուբեցկոյին քննադատելու այն բանի համար, որ նա իբրև թե առաջադրել է հնչույթաբանությունը և հնչյունաբանությունը խստորեն տարանջատելու տեսակետը, բայց իր հնչույթաբանական դատողությունները կառուցել է հնչյունաբանական նյութի վրա¹⁵: Իրականում Ն. Տրուբեցկոյը արտահայտվել է ոչ թե հոգուտ հնչյունաբանության և հնչույթաբանության կապի խզման, այլ այդ երկու գիտակարգերի ուսումնասիրության ոլորտների հստակեցման, որովհետև նման մոտեցումը կնպաստի այդ գիտակարգերի ավելի խոր ուսումնասիրությանը: Ավելին, նա ընդունել է ոչ միայն հնչույթաբանության և հնչյունաբանության «որոշակի կապի» «անխուսափելիության», այլև «անպայմանորեն անհրաժեշտության» փաստը¹⁶:

Ըստ ՊՀՏ-ի և մասնավորապես Ն. Տրուբեցկոյի «Հիմունքների»՝ հնչույթը վերացական միավոր է, որը գոյություն ունի իր խոսքային իրացումների՝ սուբստրատների տեսքով: Հնչույթի խոսքային իրացումները նրա հնչարտաբերական դրսևորումներն են՝ որպես հնչաշղթայով պայմանավորված իրակություններ: Դրանց Ն. Տրուբեցկոյը տալիս է «հնչույթի տարբերակներ (կամ հնչյունական տարբերակներ)» անվանումը¹⁷: Թեպետև խոսքում արտաբերվող հնչյունները որոշակի հնչույթի ներկայա-

¹⁴ Օրինակ՝ թույլ չեզոքացման դիրքում ռուսերենի [д]-ի ծայնեղության հատկանիշը փոխարինվում է խլության հատկանիշով՝ հնչյունաբանորեն տալով [т], որին Ն. Տրուբեցկոյը տալիս է *архифонема՝ գերհնչույթ* անվանումը և նշանակում է [Т]-ով. հմմտ. *прод* [прот] «(արհեստական) լճակ»՝ *прот* [прот]-ի հետ «ձիպոտ» հակադրության մեջ:

¹⁵ См. у Общее языкознание. под общ. ред. А.Е. Супруна, Минск, 1983, էջ 294-295:

¹⁶ Н. С. Трубецкой, նշվ. աշխ., էջ 22:

¹⁷ См. у նույն տեղում, էջ 44:

ցուցիչներն են՝ «հնչույթի նյութական խորհրդանիշները»¹⁸, դրանք, այնուամենայնիվ, չի կարելի նույնացնել հնչույթի հետ, որովհետև, ի տարբերություն հնչույթի, որի «բովանդակության պլանը»¹⁹ ներառում է միայն հնչույթաբանական հատկանիշներ, հնչույթի խոսքային՝ «հնչյունական տարբերակի» «բովանդակության պլանը», հնչույթաբանական հատկանիշներից բացի, ներառում է նաև ոչ հնչույթաբանական հատկանիշներ, որոնք տվյալ լեզվում տարբերակիչ գործառնություն չունեն: Օր.՝ բաղաձայնների քմայնացումը, որը ռուսերենում ունի հնչույթաբանական արժեք, որովհետև *հետևաքմայնացում~ քմայնացում* հակադրությամբ այդ լեզվում տարբերակվում են բառային իմաստներ (հմմտ. *ком* «խաղաշրջանակ» - *комь* «նժույգ», *мат* [mat] «I. շխմտ. մատը, II. մայր հայիոյելը» - *мать* [mat'] «մայր», *лук* [luk] «սոխ» - *люк* [l'uk] «1. դռնակ (ներս թափանցելու համար), 2. դիտանցք» ևն), հայերենում ունի միայն հնչյունաբանական արժեք, այն է՝ չունի տարբերակիչ նշանակություն: Հետևաբար, հնչույթի տարբերակի «բովանդակության պլանը» ավելի լայն է. այն ներառում է և՛ հնչույթաբանական (տարբերակիչ), և՛ ոչ հնչույթաբանական (ոչ տարբերակիչ) հատկանիշներ: Ուստի, «ինչպես հնչույթաբանորեն էական, այնպես էլ ոչ էական հատկանիշների ամբողջությունը», որի միջոցով իրացվում է հնչույթը, Ն. Տրուբեցկոյը համարում է և՛ «լեզվի հնչյուն», և՛ «խոսքի հնչյուն»²⁰. այնպիսի հնչյուն, որը բովանդակում է միաժամանակ թե՛ լեզվական և թե՛ խոսքային պլանին բնորոշ հատկանիշներ:

«Մոսկվացիները» նույնպես որևէ լեզվի հնչույթների բովանդակություն են համարում նրանց կազմում եղած իմաստատարբերակիչ հատկանիշների ամբողջությունը, «որի շնորհիվ տարբեր լեզուների հնչյունները՝ որպես հնչույթներ, տարբեր են»²¹:

Ասվածից պարզ է դառնում, որ հնչույթի հասկացական կողմի քննությունը անխուսափելիորեն ներառում է նաև նրա կիրառական տարբերակների, հետևաբար նաև այն *դիրքերի* քննությունը, որոնցում հանդիպում են այդ տարբերակները: Եթե նկատի չունենանք հնչույթի «անհա-

¹⁸ Նույն տեղում, էջ 43:

¹⁹ Հնչույթի «բովանդակության պլանը» ասելով մենք նկատի ունենք նրա ներքին կառուցվածքը՝ որպես հնչույթաբանական հատկանիշների գումար: Այլապես, հնչույթը միակողմանի միավոր է կամ առնվազն նրան հնարավոր չէ վերագրել բովանդակություն կամ իմաստային նշանակություն, որ գործածվում է, օրինակ, ձևայինների և բառերի համար: Բայց կան լեզվաբաններ, որոնք հնչույթին վերագրում են բովանդակային կողմ այդպիսին համարելով նրա տեղեկատվական գործառնությունը հնչաշղթայում (տե՛ս *М. Ф. Березин, Б. Н. Головин, Общее языкознание, М., 1979, էջ 130-133*):

²⁰ *St' u Н. С. Трубецкой, նշվ. աշխ., էջ 43:*

²¹ *А. А. Реформатский, Введение в языковедение, էջ 212:*

տական», «ոճական», «ոճականորեն ռելևանտ (= էական)» տարբերակները՝ որպես հնչույթաբանական տեսանկյունից ոչ կարևոր դրսևորումներ, ապա «պրահացիները» առանձնացնում են հնչույթի *հիմնական* և *երկրորդական*, *համակցային* (комбинаторный) և *կամընտրական* (факкультативный) տարբերակներ: ՄՀԴ-ի ներկայացուցիչները հնչույթների խոսքային դրսևորումներն առանձնացնում են միաժամանակ երկու տիպի չափորոշիչների կիրառումով՝ ըստ *ուժեղ* և *թույլ դիրքերի* և ըստ այդ դիրքերում նրանց երկու կարգի գործառույթների՝ *ընկալողական* (перцептивный) և *նշանակային* (сигнификативный): Նշանակայնորեն ուժեղ և թույլ դիրքերում հանդես եկող հնչույթների խոսքային իրացումները, ըստ «մոսկվացիների», հնչույթների *տարբերակներն* են (варианты), իսկ ընկալողականորեն ուժեղ և թույլ դիրքերում հանդես եկողները՝ *տարատեսակները* (вариации): Հնչույթի բոլոր հնարավոր կիրառական դրսևորումները նրա *այլահնչակներն են* (аглофоны)²²: Հնչույթների *տարբերակները* պատկանում են երկու կամ ավելի հնչույթների հակադրությանը, որը կարող է իրացվել նշանակայնորեն ուժեղ դիրքում (հմմտ. ռուս. д-ն՝ давить [давит'] «ճնշել, սեղմել» բառի կազմում) և, ընդհակառակն, չեզոքացվել նշանակայնորեն թույլ դիրքում (հմմտ. д-ն՝ год [гoд] «տարի» բառի կազմում), իսկ *տարատեսակները* պատկանում են միևնույն հնչույթին, «նրանք չեն շոշափում իմաստը և սովորաբար չեն նկատվում խոսողների կողմից» (հմմտ. т-ն՝ том [тoм] «հատոր», д-ն՝ дом [дoм] «տուն» բառի կազմում)²³:

Պրահայի և Մոսկվայի հնչույթաբանական տեսություններում հնչույթի հասկացական արժեքայնության մասին ընդհանուր պատկերացում կարող է տալ, օրինակ, ռուսերենի պայթական [р] և շփական [չ] հնչյունների հնչույթային հարաբերակցության քննությունը: Ինչպես «պրահացիների», այնպես էլ «մոսկվացիների» գնահատմամբ դրանք <Г> հնչույթի տարբերակներն են, բայց ՊՀՏ-ի մեջ [р]-ն և [չ]-ն համարվում են «հնչույթի կամընտրական տարբերակներ» (հմմտ. «Եթե այս կամ այն լեզվում երկու հնչյուն հանդիպում են միևնույն դիրքում և կարող են փոխարինել մեկը մյուսին, այդ դեպքում չփոխելով բառի իմաստը, ապա այդպիսի հնչյունները համարվում են մեկ հնչույթի կամընտրական տարբերակներ»²⁴), իսկ ՄՀՏ-ի մեջ՝ հնչույթի *տարատեսակներ* (հմմտ. «Տարատեսակները չեն շոշափում իմաստը դրանք «նույնի» անմեղ նրբերանգ-

²² М. В. Панов, նշվ. աշխ., էջ 118:

²³ Ст'ю А. А. Реформатский, նշվ. աշխ., էջ 216:

²⁴ Н. С. Трубецкой, նշվ. աշխ., էջ 51:

ներն են »)²⁵: Երկու տեսություններն էլ նկատի ունեն հետևյալ կարգի օրինակները. հմմտ. город [(r/γ)opъt], господа [(r/γ)ospъd'j], богатый [бл(r/γ)atj], бóга [бo(r/γ)л], иногда [йнл(r/γ)да], когда [кл(r/γ)да] և այլն: Իրականում, այստեղ մենք գործ ունենք ոչ թե նույն երևույթի տարբեր տերմինային նշանակման հետ, այլ հնչույթաբանական գնահատման տեսանկյունից բոլորովին էլ ոչ միանշանակ իրողության հետ: Ըստ «մոսկվացիների» [r]-ն և [γ]-ն ռուսերենի <Г> հնչույթի, համապատասխանաբար, հիմնական և ոչ հիմնական տարբերակներն են, ինչպիսին որ[н]-ի և [ь]-ի հարաբերակցությունն է՝ որպես <И> հնչույթի դիրքային տարբերակներ²⁶: Ավելի որոշակի՝ Մ<S-ի համաձայն [γ]-ն <Г> հնչույթի նշանակայնորեն ուժեղ, իսկ ընկալողականորեն թույլ տարատեսակն է²⁷, որը նշանակում է, որ որակական առումով [γ]-ի և [r]-ի հարաբերակցությունը հավասարեցված է, օր., гора [гpa] «լեռ», горе [горэ] «վիշտ», гнуть [гнут'] «ձկել, կեռել», гигант [г'игант] «հսկա, աժդահա», բառերի կազմում հանդիպող սովորական [r], շրթնայնացած [r°], ռնգայնացած [r], քմայնացած [r'] արտաբերություններին, որոնք կարելի է նշանակել g₁, g₂, g₃, g₄-ով՝ իբրև <G> հնչույթի տարատեսակներ: Սակայն բանն այն է, որ եթե [н]-ն և [ь]-ն գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ, որովհետև չեն կարող հանդես գալ նույն դիրքում, ապա [r]-ն և [γ]-ն այդպիսի հարաբերության մեջ չեն գտնվում. նրանք, ընդհակառակն, հանդես են գալիս միևնույն դիրքում, որը բնորոշ է հակադրական բաշխման մեջ գտնվող հնչյուններին (այսինքն՝ տարբեր հնչույթների հնչյունական ներկայացուցիչներին), բայց բառային իմաստներ չեն տարբերակում, որն էլ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող հնչյունների, այսինքն՝ միևնույն հնչույթի այլահնչակների առանձնահատկությունն է:

<Հնչյունների նմանօրինակ հարաբերակցությունը նկարագրական (դեսկրիպտիվ) հնչույթաբանության մեջ ստացել է ազատ փոփոխակում (свободное варьирование) անվանումը, որը համաժամանակյա հայեցակերպում ընդհանրություն ունի Ն. Տրուբեցկոյի կողմից «համակցային» որակված տարբերակի հետ, սակայն գործնականում հնչույթի համակցային տարբերակի ըմբռնումը, ըստ Ն. Տրուբեցկոյի, ավելի լայն է, քան ազատ փոփոխակի ըմբռնումն ըստ դեսկրիպտիվ հնչույթաբանության: Այդպիսի համակցային տարբերակները հնչյունահնչույթային հարաբերակցություն խորհրդանշելուց բացի, իրականացնում են նաև սահմանազատիչ գործառնություն (հմմտ. «Նրանց գործառնություն այն է, որ ազդանը-

²⁵ Տե՛ս А. А. Реформатский, նշվ. աշխ., էջ 216:

²⁶ Նույն տեղում, էջ 214-215:

²⁷ Տե՛ս М. В. Панов, նշվ. աշխ., էջ 117:

շում են ուրիշ լեզվական բաղադրիչի առկայությունը անմիջական շրջապատում, այսինքն՝ կամ որոշակի հնչույթի առկայությունը, կամ բառի (կամ ձևույթի), կամ էլ միաժամանակ մեկի և մյուսի»²⁸): Այդպիսի համակցային տարբերակները ներկայացնում են «անցումային դեպքեր» և «գտնվում են լեզվի և խոսքի միջև ինչ-որ տեղ»²⁹:

Սկզբունքորեն արդի գրական ռուսերենի [r] և [γ] հնչյունների հնչույթային հարաբերակցության նույնպիսի պատկերացում ունի նաև Ռ. Ավանեսովը, բայց մի տարբերությամբ, որ [γ]-ն որակում է <X> (այլ ոչ թե <Γ>) հնչույթի տարբերակ, որը հանդիպում է եկեղեցական ծագման որոշ բառերում: Դիրքով պայմանավորված՝ այդ հնչույթը կարող է արտաբերվել մերթ իբրև խուլ, մերթ՝ իբրև ձայնեղ, մերթ՝ իբրև հպական, մերթ էլ՝ իբրև շփական: Դա նշանակում է, որ [γ]-ն և [x]-ն «հանդես են գալիս այնպիսի պայմաններում, ուր չեն տարբերվում հպականները ([r],[k]) և շփականները ([γ], [x]), խուլերը ([k], [x]) և ձայնեղները ([r], [γ])»³⁰: Ըստ էության, նույն երևույթը նկատի ունի Լ. Շչերբան՝ խոսելով «գրական ռուսերենի արտասանության մեջ» մինչև իր օրերը պահպանված «ձայնեղ [x]-ի» մասին³¹: Հին ռուսերենի բարբառներում մինչև «թուլացածների անկման ժամանակը» գոյություն ունեցող [γ]-ն [x]-ի «հարաբերակիցը», այսինքն՝ լծորդակիցն է համարել նաև Վ. Իվանովը³²:

Հետևաբար՝ 1) չնայած միևնույն օրինակի վկայակոչմանը, *հնչույթի կամընտրական տարբերակը* ըստ «պրահացիների» և *հնչույթի տարատեսակը* ըստ «մոսկվացիների» տարբեր երևույթներ են, 2) արդի ռուսերենի [γ] և [r] հնչյունների հարաբերակցությանը ավելի համապատասխանում է *հնչույթի կամընտրական տարբերակ* որակումը լայն առումով, այն է՝ ըստ Ն. Տրուբեցկոյի, քան՝ *հնչույթի տարատեսակ* որակումը: Իսկ ամենից բնորոշը դեակրիպտիվ հնչույթաբանության մեջ առաջարկված *ազատ փոփոխականներ* տարբերակումն է:

Հնչույթի *հիմնական* տարբերակի ընդունման և բնորոշման հարցում նույնպես պատկերը միանշանակ չէ: Ն. Տրուբեցկոյը այդպիսի տարբերակում չունի, բայց այն կա «պրահացիների» «Ստանդարտացված հնչույթաբանական տերմինաբանության նախագծում»³³: Այդպիսին տարբերակել է նաև Բ. Տրնկան: Վերջինս հնչույթի «հիմնական տարբերակը

²⁸ Н. С. Трубецкой, նշվ. աշխ., էջ 300:

²⁹ Նույն տեղում, էջ 301:

³⁰ Р. И. Аванесов, նշվ. աշխ., էջ 168-169:

³¹ «Грамматика русского языка», т. I: Фонетика и морфология, М., 1953, էջ 52:

³² В. В. Иванов, Историческая фонология русского языка, М., 1968, էջ 326:

³³ Ст'ю Й. Вахек, Лингвистический словарь ..., էջ 41:

երկրորդականից տարբերելու ընդհանուր չափանիշ» է համարել «ոչ թե առավելագույն տարբերական դիրքում հնչույթների հանդես գալու կարողությունը, որքանով որ այդ դիրքում կարող է գտնվել երկու տարբերակ, այլ հնչյունական միջավայրից անկախության առավել բարձր աստիճանը»³⁴: Ըստ ՄՀԴ-ի ներկայացուցիչների՝ հնչույթը իր հիմնական տարբերակով իրացվում է «բացարձակ ուժեղ դիրքում», իսկ այդպիսին համարվում է միաժամանակ նշանակայնորեն և ընկալողականորեն ուժեղ դիրքը, օր.՝ *a* ձայնավորին նախորդող դիրքը ռուսերենի <Д> և <Т> հնչույթների համար: Հմմտ. [д]ам «տամ, կտամ» ~ [т]ам «այնտեղ». այդ դիրքում [д]-ն և [т]-ն իմաստագատիչ գործառույթն իրականացնում են՝ պահպանելով իրենց ձայնաբանական և արտաբերական բնութագրերը³⁵:

Վերը շարադրվածը հիմք է տալիս ասելու, որ գործառական հնչույթաբանության Պրահայի և Մոսկվայի դպրոցների հայեցակարգերում ոչ միայն չեն համընկնում հնչույթի հասկացական և գործառական հայեցակերպերը, այլև այն կիրառվում է զգալիորեն տարբեր հասկացական արժեքայնությամբ, եթե նկատի ենք ունենում նաև հնչույթի և նրա ֆիզիկական իրացումների՝ այլահնչակների տարաբնույթ առնչությունները:

В. З. Петросян. - Концептуальная значимость фонемы в функциональной фонологии. Вокруг одного фонологического принципа Пражскую и Московскую фонологические школы объединяет единый подход к определению и дифференциации фонем, а именно: смыслообразующая и смыслоразличительная роль фонемы в составе морфем и слов. Что касается концептуальной значимости, в частности, дифференциации и соотношения фонемы и ее физических проявлений, то в этом вопросе наличествуют значительно расхождение точки зрения не только в пражской и московской фонологических концепциях, но и нередко в представлении каждого представителя этих школ.

Ключевые слова: Пражская фонологическая школа, Московская фонологическая школа, Н.С. Трубецкой, А.А. Реформатский, фонема, факультативный вариант фонемы, вариант фонемы, аллофон, свободное варьирование, дополнительное распределение.

³⁴ Նույն տեղում էջ 41: Հնչույթի հիմնական տարբերակի (ըստ Լ. Շչերբայի՝ հիմնական նրբերանգի) առանձնացման հարցում նման մոտեցում է արտահայտել նաև ԼՀԴ-ի հիմնադիր Լ. Շչերբան (տե՛ս Լ. В. Щерба, Русские гласные в качественном и количественном отношении // *Избранные работы по языкознанию и фонетике*, т. I, Л., 1958, էջ 133), որը հնչույթաբանական միանգամայն այլ հայեցակարգի կրող էր:

³⁵ Տե՛ս М. В. Панов, նշվ. աշխ., էջ 117:

V.Z. Petrosyan. Conceptual Value of the Phoneme in Functional Phonology -

The schools of Functional Phonology – The Prague School and the Moscow School share a common approach to the definition and distinction of the phoneme, i.e. the meaning-formative and distinctive role of the phoneme in morphemes and words. As far as the conceptual value of the phoneme is concerned, particularly the distinction and relationship between the phoneme and its physical expressions, there is considerably controversy not only in the concept of the phoneme suggested by the Prague and Moscow Schools, but in the approaches of the representatives of each of these schools.

Key words: The Prague School, the Moscow School, N.S. Trubetskoy, A. A. Reformatski, phoneme, optional alternative of a phoneme, allophone, free variation, distribution

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԱՐԱԲԵՐԵՆ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ա. Միքայելյան

Բանալի բառեր՝ փոխառություն, ստուգաբանական վերլուծություն, լեզվական գործոններ, արտալեզվական գործոններ

Ցեղակից կամ ոչ ցեղակից լեզուների առնչությունների բնույթը դրսևորվում է նաև փոխառությունների միջոցով: Փոխառություններ կատարելը բնորոշ է աշխարհի բոլոր լեզուներին, նրանց պատմական զարգացման տարբեր փուլերում և պայմանավորված է արտալեզվական և լեզվական բազմաթիվ գործոններով:

Գիտական գրականության մեջ օտար բառերի փոխառման *արտալեզվական* հիմնական գործոններից է համարվում նոր, նախկինում այս կամ այն ժողովրդի մշակութային-քաղաքակրթական կյանքում բացակայող հասկացությունները, առարկաները, երևույթներն անվանելու անհրաժեշտությունը. բառը փոխառվում է այն անվանող առարկայի, հասկացության, երևույթի հետ միաժամանակ¹: Այս բառերն այլ կերպ անվանվում են *նոր հասկացություններ* նշանակող կողեր²: Մի լեզվից մյուսին բառերի փոխառման արտալեզվական հաջորդ գործոնը ժողովուրդների միջև առկա տնտեսական, քաղաքական, գիտամշակութային, կրոնական կապերի ազդեցությունն է: Հոգելեզվաբանությունը կարևորում է մեկ այլ՝ սոցիալ-հոգեբանական գործոնի ազդեցությունը, ըստ որի՝ օտար բառն առանձնանում է ոչ միայն տվյալ լեզվի համակարգում, այլ նաև խոսողի գիտակցության մեջ. նախ՝ օտար բառը հաճախ գրքային է, բացի այդ՝ անծանոթ ձևը իմաստի խորհրդավորության է հանգեցնում, որի հետևանքով էլ խոսքը, որում կան օտար բառեր, հաճախ «սոցիալապես ավելի հարգի է ընկալվում»³:

Փոխառություններ կատարելու *լեզվական* գործոններից է առարկայի, երևույթի, հասկացության մասնավորեցումը, հստակեցումը. այս նպատակով ավելի հաճախ փոխառվում են գիտատեխնիկական եզրեր և այնպիսի բառեր, որոնց ընդհանուր հասկացական համարժեքները հա-

¹ Տե՛ս *Л. Крысин*, Русское слово, своё и чужое. М., 2004, էջ 189:

² Տե՛ս *У. Вайнрайх*, Языковые контакты, К., 1979, էջ 83:

³ Տե՛ս *Л. Крысин*, նշվ. աշխ., էջ 190:

ճախ կան կամ կարող են լինել տվյալ լեզվում, սակայն ունեն իմաստային նրբերանգներ: Այս խմբի բառերն այլ կերպ անվանվում են ծանոթ հասկացությունների *տարբերակային կոդեր*⁴:

Օտար բառերի փոխառման լեզվական մյուս գործոնի էությունն այն է, որ եթե անվանվող առարկան մեկ ամբողջություն է, ապա խոսողը հաճախ ջանում է այն անվանել մեկ բառով, այլ ոչ նկարագրական եղանակով՝ բառակապակցության միջոցով. տվյալ դեպքում լեզվում գործում է «խնայողության» կամ «նվազագույն ճիգի գործադրման» սկզբունքը (օրինակ՝ *սեյֆ* «չիրկիզվող պահարան»):

Վերոնշյալ դրույթների հաշվառումով արդի գրական հայերենում գործածվող արաբական մի շարք փոխառություններ դիտարկենք ըստ ձևաիմաստային և գործառնության պլանների:

1. Շախմատ: Արդի հայերենում կիրառություն ունեցող այս բառը «Միջին հայերենի բառարանում»⁵ վկայված չէ, քանի որ ավելի ուշ շրջանի փոխառություն է: Բառն արձանագրված չէ նաև Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»⁶ և Գ.Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում»⁷: Առաջին ստուգաբանությունն ու բացատրությունը գտնում ենք Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում», ըստ որի՝ *շախմատ* բառը կազմված է պարսկ. *շախ* (šāh) «թագավոր» և պարսկ. *մաթ* (māt) «թագավորի պարտություն» բաղադրիչներից⁸: Հարկ է նշել սակայն, որ *մաթ* բառը ծագում է արաբ. māta բայարմատից, որի առաջին, հիմնական իմաստն է «մահանալ, շունչը փչել»⁹, բայիմաստի ընդլայնմամբ հետագայում ծեռք է բերել նաև «մատ անել (շախմատային խաղում)» իմաստը: Սեմական այս արմատը ծագում է արամ. māt «մահացած, պարտված» ձևից:

Որպես լեզվական համակարգի կենսունակ բառային միավոր՝ *շախմատ* բառով կազմած են մի շարք նոր բառեր՝ *շախմատային, շախմատիստ* (շախմատ խաղացող): Հայերենում շախմատին համարժեք *ճատրակ* բառն առավել սակավ գործածական է:

2. Ալկոհոլ: Արդի գրական հայերենում լայն կիրառություն ունեցող *ալկոհոլ* բառը վերոնշյալ բառարաններից վկայված է միայն Ստ.Մալ-

⁴ У. Вайнрайх, Языковые контакты, К., 1979, էջ 83:

⁵ Ռ. Ղազարյան և Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ՄՀԲ), Ե., 2009:

⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ՀԱԲ), հ. 1-4, Ե., 1971-1979:

⁷ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ՀՍԲ), Ե., 2010:

⁸ Տե՛ս Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ՀԲԲ), հ. 3, Ե., 1944, էջ 492:

⁹ Տե՛ս X. Բարանов, Большой арабско-русский словарь, т. 2, М. 2002:

խասյանցի ՀԲԲ-ում, ըստ որի այն ունի արաբական ծագում, հայտնի է դարձել ֆրանսերեն alcohol տարբերակի միջոցով և հայերենին անցել է ռուսերենի միջնորդությամբ¹⁰: Բառի արաբերեն սկզբնաձևը չի նշվում, այն է՝ al-kuhl, որն ունի «1.ծարիր, 2.աչքերը ներկելու ծարրաներկ, սև ներկ (сурьма)» իմաստները, որոնցով 13-րդ դ. մտել է լատիներենի մեջ: 16-րդ դ. այն կիրառվել է «գինու բնահյութ, մաքուր հյութ» իմաստներով: Բառի այժմյան իմաստն առաջին անգամ արձանագրվել է 18-րդ դ., Հ. Բեյլիի անգլիական բառարանում՝ al-kuhl «շատ մաքուր, կրկնաթորած սպիրտ»¹¹ ձևակերպմամբ: Այս իմաստով էլ բառն առայսօր կիրառվում է արևելյան և եվրոպական բազմաթիվ լեզուներում, հայերենին անցել է ռուսերենի միջնորդությամբ:

Հայերենում *ալկոհոլ* բառը կիրառվում է առավել ընդհանրական՝ «ոգելից խմիչք, ըմպելիք» իմաստով: Որպես հայերենի լեզվական համակարգի կենսունակ միավոր՝ բառը ենթարկվել է բառաբարդման և ածանցման՝ *ալկոհոլային*, *ալկոհոլամոլ*, *ալկոհոլաչափ*, *ալկոհոլացումն*, ինչպես նաև կազմվել է *ալկոհոլացնել* բայը:

3. *Օղի*: Հ.Աճառյանն իր ՀԱԲ-ում բառը բացատրում է որպես «ցքի, բարկ և ոգելից ըմպելի» (արդի հայերենում կիրառվում է «արաղ» իմաստով)¹²: Ներկայացնելով բառի հնարավոր ստուգաբանության մի շարք տարբերակներ և միմյանց հետ համեմատելով սլավոնագերմանական լեզուներում առկա բառաձևերը՝ Հ.Աճառյանը հղում է կատարում Պիկտեին, ըստ որի՝ այն ծագում է սանսկրիտի ali «ոգելից ըմպելիք» բառից: Հ.Աճառյանը, սակայն, բառը համարում է չստուգաբանված:

Արաբերենում ‘araq առաջին իմաստով նշանակում է «քրտինք կամ քրտնելը (որը տեղի է ունենում թորման ժամանակ)»: Բառիմաստի զարգացմամբ այն հետագայում ստացել է նաև «գինի, օղի» նշանակությունը և ավելի գործածական է այս իմաստով: Ռուսերենում այսօր էլ կիրառելի арақ բառը համարվում է եվրոպական լեզուներից, հավանաբար՝ ֆրանսերենի arack ձևից փոխառված, որն ունի արաբական ծագում¹³: Արաբերենի ‘araq բառին հնչմամբ ավելի մոտ հայերեն *արաղ* ձևը ավելի հաճախ գործածվում է հայերեն բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ արաբերենի q (ʾ) հնչյունը, չունենալով հայերեն համարժեքը, բարբառներում հաճախ փո-

¹⁰ Տե՛ս Ստ.Մայխասեանց, ՀԲԲ, հ.1, Ե., 1944, էջ 18:

¹¹ Տե՛ս <http://arabistika.by/arabisms.html>:

¹² Տե՛ս Հ.Աճառեան, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 613:

¹³ Տե՛ս М.Фасмер, Этимологический словарь русского языка, т. 1, М., 1986, էջ 82-83:

խարինվում է *կ, դ, խ* հնչյուններով, ապա տարակույս չկա, որ *արաղ* ձևը ծագում է արաբ. ‘araq -ից: Ըստ ՄՀԲ-ի՝ *արաղ* բառը «գինի» իմաստով պարսկական փոխառություն է¹⁴: Պարսկերենում շատ են արաբերեն բառերը, ուստի այն հայերենին անցել է միջնորդավորված: Մեր կարծիքով, կարելի է դիտարկել նաև *օղի* և *արաղ* ձևերի միջև հնարավոր աղերսը:

4. *Տարա*: Արդի հայերենում այսօր գործածական *տարա* բառը ներառված չէ ՄՀԲ, ՀԱԲ, ՀՍԲ, ՀԲԲ: Բառն առկա է միայն Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»¹⁵ ու «Օտար բառերի բառարանում»¹⁶ և բացատրվում է հետևյալ կերպ՝ «1.այն, ինչի մեջ պահվում կամ փոխադրվում է ապրանքը (պարկ, արկղ, ամաններ և այլն), 2.որևէ բան կշռելիս՝ ամանի քաշը, արքա»: ՕԲԲ, ամենայն հավանականությամբ հետևելով Մ.Ֆասմերի ստուգաբանական բառարանին, համարում է, որ բառը իտալերեն *tara* ձևի համարժեքն է, որն իր հերթին ծագում է արաբերեն *tarḥ* «թափոն» բառից¹⁷: Մեր կարծիքով, սակայն, ճիշտ է բառի ստուգաբանությունը բխեցնել արաբերեն մեկ այլ՝ *tarḥa* ձևից, որի առաջին իմաստն է «ծածկոց, քող» և երկրորդ իմաստը՝ «տարա»¹⁸: Բառը հայերենին անցել է 20-րդ դ. ռուսերենի միջնորդությամբ: Արաբերեն սկզբնաձևում առկա է հնչյունն իր համարժեքը չունի վերոնշյալ լեզուներում. դրանով պիտի բացատրել փոխառված բոլոր ձևերում նրա անկումը:

5. *Հեքիաթ*: Ժամանակակից գրական արևելահայերենում կիրառվող այս բառը ՄՀԲ, ՀԱԲ-ում չկա: Բառի ստուգաբանությունն ու բացատրությունը տրվում է միայն ՀԲԲ-ում՝ որպես պարսկերենի *hikayet* ձևից կատարված փոխառություն՝ «1.ժողովրդական բանահյուսության տեսակ, 2.ստահող, անհավատալի պատմություն, լուր»: Հարկ է նշել սակայն, որ այն ծագում է արաբերենի *haka* «պատմել, խոսել» բայարմատից կազմված *hikayya* «պատմվածք, պատմություն» բառից: Բառի հոգնակի թվի ձևն է *hikayyāt*, իսկ խոսքի շղթայում ունի *hikayyat* հոլովված ձևը. վերջին տարբերակով այն պարսկերենի միջնորդությամբ անցել է հայերենին:

¹⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, ՄՀԲ, Ե., 2009, էջ 84:

¹⁵ Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 1416:

¹⁶ Ա.Հայրապետյան, Օտար բառերի բառարան, (այսուհետև՝ ՕԲԲ) Ե., 2011, 643 էջ:

¹⁷ Տե՛ս Մ. Փասմեր, Этимологический словарь русского языка, т. 4, М., 1987, էջ 20: Ա. Հայրապետյան, ՕԲԲ, Ե., 2011, էջ 554:

¹⁸ X. Баранов, Большой арабско-русский словарь, т., 2, М., 2002, էջ 471:

Վերոհիշյալ բառերը, լինելով 20-րդ դ. հայերենին անցած միջնորդավորված փոխառություններ, ի տարբերություն էկզոտիզմների և օտարաբանությունների, աստիճանաբար դադարում կամ դադարել են որպես փոխառություններ գիտակցվելուց, դարձել են հայերեն լեզվահամակարգի բաղկացուցիչներ, բնիկ բառերի նմանությամբ ձևավորել են բառակազմական կառույցներ: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հասկացությունները և երևույթները, որոնք նրանք անվանում են, ժամանակակից կյանքի բաղադրիչներ են:

С. А. Микаелян. О некоторых заимствованиях слов арабского происхождения в современном армянском языке. В данной статье рассматривается ряд заимствований арабского происхождения, которые активно употребляются в современном армянском языке. Эти слова (*ալկոհոլ* [alcohol], *օղի+տարա*, *տարա* [tara], *հեքիաթ*, *շախմատ* и т.д.) в основном заимствованы в 20-ом веке и либо отсутствуют в словарях, либо - подлежат этимологическому уточнению. Предлагаемые варианты и дополнения нужно иметь в виду во время составления армянского нового этимологического словаря.

Ключевые слова: заимствование, этимологический анализ, внутриязычные факторы, внешние факторы.

S. A. Mikaelyan. A Number of Borrowings of Arabic Origin in Modern Literary Armenian. The article examines a number of borrowings (*ալկոհոլ*, *օղի/տարա*, *տարա*, *հեքիաթ*, *շախմատ* etc.) of Arabic origin borrowed mainly in the 20th century and occurring in modern literary Armenian that are either non-included in the dictionaries or need etymological clarification. Suggested observations and additions can be considered when compiling a new etymological dictionary of Armenian.

Key words: borrowing, etymology of the word, linguistic factor, extra-linguistic factor.

СООТНОШЕНИЕ СРАВНЕНИЯ И МЕТАФОРЫ

(На материале русского, армянского и арабского языков)

Кандидат филолог. наук К. С. Рафаелова

e-mail /head_assiancenter@brusov.am

Ключевые слова: метафора, сравнение, сходство, мышление, ассоциация, сознание, характеризовать.

В современной лингвистике существует точка зрения на сравнение как основу для возникновения метафоры, как на начальный этап метафоризации, исходя из постулата о том, что начальный этап любого познания сводится к сравнению. В. Г. Гак полагает, что «метафора возникает не потому, что она нужна, а потому, что без нее невозможно обойтись, она присуща человеческому мышлению и языку как таковая»¹.

Признанные в зарубежном языкознании исследователи метафоры Дж. Лакофф и М. Джонсон подтверждают высказанную мысль, отрицая исключительность образной функции метафоры, которая пронизывает всю нашу повседневную жизнь: «Понятия, управляющие нашим мышлением, вовсе не замыкаются в сфере интеллекта. Они управляют также нашей повседневной деятельностью, включая самые обыденные, земные ее детали ... И если мы правы в своем предположении, что наша понятийная система носит преимущественно метафорический характер, тогда наше мышление, повседневные опыт и поведение в значительной мере обуславливаются метафорой»².

Сравнение, как и метафора, характеризует объект путем выявления сходства, поэтому вполне мотивированной представляется квалификация сравнения и метафоры как потенциально соотносительных в плане мыслительного процесса. Но именно в этой соотносительности кроется главная проблема определения метафоры как *сокращенного сравнения* или, наоборот, понимание сравнения как *расширенной метафоры*. Известно, что эта проблема относится к наиболее древним, которую пытались решить Аристотель, Цицерон, Квинтилиан и другие античные философы³.

¹ В. Г. Гак, Метафора: универсальное и специфическое // В. Г. Гак/Метафора в языке и тексте, М., 1988, т2 12-13.

² Дж. Лакофф, Метафоры, которыми мы живем // Дж. Лакофф, М. Джонсон, Язык и моделирование социального взаимодействия, М., 1987, т2 126–170:

³ Л. Г. Олексюшина, Лексико-семантичні та стилістичні особливості зоонімних художніх порівнянь німецької мови (дис. канд. філол. наук), Чернівці, 2004, т2 22-25.

Почти в каждом исследовании, которое касается этой проблемы, есть попытка дифференциации понятий «сравнение» и «метафора». Однако, как справедливо отмечает В. А. Чабаненко, до последнего времени в системе традиционных понятий стилистики определения сравнения и метафоры были не очень четкими и не содержали конкретных указаний на их разграничительных признаках⁴.

Для различения сравнения и метафоры следует учитывать, что принципиальное различие между сравнительным (денотативно-сигнификативным) и метафорическим наименованием находит отражение на глубинном семасиологическом уровне языка: «Если в обычном слове акт наименования является актом отождествления этого предмета с классом предметов на основе существенных для них признаков, то в метафорическом наименовании конкретный предмет отождествляется с классом предметов, опираясь на несуществующий признак»⁵. Сказанное в полной мере относится и к УКЕ, содержательную основу которых составляют лексемы, претерпевающие определенные семантические преобразования в составе компаративной конструкции. В основе образности лежит противоречие между прямым и переносным значением языковой единицы. Но в отличие от сравнения, где может происходить уподобление объектов одного класса (в таком случае образное сравнение не возникает: *сын злой, как и его отец*) или разных классов (тогда имеем образное сравнение: *злой как собака*), метафора всегда основывается на сближении объектов разных классов (*богатый как Крез*). Из этого следует, что сравнения, основанные на уподоблении предметов разных классов, являются метафорическими по своей природе.

Логико-грамматическим первоисточником и в том, и в другом случае служит мыслительный или языковой коннектор *как*, даже в том случае, если он только подразумевается. «Когда человек впервые нашел слово «как», – пишет по этому поводу М. А. Жовтобрюх, – он поднялся на новый, более высокий уровень в своем развитии, и это «как» было большим событием в истории человеческого сознания»⁶. По мнению А. А. Потебни, «...в развитии мысли и речи образное сравнение – более древнее, чем безобразное, и всегда предусматривается им»⁷. Один из ближайших последователей идей А. А. Потебни, И. П. Лысков связывает развитие образного, метафорического сравнения с анимистическим строем мышления, а употребление обычных срав-

⁴ В. А. Чабаненко, Основы мовної експресії, К., 1984. с. 3-4:

⁵ В. М. Огольцев, Устойчивые сравнения в системе фразеологии., Л. Изд-во ЛГУ, 1978, с. 61:

⁶ М. А. Жовтобрюх, Курс сучасної української літературної мови, К., ч. 1, 1972, с. 224:

⁷ А. А. Потебня, Из записок по русской грамматике, М., т. 1, с. 60:

нений – с его упадком. Это приводит его к выводу о том, что: «...сравнение двух предметов между собою является результатом различения предметов и распределения их по разным категориям; следовательно, сравнение, по отношению к метафоре, вторичного происхождения: оно возникло после метафоры»⁸.

Эта позиция несколько не совпадает с современными суждениями, согласно которым «сравнения квалифицируются как старейший вид тропа, как начинающее средство образности»⁹. Ряд других известных исследователей (Б. А. Ларин, В. М. Мокиенко, М. П. Колomoец и др.) также склонны считать, что образные сравнения возникают из прямых значений сравнений путем «свободного» переносного употребления: от конкретного значения к абстрактному, от единичных случаев к – обобщению. Арабский ученый аль-Джарим считает, что функция сравнения в арабском языке заключается в прояснении и слежении предметов к пониманию¹⁰. Сравнение в таком понимании является промежуточным звеном перенесения, и метафора, которая базируется на психической ассоциации сходства, предусматривает компаративность как стимул своей эволюции¹¹.

Сравнение рассматривается, таким образом, как когнитивная операция, которая принимает участие в формировании метафор. Еще Аристотель осознал, – считает У. Эко, что метафора и сравнение являются не только украшением текста, но в большей степени – когнитивным инструментом¹². Современная наука пока не располагает точным представлением о глубинных лингво-когнитивных механизмах формирования ментального образа мира, но вполне очевидно, что язык дает ключ к постижению общих знаний и установлению законов, по которым они упорядочиваются в человеческом сознании.

В частности, переход сравнения в метафору проявляет историческую тенденцию к постепенному закреплению устойчивого сравнения в собственно фразеологическом употреблении: как *труба иерихонская* – *иерихонская труба*, как *медведь (сильный)* – *медведь*, как *черепаха* – *черепаха (мелительная)*. Ср. в арм.: *núg nr řhq ni ıtu* – *řhq ni ıtu* (очень короткий, низкорослый), *núg nr řwıřır* (очень большой) – *řwıřır*, *ıřřř ıtu* – *ıřř (řwıřırıř)*. Ср. в араб.

⁸ И. П. Лысков, Теория словесности в связи с данными языковедения и психологии, М., 1914. с. 98:

⁹ Г. М. Добролюба, Ідеографія і генезис поліських антропологічних порівнянь (авто-реф. дис.канд.філол. наук), Житомир, 1997, с. 6:

¹⁰ 308 – 2010 علي الجريم، مصطفى أمين /البلاغة الواضحة. البيان، المعنى، البديع/ دار المعارف، القاهرة

¹¹ См. в 9, с.15.

¹² U. Eco, Die Grenzen der Interpretation, München: Carl Hanser, 1992. s. 154:

jamīl miṭla ḡazal - ḡazal (красивый как газель – газель), *miṭla annaḥla - annaḥla* (трудолюбивая как пчела), *miṭla laban aluṣfur - laban al'usfūr* (редкое как птичье молоко). Может быть, поэтому метафору иногда называют сравнением, сокращенным на союз-частицу *как*. Но в любом случае лингвокогнитивная операция сравнения, то есть операция, в результате которой отыскивается необходимый эталон сравнения из всего многообразия мыслительных ассоциаций, осуществляется в пределах универсальной структурно-логической модели при помощи коннектора *как*, что и обуславливает семантический сдвиг специфического лексического окружения в сторону метафоризации буквальных значений.

В свое время Д. Девидсон отмечал, что наибольшее семантическое различие между метафорой и сравнением заключается в том, что все сравнения истины, а большинство метафор ложно¹³. Сравнение часто представляет эксплицитное изложение оснований сходства, в то время как от метафоры странно было бы ожидать, чтобы она объясняла самое себя. (Ср. разницу между сравнением человеческого лица с лисьим путем поиска сходных черт и видением человеческого лица *как* лисьего (лисий, коварный)¹⁴[Дэвидсон 1990: 187]. Однако бесспорно, что граница между некоторыми метафорами и сравнениями не является жесткой.

В плане функционально-семантическом говорят о том, что сравнение сопоставляет предметы, понятия, не отождествляя их и рассматривая изолированно. «Для реализации метафоры необходим контекст, в котором члены сочетания выступают только в одном предметно-логическом значении, уточняя то слово, которое несет двойное значение – метафору»¹⁵. Однако это замечание И. Р. Гальперина вполне справедливо по отношению к так называемой речевой, а не языковой метафоре, как явлению устоявшемуся и общепринятому в языковой культуре. УКЕ, в данном случае, – феномен языкового уровня, который функционально отличается от так называемых художественных сравнений, которые чаще всего так и остаются принадлежностью уровня речи и дискурса. Ср.: рус. *Луковицу съешь – сът на весь день. Оттого у тебя кровь, как болотная жижа* (Д. Мережковский, *Смерть богов*); арм. *Ջարկու՛մ են, զարկու՛մ դու՛շան գորքերը, արյունը հոսու՛մ է՛ն քրքի նման* (Հ. Թումանյան, *Թմկաբերդի առումը*); *բեղերն ասես ուրն անց քիւն*, В последнем примере имеются в виду стрелки часов, которые именно

¹³ Д. Дэвидсон, Что означают метафоры // Теория метафоры / пер. М. А. Дмитриевской, М., 1990. с 185.

¹⁴ Там же, с. 87:

¹⁵ И. Р. Гальперин, Очерки по стилистике английского языка, М., 1958:

в этой позиции могут напоминать форму длинных, опущенных усов. Ср. также: *Մի պահեստապետ, ստորակետի պես կախ բեղերով, մի հաշվապահ... խառնվել էին իրար ...* (Ա. Բակունց, Իվան բեյ); араб. *Fa man yudāfi 'u 'anni, ya musāfira, miṭla al Yamāma, bayn al'ayni wal basri* /досл. Кто спосет меня, о путешественница, как Ямама, между глазом и зрением (Nizar Qabbāni, al Matar).

В целом, исследователи признают, что сравнение и метафора имеют общие признаки: логико-компаративную структуру, способность создавать устойчивые ассоциации на основе сходства предметов или явлений и т.д. Вместе с тем между сравнением и метафорой можно провести и принципиальную дифференциацию как разницу между эксплицитной и имплицитной образностью. Об этом, в частности, пишет С. Ульман, усматривая разницу между «образом на основе аналогии» (А есть как В) и «образом на основе идентификации» (А есть В)¹⁶. По мнению этого лингвиста, нельзя провести четкой границы между сравнением и метафорой. Независимо от того, речь идет об эксплицитно или имплицитно сформулированном образе, он всегда возникает из одной и той же интуиции, одного и того же «наблюдения родственности вещей»¹⁷: сравнение базируется на метафоре, а метафора входит в состав сравнительной конструкции.

Другими словами, метафора, с одной стороны, основывается на сравнении и в семантическом плане представляет собой «свернутое», или «сокращенное» сравнение. В структурном отношении – это краткое (имплицитное) сравнение без использования сравнительных слов «как», «подобно» и т.п., которые выражают одновременно понятийную близость и отдаленность¹⁸. С другой стороны, метафора может входить в состав сравнительных конструкций, определенным образом влияя на их общий смысл. Взаимное превращение сравнительного оборота и собственно метафорического наименования может осуществляться формальным преобразованием компаративной конструкции, то есть путем отбрасывания сравнительного союза. Ср.: рус. *как курица в пепле – курица в пепле; как муха в сметане – муха в сметане; как египетская мумия – египетская мумия*; арм. *ննգ որ ձուկը ջրում – ձուկը ջրում: ննգ որ փղթած էշ – փղթած էշ*; араб. *qa wardat arrabī' – wardatu rrabī' (как весенняя роза - весенняя роза), ka sauka filjanb – sauka fil janb (как шип в боку)*.

¹⁶ С. Ульманн, Семантические универсалии // «Новое в лингвистике», вып. V, М., 1970, с. 192.

¹⁷ Там же, с. 193.

¹⁸ А. М. Эмирова, Русская фразеология в коммуникативном аспекте, М., 1988, с. 193:

С точки зрения сопоставительного языкознания изучение устойчивых компаративных единиц в аспекте особенностей их метафоризации может быть предметом специального рассмотрения на материале разных языков. Сказанное выше позволяет выделить здесь три основных типа сравнений относительно их близости/отдаленности к метафоре. Это: 1) прямые (конкретные) сравнения, которые выражаются буквальными значениями лексем, составляющих сравнительный оборот, напр.:... *я могу узнать египетские иероглифы везде и во всякое время, как свой собственный почерк* (О. И. Сенковский, Ученое путешествие на Медвежий Остров); арм. *Ուր է տառնում ինձ սև, ճարճրված մատներով, երեխայի պես լացող այս կինը* (Ա. Բալանթարյան, Մարաթն); араб. *Wa limāda lam taf'al miṭlahum?* / Почему не делать так как они? (Yusuf Sibai, Nadia). 2) устойчивые метафорические (образные) сравнения, семантика которых складывается из переносных значений лексем, а сами обороты являются узнаваемыми и воспроизводимыми, то есть приобрели статус фразеологизированных в пределах языкового коллектива, напр.: *Димычка хронически молчал, но все понимал, как собака* (В. Токарева, Звезда в тумане); арм. *Երկու շարժք Ադամը Ալեքսանդրապոլից ջրի պես գնում էր դեպի Աշտարակ և ավագի պես մնում (Պերճ Պռոշյան)*; араб. *Hua zay albaṣl maṣhūr fī kuli ʿāṡm* / он как лук присутствует во всех блюдах; 3) индивидуально-авторские метафорические сравнения, которые по своему определению являются стилистическими фигурами (тропами) в пределах художественного текста, дискурса, идиостиля писателя, напр.: *Новость побежала, как буря по степи, до настоящей пустыни, до тишины, до серо-красной земли, до низких звезд* (М. М. Пришвин, Черный); арм. *Նրանց սերը ծնվեց նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը* (Ա. Բակունց, Միրհապ); араб. *Atiq alahmaq an tusbiḥahu innama alahmaq kataub alxalaq kulluma raqa ʿta minhu jāniban ṣafaqatu alrīḥ fa inxaraqa* / Берегись дураков: они как дырявая одежда, сколько не штопай, а ветер подул – и опять продырявилась (народная мудрость).

Третий отмеченный тип сравнений прежде всего имел в виду Аристотель, когда писал: «Важнее всего – быть искусным в метафорах. Только этого нельзя перенять от другого: это – признак таланта, потому что сделать хорошие метафоры – значит подмечать сходство»¹⁹.

Итак, и метафора и сравнение являются одним из важнейших языковых явлений. Выражая эмоции и оценки, они наглядным образом отражают национальную культуру каждого народа.

¹⁹ Аристотель. Об искусстве поэзии, М., 1957, с. 117:

Ք. Ս. Ռաֆայելովա. Համեմատության և փոխաբերության հարաբերակցությունը (ռուսերեն, հայերեն և արաբերեն նյութերի հիման վրա). Համեմատությունը փոխաբերության առաջացման հիմքն է, քանի որ ճանաչողությունը սկսվում է համեմատությունից: Այս ոճական հնարքները կապակցված են, որից բխում է հիմնական խնդիրը՝ փոխաբերությունը սահմանել որպես կրճատ համեմատություն, կամ հակառակը՝ վերջինս հասկանալ որպես ընդլայնված փոխաբերություն: Առաջինի համեմատել են մեկ կամ տարբեր դասի առարկաներ, մինչդեռ փոխաբերությունը միշտ հիմնված է տարբեր դասերի առարկաների կամ երևույթների մերձեցման վրա: Այդ երկուսն ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ տրամաբանական-համեմատական կառույց, առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա կայուն զուգորդում ստեղծելու ունակություն և այլն: Միաժամանակ նրանց միջև գոյություն ունի սկզբունքային տարբերություն, որն արտահայտվում է բացահայտ և ենթադրյալ պատկերներում:

Բանալի բառեր՝ փոխաբերություն, համեմատություն, նմանություն, մտածողություն, զուգորդում, գիտակցություն, բնութագրել:

K. S. Rafayelova. The correlation of a comparison and a metaphor. /based on russian, armenian and arabic.- A comparison is the basis for the genesis of a metaphor as any cognition commences from a comparison. These stylistic devices are interlinked in respect of mental process. From this comes the main problem of the definition of a metaphor as a reduced comparison or vice versa the perception of a comparison as an extended metaphor. Almost in any study, which touches upon the discussed topic, there is performed an attempt to differentiate between the notions of “comparison” and “metaphor”. In the notion of comparison it is possible to compare objects belonging to the same or various classes, whereas a metaphor is always based on the cohesion of objects or phenomena of different classes. All in all, it is worth mentioning that both comparison and metaphor have common peculiarities: a logical and comparative structure, ability to create sustainable parallelism based on the similarity of objects or phenomena, etc. Meanwhile, between them, there is a fundamental difference which is expressed in explicit and implicit images.

Key words: metaphor, comparison similarity, thinking, association, consciousness, characterize.

ԼԵՃՎԱՐԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ռ. Ավետյան
sargisavetyan@ysu.am, ԵՊՀ

Բանալի բառեր – միահատկանիշ-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան, բազմահատկանիշ-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան, ընդհանրացնող-բացատրողական մասնային տիպաբանության շրջան

Լեզվաբանական տիպաբանության մեջ մոտեցումային և մեթոդաբանական առանձնահատկությունների տեսանկյունից սովորաբար տարբերակվում է զարգացման երկու հիմնական փուլ՝ դասական տիպաբանություն (classical typology) և արդի տիպաբանություն (modern typology): Տվյալ դեպքում նկատի է առնվում երկու հիմնական հարաչափ (parameter), որոնց համապատասխան արդի տիպաբանությունը մի կողմից բնութագրվում է որպես մասնային տիպաբանություն (partial typology)՝ ի հակադրություն դասական ամբողջային տիպաբանության (holistic typology), մյուս կողմից՝ արդի տիպաբանությանը բնորոշ է համարվում ընդհանրացնող մոտեցումը (the generalizing approach), իսկ դասականին՝ անհատականացնող մոտեցումը (the individualizing approach): Մասնային տիպաբանության դեպքում տիպաբանորեն միմյանց հետ համեմատվում և դասակարգվում են լեզուների ոչ թե լեզվակառուցվածքներն ամբողջովին, այլ կառուցվածքային առանձին (մասնավոր) երևույթները, քերականական առանձին գործընթացները: Իսկ ավելի հաճախ համակցված դիտարկվում են քերականական նույն ենթակառուցվածքի մի շարք երևույթներ՝ դրանց միջև հնարավոր փոխհարաբերության ընդհանուր օրինաչափություններ բացահայտելու նպատակով: Ըստ այդմ՝ մասնային տիպաբանությունը այս կամ այն քերականական տիրույթի առանձին քերականական գործընթացների տիպաբանություն է: Մինչդեռ ամբողջային տիպաբանության շրջանակներում քերականական մեկ հարաչափի կամ սակավաթիվ քերականական հատկանիշների հիման վրա բնութագրվում և տիպաբանորեն դասակարգվում են լեզուներն ամբողջական կերպով³⁷¹: Այս վերջին մոտեցումը լայն տարածում է ունեցել հատ-

¹ Տե՛ս J. J. Song, Linguistic Typology: Morphology and Syntax, London and New York, 2014 [2001], էջ 41-45: W. Croft, Typology and Universals, 2nd ed., Cambridge University Press, 2003,

կապես 19-րդ դ., և ավանդական ձևաբանական տիպաբանությունը՝ իր անջատական, կցական, թեքական լեզվատիպերով², դրա վառ օրինակն է: Սակայն արդեն 20-րդ դ. ամբողջային տիպաբանությունը հետզհետե իր տեղը գիջում է մասնային տիպաբանությանը, և տիրապետող է դառնում այն միտքը, որ լեզուները տիպաբանական տեսանկյունից սովորաբար խառը կամ հիբրիդային բնույթ ունեն: Ըստ այդմ՝ նույն լեզուն կարող է միաժամանակ հանդես բերել լեզվական տարբեր տիպերին բնորոշ երևույթներ³: Դա էլ իր հերթին մեծապես պայմանավորված է այն բանով, որ պատմականորեն լեզուների տիպաբանական փոփոխությունը սովորաբար մաքուր (անխառն) կերպով չի ընթանում, այլ լեզուները մի տիպից մեկ այլ տիպի անցնելիս հաճախ պահպանում են նախորդ տիպից որոշ հատկանիշներ⁴: Բացի այդ՝ լեզուների նաև ոչ ձևաբանական՝ հնչյունական և շարահյուսական առանձնահատկությունների տիպաբանական դիտարկման փորձերը նույնպես նպաստել են ամբողջային տիպաբանությունից հրաժարվելուն, քանի որ տարբեր հատկանիշներ նկատի առնելու դեպքում դասակարգման արդյունքները հաճախ տարբեր են լինում:

Ինչ վերաբերում է անհատականացնող և ընդհանրացնող մոտեցումների տարբերակմանը, այն գալիս է Ջ. Գրինբերգից⁵ և անմիջականորեն կապված է լեզվական ընդհանրությունների ուսումնասիրության հետ: Ժամանակագրորեն անհատականացնող մոտեցումը ընդհանուր առմամբ համընկնում է ամբողջային տիպաբանության, իսկ ընդհանրացնող մոտեցումը՝ մասնային տիպաբանության շրջանին: Անհատականացնող մոտեցման դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է միջլեզվական բազմազանության (cross-linguistic diversity) և լեզվական առանձնահատկությունների վրա, հետևաբար լեզուները բնութագրվում (անհատականացվում) և դասակարգվում են ըստ տիպերի: Մինչդեռ ընդհանրացնող մոտեցման ժամանակ ընդհանրական օրինաչափություններ՝ լեզվական ընդհանրություններ են սահմանվում, որոնք, Ջ. Գրինբերգի բնորոշմամբ, օրինաչափ սահմանափակումներ են միջլեզվական բազմազանության համաժամանակյա հնարավոր դրսևորումների և լեզվատիպերի պատմական փոփոխություն-

էջ 45-48, *M. Shibatani*, Linguistic typology // *J. D. Wright* (editor-in chief), International Encyclopedia of the Social and Behavioral Sciences, 2nd ed., Vol. 14, Oxford, 2015, էջ 208-209:

² Տե՛ս *W. Croft*, նշվ. աշխ., էջ 45-46:

³ Տե՛ս *J. J. Song*, նշվ. աշխ., էջ 43: *M. Shibatani*, նշվ. աշխ., էջ 209:

⁴ Տե՛ս *P. Ramat*, Is a Holistic Typology Possible ? // «*Folia Linguistica*», 20, 1986, էջ 8, *J. J. Song*, նշվ. աշխ., էջ 45:

⁵ Տե՛ս *J. Greenberg*, Language Typology: A Historical and Analytic Overview, The Hague / Paris, 1974, էջ 36, 43-49:

ների պարագայում և, որպես այդպիսին, թույլ են տալիս սահմանազատել տրամաբանորեն հնարավոր և իրականում հանդիպող լեզվական տիպերը տրամաբանորեն հնարավոր, բայց իրականում չհանդիպող տիպերից⁶: Ընդհանրացնող մոտեցումը լեզվաբանական տիպաբանության մեջ լայն տարածում է գտնում 20-րդ դ. 60-ական թթ. սկսած: Այդ առումով շրջադարձային է համարվում Դոբս Ֆերիի գիտաժողովը (1961 թ.), որի արդյունքները 1963 թ. հրատարակվում են Ջ. Գրինբերգի խմբագրությամբ⁷: Այսպիսով՝ լեզվաբանական տիպաբանությունը ընդհանրությունների ուսումնասիրությամբ թևակոխում է զարգացման մի նոր փուլ⁸:

Մյուս կողմից, թեև 20-րդ դ. առաջին կեսի ընթացքում լեզվաբանական տիպաբանությունը ընդհանուր առմամբ դասակարգողական ամբողջային տիպաբանություն էր և բնութագրվում էր անհատականացնող մոտեցմամբ, այդուհանդերձ 19-րդ դ. տիպաբանական ուսումնասիրությունների համեմատությամբ այն աչքի էր ընկնում մի շարք առանձնահատկություններով, որոնք առաջին հերթին պայմանավորված էին կառուցվածքային լեզվաբանության շրջանում լեզվի նկատմամբ ընդգծված համակարգային մոտեցմամբ: Այդ առումով 20-րդ դ. 1-ին տասնամյակներից մինչև 50-ական թթ. ավարտն ընկած շրջանը կարող է դիտվել որպես առանձին փուլ լեզվաբանական տիպաբանության պատմության մեջ⁹: Ուստի, կարծում ենք, լեզվաբանական տիպաբանության պատմությունը մոտեցումային և մեթոդաբանական առանձնահատկությունների տեսանկյունից ավելի նպատակահարմար է բաժանել ոչ թե երկու՝ դասական (ավանդական) և արդի, այլ երեք հիմնական փուլերի. 1) միահատկանիշ- (կամ սակավահատկանիշ)-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան (19-րդ դ., մասամբ էլ 20-րդ դարասկիզբ), 2) համակարգային, բազմահատկանիշ-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան (20-րդ դ. 1-ին տասնամյակներից մինչև 50-ական թթ. վերջե-

⁶ Տե՛ս *J. Greenberg*, *Diachrony, Synchrony, and Language Universals* // *J. Greenberg, Ch. Ferguson, E. Moravcsik* (eds.), *Universals of Human Language*, Vol. 1: *Method & Theory*, Stanford University Press, 1978, էջ 65 հշ.: *J. Greenberg*, *Language Typology...*, էջ 64-67:

⁷ Տե՛ս *J. Greenberg* (ed.), *Universals of Language*, 2nd ed., The M. I. T. Press, 1966 [1963]:

⁸ Տե՛ս *G. Graffi*, *The Pioneers of Linguistic Typology: From Gabelentz to Greenberg* // *J. J. Song* (ed.), *The Oxford Handbook of Linguistic Typology*, Oxford University Press, Online Publication 2012 (Print Publication 2010), էջ 47 հշ.:

⁹ Նկատենք, որ թեև հետազոտողները պատմավերլուծական ակնարկի շրջանակներում այս կամ այն չափով անդրադառնում են կառուցվածքային լեզվաբանության շրջանում տիպաբանական ուսումնասիրությունների առանձնահատկություններին, բայց այն սովորաբար չի տարբերակվում որպես առանձին փուլ: - Տե՛ս, օրինակ, *J. Greenberg*, *Language Typology...*, էջ 42-49: *G. Graffi*, նշվ. աշխ., էջ 44 հշ.:

րը), 3) ընդհանրացնող-բացատրողական մասնային տիպաբանության շրջան (20-րդ դ. 60-ական թթ. մինչև մեր օրերը):

Նշված շրջաններից յուրաքանչյուրը առավել ընդհանուր գծերով կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

1. *Միահատկանիշ-(կամ սակավահատկանիշ)-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան:*

19-րդ դարում լեզուների տիպաբանական ուսումնասիրության հիմնական ուղղությունը ձևաբանական տիպաբանությունը կամ լեզուների ձևաբանական դասակարգումն էր, որի համաձայն՝ լեզուները բաժանվում էին երեք հիմնական տիպի՝ անջատական, կցական, թեքական, իսկ ըստ որոշ հետազոտողների՝ չորս տիպի՝ անջատական, կցական, թեքական և ներմարմնավորյալ¹⁰: Հիշյալ դասակարգման հիմքում նկատի էր առնվում հիմնականում բառի ներքին կառուցվածքը (բառարմատի և քերականական ձևայինների փոխհարաբերությունը), մասամբ էլ՝ բառի հարաբերությունը նախադասության նկատմամբ: Ընդ որում՝ լեզուների տիպաբանական դասակարգումը բացարձակ բնույթ էր կրում, այսինքն՝ տվյալ լեզուն միանշանակ հատկացվում էր այս կամ այն կոնկրետ տիպին: 19-րդ դարում հայտնի մեկ այլ լեզվադասակարգում՝ հոգեբանական դասակարգումը, սկզբունքորեն շատ չէր տարբերվում ձևաբանականից, եթե հաշվի առնենք, որ երկու դեպքում էլ դասակարգման հիմնական չափանիշները՝ բառի ներքին կառուցվածքը և բառի հարաբերությունը նախադասության նկատմամբ, նույնն էին: Մյուս կողմից, թե՛ ձևաբանական և թե՛ հոգեբանական դասակարգումների ժամանակ հետազոտողները լեզուների բազմազանությունը և առանձնահատկությունները բացատրելու նպատակով դիմում էին գրեթե նույն արտալեզվական գործոններին՝ լեզվական տիպերը դիտելով որպես տվյալ լեզվակիր ժողովրդի հոգեկան կերտվածքի, «ժողովրդի ոգու» յուրօրինակ արտահայտություններ¹¹: Ի դեպ, սկզբից ևեթ նկատելի էր ընդգծված գնահատողական վերաբերմունք լեզվական տիպերի նկատմամբ. ընդունված էր այն տեսակետը, որ թեքական տիպը առավել ճիշտ է արտահայտում տվյալ «ժողովրդի ոգին», և մինչև անգամ մնացած ոչ թեքական լեզուները համարվում էին անձև լեզուներ¹²: Նկատենք նաև, որ 19-րդ դարում լեզուների տիպաբա-

¹⁰ Տե՛ս W. Croft, նշվ. աշխ., էջ 45-46, G. Graffi, նշվ. աշխ., էջ[40]: M. Shibatani, նշվ. աշխ., էջ 208:

¹¹ Տե՛ս G. Graffi, նշվ. աշխ., էջ 40-41:

¹² Տե՛ս J. Greenberg, Language Typology..., էջ 36-37: M. Shibatani, նշվ. աշխ., էջ 209:

նական դասակարգումը այս կամ այն կերպ կախվածություն ուներ ծագումնաբանական դասակարգումից, և առանձնացվող լեզվական տիպերը սովորաբար համընկնում էին տվյալ լեզուների կամ լեզվախմբերի հետ: Օրինակ, Ֆ. Շլեգելը, որը թեքական տիպին բնորոշ էր համարում օրգանական, իսկ ոչ թեքական տիպին՝ ոչ օրգանական (մեխանիկական) ձև, գտնում էր, որ միակ օրգանական լեզուները հնդեվրոպական լեզուներն են: Այդպես էլ, օրինակ, բոլոր ուրալա-ալթայական լեզուները Հ. Շտայնթալի կողմից հատկացվում էին ձև չունեցող լեզվական այս կամ այն տիպին, իսկ բոլոր հնդեվրոպական լեզուները ներառվում էին ձև ունեցող միևնույն լեզվական տիպի մեջ: Արդ, 19-րդ դ. 1-ին կեսին տիրապետող էր այն մոտեցումը, որ ձևաբանորեն միմյանց հետ կապված լեզուները պետք է ունենան նաև ընդհանուր ծագում, և հակառակը: Ուստի ընդհանուր առմամբ բացառվում էր պատմական զարգացման արդյունքում լեզվական մի տիպից անցումը մեկ այլ տիպի¹³:

Թեև լեզուների տիպաբանական ուսումնասիրության հիմնական ուղղությունը ձևաբանական դասակարգումն էր, բայց 18-19-րդ դդ. կատարվել են նաև շարահյուսական դասակարգման փորձեր, որոնք հենվում էին նախադասության մեջ բառերի շարադասության վրա: Ընդ որում՝ ոչ միայն նկատի էր առնվում ենթակայի, ստորոգյալի և խնդրի շարադասությունը միմյանց նկատմամբ, այլև արդեն 19-րդ դարում Հ. Վայլը տարբերակում էր կայուն և ազատ շարադասություն¹⁴:

Եվ վերջապես նշված ժամանակահատվածում լեզվաբանական տիպաբանությունը իր էությանը ամբողջալիմ տիպաբանություն էր: Վերջինս հայտնի է նաև «գաբելենցյան իդեալ» անվամբ¹⁵, քանի որ տվյալ մոտեցումը համապարփակ կերպով ձևակերպել է Գ. ֆոն դեր Գաբելենցը, և այդ մասին ընդհանուր պատկերացում կարելի է կազմել նրա հետևյալ տողերից. «...բայց ինչպիսի նվաճում կարող է լինել, եթե մենք կարողանանք կանգնել այս կամ այն լեզվին դեմ առ դեմ և ասել նրան. «Դու ունես այսպիսի մասնավոր (կոնկրետ) հատկանիշ, հետևաբար նաև այս և այս մյուս հատկությունները և այսպիսի ընդհանուր բնույթ», - եթե մենք կարողանանք, ինչպես խիզախ բուսաբաններն են իրականում փորձել, կառուցել (այն է՝ վերականգնել – Ս. Ա.) ամբողջական ծառը իր տերևի հիման

¹³ Տե՛ս *G. Graffi*, նշվ. աշխ., էջ 40: Հմնտ. *J. Greenberg*, *Language Typology...*, էջ 58 և 39:

¹⁴ Տե՛ս *G. Graffi*, նշվ. աշխ., էջ 41-42: Նաև՝ *P. Ramat*, *The (Early) History of Linguistic Typology // J. J. Song* (ed.), *The Oxford Handbook...*, էջ 34:

¹⁵ Տե՛ս *J. J. Song*, *Linguistic Typology...*, էջ 43:

վրա»¹⁶: Հետևաբար Գաբելենցը գտնում էր, որ տվյալ մասնավոր հատկանիշը անհրաժեշտաբար ենթադրում է նաև այլ հատկանիշների միաժամանակյա առկայություն լեզվում, որոնց փոխկապակցված միասնությունն էլ հենց հնարավոր է դարձնում լեզվի ամբողջական բնութագրումը¹⁷:

2. *Համակարգային բազմահատկանիշ-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան:*

Այս փուլում 20-րդ դարի ամենատարածված լեզվաբանական ուղղությունը՝ կառուցվածքային լեզվաբանությունը, նշանակալից ազդեցություն է ունենում տիպաբանության վրա՝ լեզվական երևույթների փոխկապակցված և համակարգային քննության առումով: Լեզվակառուցվածքի տարբեր երևույթների սերտորեն փոխկապակցված լինելու գաղափարը, որը արդեն նկատելի էր նախորդ փուլում, 20-րդ դ. դառնում է տիրապետող մեթոդաբանական մոտեցում¹⁸: Լեզուների ձևաբանական դասակարգման նկատմամբ ցուցաբերվում է բազմաչափ մոտեցում, և փոխվում է լեզվական տիպի ըմբռնումը: Նախ Է. Սեպիրը, իսկ այնուհետև Ջ. Գրինբերգը ցույց են տալիս, որ այս կամ այն տիպաբանական հատկանիշը տարբեր լեզուներում կարող է ունենալ դրսևորման տարբեր աստիճան, և որ լեզվական տարբեր տիպերին բնորոշ հատկանիշները կարող են միաժամանակ հանդես գալ նույն լեզվում: Հետևաբար լեզուները տիպաբանական տեսանկյունից կարող են բնութագրվել և դասակարգվել միայն հարաբերականորեն՝ ըստ առավել գերիշխող հատկանիշների և դրանց դրսևորման աստիճանի: Ընդ որում՝ լեզուների տիպաբանական բնութագրումը կատարվում է արդեն ոչ թե մեկ, այլ միաժամանակ մի շարք հարաչափերի (ըստ Սեպիրի՝ երեք, ըստ Գրինբերգի՝ հինգ) հիման վրա¹⁹: Այսպիսով՝ լեզուների համակարգային բնութագրման և բազմահատկանիշ դասակարգման շնորհիվ *լեզվական տիպ* հասկացությունը հարաբերական և բավական վերացական բնույթ է ստանում: Մյուս կողմից՝ անխառն լեզվական տիպերի բացակայությունը և լեզվատիպերի պատմական փոփոխելիությունը (որը նույնպես տեղի է ունենում ոչ բացարձակ կերպով) նպաստում են ամբողջային տիպաբանությունից

¹⁶ F. Plank, Hypology, Typology: The Gabelentz Puzzle // Folia Linguistica, 25, 1991, էջ 421:

¹⁷ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 421-453: Հմմտ. P. Ramat, The (Early) History..., էջ [36]:

¹⁸ Տե՛ս J. Greenberg, Language Typology..., էջ 43 հշ.:

¹⁹ Տե՛ս Ջ. Շեպիր, Избранные труды по языкознанию и культурологии, М., 1993, էջ 117-137: J. Greenberg, A Quantitative Approach to the Morphological Typology of Language // «International Journal of American Linguistics», Vol. 26, No. 3, 1960, էջ 178-194: Հմմտ. նաև՝ Th. E. Payne, Morphological Typology // A. Y. Aikhenvald, R. M. W. Dixon (eds.), The Cambridge Handbook of Linguistic Typology, Cambridge University Press, 2017, էջ 81-84:

հետզհետե հրաժարվելուն և մասնային տիպաբանության ձևավորմանը: Իհարկե, մասնային տիպաբանությունը տիրապետող մոտեցում է դառնում հաջորդ փուլում, բայց դրա առանձին փորձեր արդեն նկատելի են այս շրջանում: Այսպես, Ն. Տրուբեցկոյի առաջարկած ձայնավորային համակարգերի տիպաբանությունը՝ իր երեք հիմնական տիպերով (գծային, ուղղանկյունաձև և եռանկյունաձև)²⁰, համարվում է մասնային տիպաբանության վառ օրինակ:

3. *Ընդհանրացնող-բացատրողական մասնային տիպաբանության շրջան:*

Երրորդ փուլում (20-րդ դ. 60-ական թթ.մինչև մեր օրերը) տիրապետող է դառնում ընդհանրացնող-բացատրողական տիպաբանական մոտեցումը: Տվյալ դեպքում լեզվաբանական տիպաբանության բուն նպատակը ոչ այնքան լեզուների դասակարգումն է ըստ տիպերի, որքան լեզվական ընդհանուր օրինաչափությունների (ընդհանրությունների) բացահայտումը և վերջիններիս հիմքում ընկած պայմանավորիչ գործոնների բացատրությունը: Այս տիպաբանական մոտեցման ձևավորվելը անշուշտ պայմանավորված էր ընդհանուր լեզվաբանական տեսության մեջ 20-րդ դ. 60-70-ական թթ. նկատվող մի շարք կարևոր զարգացումներով, որոնց շնորհիվ հաղթահարվում են սոսյուրյան երկու հիմնական՝ համաժամանակություն-տարաժամանակություն և լեզու-խոսք հակադրությունները, և վերանայվում է դրանց փոխհարաբերությունը²¹: Ըստ այդ նոր մոտեցման՝ համաժամանակյա օրինաչափությունները բացատրվում և լիովին հասկանալի են դառնում դրանց ձևավորման տարաժամանակյա գործընթացների քննությամբ, մյուս կողմից՝ լեզվական փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են լեզվի համաժամանակյա կտրվածքում լեզվագործածության առանձնահատկություններով: Ուստի լեզվագործածության, լեզվական փոփոխությունների և լեզվականաբանական փոփոխարարության ուսումնասիրությունը առաջնային կարևորություն է ձեռք բերում²²: Ջ. Գրինբերգը և այլ հետազոտողներ գործնականում ցույց են տալիս, որ համաժամանակյա բազմաթիվ

²⁰ Հմմտ. J. Greenberg, Research on Language Universals // «*Annual Review of Anthropology*», Vol. 4, 1975, էջ 79:

²¹ Տե՛ս J. Greenberg, Rethinking Linguistics Diachronically // «*Language*», Vol. 55, No 2, 1979, էջ 275-290:

²² Տե՛ս J. Bybee, From Usage to Grammar: The Mind's Response to Repetition, *Language*, 82, 2006, էջ 711-733: Մյուսի The Diachronic Dimension in Explanation // J. Hawkins (ed.), *Explaining Language Universals*, Oxford, 1988, էջ 350-379: J. Bybee, C. Beckner, Usage-Based Theory // B. Heine, H. Narrog (eds.), *The Oxford Handbook of Linguistic Analysis*, Oxford University Press, 2010, էջ 827-855: E. Moravcsik, *Introducing Language Typology*, Cambridge University Press, 2013, Ch. 7, էջ 243-274:

ընդհանրություններ տարածամանակյա անմիջական պայմանավորվածություն ունեն²³: Այսպիսով՝ լեզուների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրությունը, որը կառուցվածքային լեզվաբանության ընդգծված համաժամանակյա մոտեցման հետևանքով մինչ այդ անտեսվել կամ հետին պլան էր մղվել, 20-րդ դ. 60-ական թթ. կեսերից սկսած մեծ կարևորություն է ձեռք բերում: Ձևավորվում է տիպաբանական մի նոր ուղղություն՝ տարածամանակյա տիպաբանությունը, և այդ հարցում չափազանց մեծ է Ջ. Գրինբերգի դերը: Գրինբերգյան մոտեցման համաձայն՝ ինչպես որ համաժամանակյա ընդհանրությունները օրինաչափ սահմանափակումներ են ներկայացնում միջլեզվական բազմազանության հնարավոր դրսևորումների հարցում, այդպես էլ տարածամանակյա ընդհանրությունները ցույց են տալիս լեզվական տիպերի պատմական փոփոխությունների օրինաչափ սահմանափակումները: Հետևաբար տարածամանակյա տիպաբանությունը զբաղվում է լեզվական տիպի պատմական փոփոխության ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրությամբ²⁴:

Համաժամանակյա օրինաչափությունների բացատրման հարցում տարածամանակյա գործընթացների հետ միասին կարևոր պայմանավորիչ դեր են խաղում նաև հոգելեզվաբանական բնույթի մի շարք գործոններ և լեզվական միտումներ, այդ թվում՝ կիրառահաճախականությունը (frequency of use), խնայողության միտումը (economy), պատկերագրայնության միտումը (iconicity) և այլն: Հատկապես կիրառահաճախականությունը լեզվականության զարգացման օրինաչափությունների և տարածամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է²⁵: Արդի տիպաբանության մեջ կիրառահաճախականության դերը կարևոր է նաև պայմանավորողական ընդհանրությունների ուսումնասիրության և լեզվական ձևերի նշույթա-

²³ Տե՛ս *J. Greenberg*, Rethinking..., էջ 275-290: *Մույնի՝ Synchronic and Diachronic Universals in Phonology // Language*, Vol. 42, No. 2, 1966, էջ 508-517: *Մույնի՝ Research on Language...*, էջ 86-88: *J. Bybee*, The Diachronic Dimension..., էջ 350-379:

²⁴ Տե՛ս *J. Greenberg*, Diachrony, Synchrony..., էջ 61-89: *Մույնի՝ Language Typology...*, էջ 57-72: Հմմտ. նաև՝ *M. Shibatani*, նշվ. աշխ., էջ 211:

²⁵ Տե՛ս *J. Bybee*, Markedness: Iconicity, Economy, and Frequency // *J. J. Song* (ed.), The Oxford Handbook..., էջ [110-120]: *J. Bybee*, From Usage to Grammar..., էջ 711-733: *J. Bybee, C. Beckner*, Language Use, Cognitive Processes and Linguistic Change // *C. Bowerman, B. Evans* (eds.), The Routledge Handbook of Historical Linguistics, London/New York, 2015, էջ 503-518: *M. Haspelmath*, Creating Economical Morphosyntactic Patterns in Language Change // *J. Good* (ed.), Linguistic Universals and Language Change, Oxford University Press, 2008, էջ 185-214: *B. MacWhinney, A. Malchukov, E. Moravcsik* (eds.), Competing Motivations in Grammar and Usage, Oxford University Press, 2014:

յին փոխհարաբերության (*ոչ նշույթավորված – նշույթավորված* հակադրության) լուսաբանման համար²⁶:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ 20-րդ դ. 80-ական թթ. վերջերից սկսած՝ *բացարձակ ընդհանրույթ* հասկացությունից հրաժարվելու և վիճակագրական ընդհանրություններին նախապատվություն տալու ընդհանուր միտում է նկատվում: Ըստ այդմ՝ եթե մինչ այդ հետազոտողները ընդհանրությունների ուսումնասիրությամբ հիմնականում փորձում էին պարզել մարդկային լեզվի հնարավոր սահմանները և սահմանափակումները լեզվական ընդհանուր օրինաչափությունների տեսանկյունից (այսինքն՝ ջանում էին պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է հնարավոր կամ անհնար մարդկային լեզվում) և, ըստ այդմ, քերականության ընդհանուր տեսությունն ստեղծել, ապա արդի լեզվաբանական տիպաբանության մեջ, ինչպես նկատում է Բ. Բիքելը, ավելի կարևոր է համարվում այն հարցը, թե *ի՞նչ կա, որտե՞ղ և ինչո՞ւ* (what's where why)²⁷: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հնարավորինս ընդգրկուն լեզվական ընտրանքի հիման վրա կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ տիպաբանական օրինաչափությունների բաշխումը աշխարհի լեզուներում սովորաբար աշխարհագրական (տարածքային), հասարակական-պատմական և ծագումնային ակնհայտ պայմանավորվածություն ունի, և որ լեզվական համընդհանուր նախապատվությունները (universal preferences) և տիպաբանական ընդհանուր օրինաչափությունները պատմականորեն ենթարկվում են նշված արտալեզվական գործոնների ազդեցությանը: Ըստ այդմ՝ նախկինում բացարձակ համարված շատ ընդհանրություններ իրականում վիճակագրական բնույթ են կրում և արտալեզվական գործոնների ազդեցությամբ ձևավորված ու աշխարհագրական սահմանափակում ունեցող լեզվական ընդհանրություններ են: Ուստի ընդհանրությունների ուսումնասիրության ժամանակ ճանաչողական և հոգե-լեզվաբանական պայմանավորվածություն ունեցող լեզվական համընդհանուր նախապատվությունները պետք է հնարավորինս սահմանազատել արտալեզվական գործոնների ազդեցության արդյունքներից²⁸:

Արդի մասնային տիպաբանության շրջանակներում ընդհանրությունների ուսումնասիրության հետ մեկտեղ նաև բնութագրվում և տիպաբա-

²⁶ Տե՛ս Ս. Ավետյան, Նշույթավորվածության և կիրառահաճախականության փոխհարաբերության ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ // «*Լեզու և լեզվաբանություն*», 2019, 1(20), էջ 38-48:

²⁷ B. Bickel, Typology in the 21st Century: Major Current Developments // «Linguistic Typology», 11, 2007, էջ 239-251:

²⁸ J. J. Song, Setting the Stage // J. J. Song (ed.), The Oxford Handbook..., էջ [26-27]: B. Bickel, նշվ. աշխ., էջ 239-251:

նորեն դասակարգվում են առանձին քերականական երևույթները (մասնավոր քերականական կարգերը և շարահյուսական կառույցները)՝ իրենց ձևաբանական արտահայտության (ձևաբանական ցուցիչների բնույթի և պահվածքի) և շարահյուսական առանձնահատկությունների տեսանկյունից: Տվյալ դեպքում նկատի են առնվում ձևաբանական և շարահյուսական մի շարք հարաչափեր: Այսպես, ի տարբերություն ավանդական ձևաբանական տիպաբանության, որը սեպիրյան-գրինբերգյան մոտեցման լույսի ներքո բարեփոխված տեսքով հենվում էր երկու հիմնական հարաչափերի՝ տեխնիկայի (ծուլման) և համադրականության աստիճանի վրա, և ըստ առաջին հարաչափի՝ տարբերակվում էին անջատական, կցական և թեքական, իսկ ըստ երկրորդի՝ վերլուծական, համադրական և բազմահամադրական տիպեր²⁹, արդի ձևաբանական տիպաբանության շրջանակներում ավելի հաճախ կիրառվում են չորս հարաչափեր: Ըստ այդմ՝ սեպիրյան համադրականության հարաչափը պահպանվում է անփոփոխ՝ վերլուծական, համադրական և բազմահամադրական լեզվատիպերով, իսկ սեպիրյան տեխնիկայի (ծուլման) մեկ միասնական հարաչափի փոխարեն նկատի են առնվում Բ. Բիքելի և Յ. Նիկոլսի առաջարկած երեք առանձին հարաչափերը՝ ծուլում (fusion), արտահայտողականություն (exponence) և փոփոխակայնություն, տարբերակայնություն (flexivity, variance), որոնք բոլորն էլ կարևոր են ձևաբանական տիպաբանության համար և կարող են համակցվել (զուգակցվել) միմյանց հետ: Ընդ որում՝ այս կամ այն կոնկրետ լեզուն կարող է կիրառել նշված հարաչափերի մեկից ավելի՝ տարբեր համակցություններով քերականական ձևեր³⁰:

Իսկ լեզուների շարահյուսական-տիպաբանական բնութագրման կարևորագույն հարաչափերն են շարադասությունը (word order) և գերադասանշության-ստորադասանշության (head-marking vs. dependent-marking) հարաչափը: Ընդ որում՝ այդ երկու հարաչափերն էլ նկատի են առնվում թե՛ նախադասության և թե՛ բառակապակցության մակարդակում: Առաջին հարաչափի տեսանկյունից նախադասության մակարդակում ուշադրություն է դարձվում ենթակայի, բայ-ստորոգյալի և խնդրի, իսկ բառակապակցության մակարդակում՝ լրացում-լրացյալի հիմնական շարա-

²⁹ Տե՛ս *B. Comrie*, *Language Universals and Linguistic Typology: Syntax and Morphology*, 2nd ed., The University of Chicago Press, 1989, էջ 42 հշ.:

³⁰ Տե՛ս *B. Bickel, J. Nichols*, *Inflectional Morphology* // *T. Shopen* (ed.), *Language Typology and Syntactic Description*, Vol. III: *Grammatical Categories and the Lexicon*, 2nd ed., Cambridge University Press, 2007, էջ 172-193: Հմմտ. նաև՝ *V. Velupillai*, *An Introduction to Linguistic Typology*, Amsterdam/Philadelphia, 2012, էջ 95-110:

դասությանը³¹: Ինչ վերաբերում է գերադասանշության-ստորադասանշության հարաչափին, վերջինիս համաձայն տարբերակվում է չորս հիմնական տիպ. 1) տվյալ շարահյուսական հարաբերություն արտահայտող ձևաբանական ցուցիչը հանդես է գալիս լրացման կազմում, 2) ձևաբանական ցուցիչը հանդես է գալիս գերադաս անդամի՝ լրացյալի կազմում, 3) ձևաբանական ցուցիչը միաժամանակ հանդես է գալիս թե՛ գերադաս և թե՛ ստորադաս անդամի կազմում, 4) տվյալ շարահյուսական հարաբերությունը ձևաբանական արտահայտություն չի ստանում, այլ դրսևորվում է միայն գերադաս և ստորադաս անդամների կայուն շարադասությամբ³²:

Այսպիսով՝ լեզվաբանական տիպաբանությունը իր շուրջ երկդարյա գոյության ընթացքում անցել է պատմական զարգացման մի շարք փուլեր՝ կրելով հայեցակարգային և մեթոդաբանական զգալի փոփոխություններ: Ի տարբերություն ավանդական տիպաբանության, որը պարզապես լեզվակառուցվածքները բնութագրում և դասակարգում էր ըստ տիպերի, արդի տիպաբանությունը բացատրողական մեծ ուժ ունի և որպես այդպիսին՝ միջլեզվական բազմազանության պարագայում ընդհանուր օրինաչափություններ է սահմանում՝ միաժամանակ վերհանելով ու բացատրելով համաժամանակյա օրինաչափությունների և տարաժամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոններն ու նախադրյալները: Ինչ վերաբերում է լեզվաբանական տիպաբանության պատմական շրջանաբաժանմանը, մոտեցումային և մեթոդաբանական առանձնահատկությունների տեսանկյունից ավելի նպատակահարմար է տարբերակել ոչ թե երկու՝ արդի և դասական (ավանդական), այլ երեք հիմնական փուլեր. 1) միահատկանիշ-(կամ սակավահատկանիշ)-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան (19-րդ դ., մասամբ էլ 20-րդ դարասկիզբ), 2) համակարգային, բազմահատկանիշ-դասակարգողական ամբողջային տիպաբանության շրջան (20-րդ դ. 1-ին տասնամյակներից մինչև 50-ական թթ. վերջերը), 3) ընդհանրացնող-բացատրողական մասնային տիպաբանության շրջան (20-րդ դ. 60-ական թթ. մինչև մեր օրերը):

С. Р. Аветян - Основные периоды в развитии лингвистической типологии. Обычно различают два основных периода в развитии лингвистической типоло-

³¹ St' u V. Velupillai, նշվ. աշխ., էջ 181-184, 277-302:

³² St' u J. Nichols, Linguistic Diversity in Space and Time, The University of Chicago Press, 1992, Ch. 2, էջ 46 հջ.: J. J. Song, Linguistic Typology..., էջ 197-202: Նաև՝ B. Comrie, նշվ. աշխ., 52-54:

гии, а именно: классическую холистическую (holistic) типологию и современную частную (partial) типологию. Однако в статье аргументируется, что трехэтапная периодизация была бы более адекватной с теоретической и методологической точки зрения, чем обычная двухэтапная. В частности, лингвистическая типология в эпоху структурализма (а точнее, с первых десятилетий до конца пятидесятих 20-ого века) может рассматриваться как отдельный период ввиду своих определенных теоретических и методологических особенностей. Соответственно, предлагается следующая периодизация истории лингвистической типологии: 1) период однопризнаково- (или малопризнаково-) классификационной холистической (holistic) типологии (19-ый век и, частично, начало 20-ого века), 2) период системной, многопризнаково-классификационной холистической типологии (с первых десятилетий до конца пятидесятих 20-ого века), 3) период обобщающе-объяснительной частной типологии (с шестидесятих 20-ого века до наших дней).

Ключевые слова: *период однопризнаково-классификационной холистической (holistic) типологии, период многопризнаково-классификационной холистической типологии, период обобщающе-объяснительной частной типологии.*

S. R. Avetyan - Main Periods in the Development of Linguistic Typology – Two main periods are commonly distinguished in the history of linguistic typology, namely, classical holistic vs. modern partial typology. However, it is argued in the paper that a three-stage periodization would be more adequate from a theoretical and methodological perspective than the two-stage one. Specifically, linguistic typology in the age of structuralism (to be more precise, from the first decades up to the late fifties of the twentieth century) can be regarded as a separate period in view of its certain theoretical and methodological peculiarities. Accordingly, the following periodization of the history of linguistic typology is proposed: **1)** the period of mono-feature-(or pauci-feature)-classificatory holistic typology (the 19th century and, partly, the beginning of the 20th century); **2)** the period of systemic, multi-feature-classificatory holistic typology (from the first decades up to the late fifties of the 20th century); **3)** the period of generalizing-explanatory partial typology (from the sixties of the 20th century up to nowadays).

Key Words: *the period of mono-feature-classificatory holistic typology, the period of multi-feature-classificatory holistic typology, the period of generalizing-explanatory partial typology.*

ԽՈՍՔԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊԸ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Գ. Բարսեղյան

Բանալի բառեր՝ հենք, միջուկ, տրամաբանական կապ և կապակցման միջոցներ. Թումանյանի քառյակներ. վերլուծություն

Թումանյանի ստեղծագործության բարձրագույն գագաթներից է քառյակը (քառյակներ գրել է 1919 թ. նոյեմբերից հետո): Նրա կենդանության օրոք տպագրվել է ընդամենը 46 քառյակ, շուրջ երեք տասնյակն էլ մնացել է անտիպ կամ սևագիր վիճակում:

Քառյակին դիմելու կենսական հիմքը բանաստեղծի հարազատների կորուստն էր (Ռոստոմ և Արտաշես եղբայրների սպանվելը և որդու՝ Արտիկի զոհվելը): Ահա թե ինչու Արևելքի պոեզիայի ավանդական ձևերից մեկը՝ քառյակը (ռուբայի, բայաթի, հայրեն, կաֆա), դրա համար ամենահարմար միջոցը դարձավ: Թումանյանի կարծիքով. «Քառյակը պոեզիայի մինիատուրն է, նուրբ ճաշակի բան»: Քառյակները շատ նուրբ, ազնիվ, խորը և գեղեցիկ բաներ են: Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելք եմ գալիս. գալիս եմ դեպի մերը ... «Քառյակները հասուն շրջանի արդյունք են՝ իմաստության, վեհության ... Քառյակը գոհար է և անպայման հղկված պետք է լինի»: «Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են»¹:

Թումանյանն իր քառյակները գրել է խառը կարգով. թեմատիկ խմբերի չի բաժանել: Սակայն ակադ. Էդ. Ջրբաշյանը դրանք, այնուամենայնիվ, թեմատիկ խմբերի է բաժանել՝ քառյակներ, որոնց հենքի (տեքստի) միջուկը կենսական հիմք ունի, այլև՝ քառյակներ, որոնք «Հառաչանք» պոեմից են վերցված:

1. Առաջին խմբի քառյակները բավականին մեծ թիվ են կազմում: Օր.

*Ա՛նց կացա՛ն ... // Օրերս թըռան, ա՛նց կացա՛ն // Ախ ու վախով,
դարդերով // Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն: Այդպես նաև՝ Վերջացա՛վ ...*

¹ Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Ե., 1969:

// Կյանքն մաշվեց, *վերջացավ* // Ինչ հույս արի՝ փուչ էլավ, // Ինչ խընդություն՝ վերջը ցավ:

Այս երկու քառյակներում կապակցման միջոց են *անց կացան* բայական հարադրության և *վերջացավ* բայի կրկնությունները, որոնք ունեն նաև իմաստային կապ: Կապակցման միջոց է նաև *ինչ* դերանվան կրկնությունը:

Կենսական հիմք ունեն նաև հետևյալ քառյակների միջուկները. օր.

Ո՞ր կորա՛ն // Մոտիկներս *ո՞ր կորա՛ն* // *Ինչքան* լացի, ձեն ածի // Ձեն չտվին, *լուռ կորան*:

Կապակցման միջոցներ են *ո՞ր կորա՛ն* կապակցությունների կրկնությունը և *ձեն* գոյականի կրկնությունը, որոնք ունեն նաև իմաստային կապ: Օր.

Ետ չեկա՛վ ... // Գնաց, գնաց, *ետ չեկավ* // Անկուշտ մահին, սև հողին // Գերի մնաց, *ե՛տ չեկավ*:

Քառատողում կապակցման միջոց է *ետ չեկավ* բայական հարադրության կրկնությունը և իմաստային կապը:

Կենսական հիմք ունեն նաև «*Քանի մահ կա իմ սրտում*», «*Մեռա՛ն, մեռա՛ն*», «*Կորցրել եմ, ո՞ր գտնեմ*», և այլ քառյակները:

Քանաստեղծը, անձնական վշտից բարձրանալով, գնում է մեծ ընդհանրացումների՝ զգալով ժողովրդի վշտերի ամբողջ ծանրությունը: Այսպես՝

Ամեն մի սիրտ ցավով *լցվեց մեր դարում*, // *Ցավոտ սրտով աշխարհի լցվեց մեր դարում*. // *Ցավոտ աշխարհքն* ելավ *լցվեց* բովանդակ, // Իմ *սիրտը* բաց, իմ *սիրտը* մեծ *մե՛ր դարում*:

Այս քառյակում կապակցման միջոց են *լցվեց* բայի, *սիրտ* գոյականի, *ցավոտ* ածականի, *աշխարհ* գոյականի, *մեր դարում* կապակցության կրկնությունները և իմաստային կապը:

Բացի կապակցման այս միջոցներից (կրկնություն, իմաստային կապ)՝ բանաստեղծը քառյակների ներքին գեղարվեստական տրամաբանական կապով բացահայտում է հենքի (տեքստի) միջուկը՝ կենսական հիմքը:

2. Քառյակների երկրորդ խմբի միջուկը բանաստեղծի մանկության անցքերն ու վայրերն են, որոնք արտահայտված են կարոտի և ափսոսանքի պատկերներով: Թումանյանի բառերով ասած՝ «երջանիկ օրեր, սիրելի դեմքեր, որ հիմի չկան»: Այսպես՝ Հիմի բացել են հանդես // Երգիչները իմ անտես. // *Ջա՛ն*, հայրենի ծղրիդներ, // Ո՞վ է լսում հիմի ձեզ: Այդ դեպքում կապակցման միջոց է *ջա՛ն* ծայնարկությունը: Մեկ այլ քառյակում հանդերում ճախրող կամ մոլոր նստած արտուտներն են: Կլթաց-

նում են, արտորում // Արտուտները արտերկրում, // *Թռչում* մանուկ հոգուս հետ, // *Ճախրում, ճխում* եթերում:

Կապակցումը կատարվում է ստորոգյալի ներկա ժամանակով և իմաստային կապով: Կամ՝ բանաստեղծի հիշողությունից չհեռացող վիրավոր հավքը: Մի հավք զարկի ես մի օր // *Թռ՛ավ*, գնաց վիրավոր: // *Թռչում է* միշտ իմ մտքում // Թե՛ր արնոտ ու մոլոր:

Կապակցման միջոց է *թռչել* բայի կրկնությունը, իմաստային կապը և շարահարությունը [շարահարությունը արտահայտված է վերջակետով (:)] :

Մերթ էլ անտես ձեռքերով իրենց գիրկը կանչող հարազատ անտառներն են. *Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ // Հեռվից անթիվ ձեռքերով // - Ջա՛ն*, հայրենի անտառներ, // Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Կապակցումը կատարվում է *ջա՛ն* ձայնարկության միջոցով:

Քառյակներում հայրենի եզերքն աստիճանաբար ընդլայնվում է՝ հասնելով Արևելքի՝ իբրև լույսի ու բարության ակունքի, ըմբռնման:

Երազելով «Արևելքի եղեմներին» ու հեքիաթական պալատներին՝ բանաստեղծը կարոտով ասում է. Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն, // Հեքիաթական պալատներում սպասում են իմ հոգուն. // Ի՛նչ են շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի: // Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ, դեպի տո՛ւն...: Կապակցումը կատարվում է *ա՛խ* ձայնարկության միջոցով:

Մեկ ուրիշ քառյակում «Արևելքն աստվածային - հայրենիքը իմ հոգու» հակադրում է Արևմուտքից եկող «արյունալի աղետին» և «հոգու անապատին». Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու, // Արևմուտքի ստրուկները մեքենայի և ոսկու // Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներան // Դեպ Արևելքն աստվածային- հայրենիքը իմ հոգու: Կապակցումը կատարվում է հակադրության միջոցով:

3. Քառյակների երրորդ խմբի միջուկը բանաստեղծի հոգևոր որոնումների և ճակատագրի հարցերն են: Այս երկու տրամադրության հակադրությունից ծնվում են բանաստեղծի ծանր ապրումները: Մի կողմից՝ հոգևոր ստեղծագործական անսպառ ուժերի գիտակցում, որ իր բանաստեղծական ծիրքը բնությունից ստացած վերին պարզ և չտեսնված: Օր.՝ Դու մի անհայտ բանաստեղծ ես՝ չտեսնված մինչ էսօր. // Առանց խոսքի *երգ* ես թափում հայացքներով լուսավոր: // Ես էլ, ասենք, զարմանալի ընթերցող եմ բախտավոր, // Որ կարդում եմ էդ *երգերը* էսքան հեշտ ու էսքան խոր:

Նախադասությունների կապակցումը կատարվում է շարահարությամբ (:) և *երգ* գոյականի կրկնությամբ:

Ամեն անգամ քո տվածից երբ մի բան ես դու տանում, // Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,- // Ջարմանում եմ, թե՛ ով Շռայլ, ի՞նչքան շատ ես տվել ինձ, // Ի՞նչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Կապակցումը կատարվում է *ամեն անգամ* կապակցության, *տալ* բայի և *ի՞նչքան շատ* կապակցության կրկնությունների միջոցով: Օր.[՝] Կամ Բարձր է հնոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադեպ- // Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել նրա հետ- // Անհաս բանից, սկզբանից, երբ չկան էլ դեռ չկար, // Մինչև վախճանն անվախճանի քննում է դարեդար: Մեկ այլ օրինակ՝

Ինչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին,- // Ընկեր տվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին. // Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ *իրեն պես*, // Որ *իրեն պես* մտիկ անի ամեն մեկին ու կյանքին:

Կապակցումը կատարվում է *իրեն պես* կապական կապակցության կրկնության միջոցով և շարահարությամբ (.):

Սակայն, մյուս կողմից, բանաստեղծը չի բավարարվում իր արածից, համոզված է, որ ինքը դեռ շատ պարտք է մարդկանց և արարիչ - բնության: Այդ են վկայում հետևյալ քառյակները. Օր.[՝]

Քուն թե արթուն՝ օրիս շատը *երազ* եղավ, *անցկացավ*, // *Երազն* էլ, նուրբ ու խուսափուկ, *վռազ եղավ*, *անցկացավ*. // *Վռազ* անցան *երազ*, մուրազ, ու չհասա ոչ մեկին, // Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, *անցկացավ*:

Կապակցման միջոց են *երազ* գոյականի, *վռազ* մակբայի, *անցկացավ* բայի կրկնությունները, ինչպես նաև *անցկացավ* բայի իմաստային կապը: Օր.[՝] Առատ, անհատ՝ Աստծու նման՝ միշտ տեղալուց *հոգնել եմ ես*, // Հոգիս ծարավ՝ սրան-նրան մտիկ տալուց *հոգնել եմ ես*. // Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ անհաշիվ, // Ամեն ճամփում սպասելուց ու փնտրելուց *հոգնել եմ ես*:

Կապակցման միջոց է *հոգնել եմ ես* կապակցության կրկնությունը, որն ունի նաև իմաստային կապ:

Հանճարի հավերժական ձգտումը դեպի կատարյալն ու գեղեցիկը և չբավարարվելը եղածով արտահայտված է հետևյալ քառյակում.

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.- // Խափան, խուպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի: // Ի՞նչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին... // Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին...:

Կապակցման միջոց են *հող ու ծաղիկ* գոյականների կրկնությունները:

Ահա և քառյակների չորրորդ խումբը, որոնց միջուկը տարբեր կողմերից գնմվող մարդու պատմական ճակատագրի, անհատի և հասարակության փոխհարաբերության հարցերն են:

Բարության, մարդասիրության հոգեկան հրձվանք պատճառող քառյակում.

Երենկ էսպես՝ անվերջ քեզ հետ - իմ կյանքի հետ *լինեի*, Հազար երենկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ *լինեի*. Բայց ո՛վ կտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չզգայի, Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ *լինեի*...:

Կապակցման միջոց են *երենկ* ծայնարկությունը, *լինել* բայը՝ իրենց կրկնություններով և իմաստային կապով:

Սակայն մարդասիրական այդ ձգտումները բախվում են իրականությանը և հանգում «հեռու է մինչև մարդը իր ճամփան»:

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, *կյանքըդ կարճ*, // Քանի՛ քանիսն *անցան քեզ* պես, քեզնից առաջ, քո առաջ. // Ի՛նչ են տարել նըրանք *կյանքից*, թե ինչ տանես դու քեզ հետ, // Խաղաղ *անցիր*, ուրախ *անցիր* երկու օրվան էս ճամփեդ:

Կապակցման միջոց են *կյանք* գոյականի և *անցնել* բայի կրկնությունները:

Նույն իրողությունը նկատում ենք նաև անհետկյալ քառյակում.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին, // Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կրկին, // Է՛յ անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի սրտալի, // Երբ տի ապրես ու վայելես էս աշխարհը շեն ու լի:

Այստեղ կապակցման միջոց է է՛յ ծայնարկությունը:

Աշխարհի, հասարակության նկատմամբ մարդասիրական հայացքներ են մարմնավորված հետկյալ քառյակներում. «Ծով է իմ վիշտն անափ ու խոր», «Ինչքան ցավ եմ տեսել ես», «Ձուր եմ փախչում, ինձ խաբում», «Ո՛վ իմանա՝ ո՛ւր ընկանք», «Քանի՛ ձեռքից և վառվել», «Երազումս մի մաքի» և այլն:

Ո՛նց է ժպտում իմ հոգին // Չարին, բարուն,- ամենքին. // Լույս է տալիս ողջ կյանքիս // Ու էն ճամփիս անմեկին:

Քառյակում կապակցման միջոց է շարահարությունը (.)՝ որպես քերականական միջոց:

Խաղաղության, փոխադարձ սիրո, բնության գեղեցկությունը վայելելու կոչ նեք տեսնում հետկյալ քառյակում. օր.՝ Երկու շիրիմ իրար կից, // Հավերժական լուռ դըրկից, // Թախծում են պաղ ու խորհում, // Թե՛ ինչ տարան աշխարհից:

Քառյակների խումբ, որոնց միջուկը մարդու և բնության փոխհարաբերության խնդիրն է:

Մարդու կյանքը դիտվում է բնության հավերժական շարժման մեջ՝ որպես նրա անբաժան մի մասնիկ: Մարդու անցողիկ կյանքի և բնության մշտանորոգ կյանքի հակադրությունից ծնվող ողբերգությունը Թումանյանի մոտ լուծվում է բնության հետ միաձուլվելու գաղափարի միջոցով: Այսպես՝

Ո՞ր աշխարհում ունեն շատ բան. *միտք եմ անում՝ է՞ս, թե է՞ն.-* // Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ *է՞ս, թե է՞ն.-* // Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի. // Տանի՛, թողնի,- ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թե է՞ն:

Քառյակում կապակցման միջոց են *միտք եմ անում* բայական հարադրության և *էս*, *թե է՞ն* դերանվան և շաղկապի կրկնությունները: Օր.՝

էս է, որ կա- ճիշտ ես ասում. *թասդ բեր:* // Ես էլ կերթա՝ հանց երագում, *թասդ բեր:* // Կյանքը՝ հոսում է տիեզերքում զնգալեն, // Մեկն ապրում է, մյուսն սպասում, *թասդ բեր:*

Կապակցման միջոց են էս դերանվան և *թասդ բեր* կապակցության կրկնությունները և իմաստային կապը: Օր.՝ *խայամն* ասավ իր սիրուհուն. «Ոտդ զգույշ դիր հողին, // Ո՛վ իմանա՝ որ սիրունի *բիրն ես կոխում* դու հիմի...»: // Հե՛յ, ջա՛ն, մենք էլ զգույշ անցնենք, ո՞վ իմանա, *թե հիմի* // Էն սիրուհու *բիրն ենք կոխում*, թե հուր լեզուն *խայամի*:

Կապակցումը կատարվում է *խայամ* (գոյ.), *սիրուհի* (գոյ.), *զգույշ* (ած.), *հիմի* (մակբայ), *ո՞վ իմանա* (կապակցություն), *բիրն ենք կոխում* (կապակցություն) կրկնության և *հե՛յ ջա՛ն* ձայնարկության միջոցով:

Մեկ այլ օրինակ՝

Կամ՝ Հին աշխարհքը *ամեն օր* // Հազար մարդ է մտնում նոր, .. // *Հազար* տարվան փորձն ու գործ // Սկսվում է *ամեն օր*:

Կապակցումը կատարվում է *ամեն օր* բառակապակցության և *հազար* թվականի կրկնությունների միջոցով:

Մարդը, ծնվելով բնությունից և մահանալով, նորից դառնում է նրա հավերժ գոյության մասնիկը: Նման գաղափարի ենք հանդիպում շատ քառյակներում: Մարդկային կյանքի ողջ ընթացքն է ներկայացված՝ անսկիզբ և անվերջ, հետևյալ քառատողում.

Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում, // Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորբոքում,- // Ողջ ազատ ես ու հարազատ էս աշխարհքում *Քեզանով*, // Ողջը Քո մեջ՝ անմահ, անվե՛րջ՝ *Քեզ* են երգում Քո ծենով...:

Կապակցումը կատարվում է *կյանքում* գոյականի, *ողջ, քեզ* դերանունների կրկնության միջոցով:

Ճամփաների պատկերը ևս կապվում է մարդկանց, սերունդների հավերժական հաջորդականության գաղափարի հետ:

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր, // Անդարձ ու հին ճամփաներ, // Ովքեր անցան ձեզանով, // Ուր զընացին, ճամփաներ:

Կապակցումը կատարվում է *ճամփաներ* գոյականի կրկնությամբ:

Իսկ մշտափոփ աղբյուրները թեև անցողիկ են, բայց հավերժական են մարդկային երազանքները նրանց երջանկության ակունքներին:

Աղբյուրները հնչում են ու *անց կենում*, // Ծարավները տենչում են ու *անց կենում*, // Ու երջանիկ ակունքներին երազում // Պոետները կանչում են ու *անց կենում*:

Կապակցման միջոց է *անց կենալ* բայական հարադրության կրկնությունը և իմաստային կապը:

Թումանյանը մի զրույցի ժամանակ ասել է. «Իմ վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը, - «տիեզերական խոհերի շրջանն է» (Նվարդ Թումանյան, էջ 304): Բացի փիլիսոփայական բանաստեղծություններից («Սիրիուսի հրաժեշտը», «Տիեզերքի ընթերցումը», «Արուսյակ» և այլն)՝ զրվեցին նաև քառյակներ այդ թեմայով:

Թումանյանը ցանկանում էր մտքով ընդգրկել տիեզերական տարածության և ժամանակի անվերջությունը, իր բառերով ասած՝ «Անհունության գաղափարը մեծ գաղափար է»:

Այդ մտայնության դրսևորումներից են՝

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է *իմ հոգին*. // Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է *իմ հոգին*, // Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր, // Վար մնացած մարդու համար արդեն խորթ է *իմ հոգին*:

Քառյակում կապակցումը կատարվում է *իմ հոգին* բառակապակցության կրկնության միջոցով և իմաստային կապով:

Կամ՝ Աստծու բանտն են տաճարները - աշխարհքներում բովանդակ. // Իբր էնտեղ է ապրում տերը, պաշտողների փակի տակ; // Հարկավ՝ ազատ նա ժպտում է ամենուրեք ամենքին, // Բայց դու նայիր խեղճ ու կրակ մարդու գործին ու խելքին:

Կապակցումը կատարվում է քերականական միջոցով(:)՝ շարահարությամբ:

Հետևյալ քառյակում հերոսը ցանկանում է հասնել, միաձուլվել մի բարձրագույն էության հետ, որն աստվածացված բնության խորհրդանիշն է: Այս տիեզերական անվերջությունը, աննյութական պատկերները ընթեր-

ցողին պահում են մի ոգեղեն աշխարհում և լսելի դարձնում թումանյանի բառերով ասած՝ «տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը ամենուր»:

Աստեղային երազների աշխարհներում լուսավոր, // Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ, // Անհիշելի վերիուշերի մշուշներում նրբադուտ՝ // Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կիսանեմ նրա մոտ...:

Այսպիսով՝ թումանյանի քառյակների հենքը (տեքստը) տարբեր շերտեր ունի: Հետևաբար տարբեր են այդ հենքի միջուկները: Թումանյանը քառյակների ներքին գեղարվեստական տրամաբանությամբ բացահայտում է այդ տարիներին իր կրած անհատական ծանր կորուստները, մանկության անցքերն ու վայրերը, հոգևոր որոնումների և ճակատագրի հարցերը, մարդու պատմական ճակատագրի, անհատի և հասարակության փոխհարաբերության, մարդու և բնության փոխհարաբերության խնդիրները: Վերջապես՝ թումանյանի քառյակների հենքի (տեքստի) հիմնական միջուկը մարդու և աշխարհի վերաբերյալ փիլիսոփայական խորհրդածություններն են: Դրանք բանաստեղծը բացահայտում է քառյակների ներքին գեղարվեստական տրամաբանությամբ: Քառյակներում կան նաև կապակցման այլ միջոցներ՝ կրկնություն, իմաստային կապ (տարբեր խոսքի մասերով), շարահարություն:

А. С. Барсегян - Логические отношения в катренах Туманяна - Ядро катренов Туманяна - это философское осмысление человека и мира. Поэт раскрывает их через внутреннюю художественную логику катренов. В катренах есть и другие способы соединения: повторение, семантическая связь (разных частей речи), бессоюзность.

Ключевые слова: *основа, ядро, логическая связь, средства связи, катрены Туманяна, анализ.*

A. S. Barseghyan - The Logical Relationship in the Quatrains of Tumanyan - The core of Tumanyan's quatrains are the philosophical reflection on man and the world. The poet reveals them through the inner artistic logic of the quatrains. There are other modes of connection in the quatrains as well: repetition, semantic connection (of different parts of speech), continuation.

Keywords: *foundation, core, logical connection, means of connection, Tumanyan's quatrains, analysis.*

«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆՈՒՆԸ» ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

*Բանայի բառեր՝ հեղինակային անվանումներ, հատուկ անուններ, պոեզիա,
Եղիշե Չարենց*

Հեղինակային բառապաշարում իր ինքնատիպության դրոշմն է թողնում ոչ միայն նորաստեղծ բառը, այլև բառընդգծման հնարը: Դասական հրապարակումներում այդ խնդիրը լուծվում է մեծատառերի կամ տրամաբանական շեշտի կիրառությամբ, մինչդեռ արդի շարվածքային հնարավորությունները կարող են առաջարկել շատ ավելի լայն գործիքակազմ: Անհերքելի փաստ է, որ Ե. Չարենցի լեզուն լուրջ ներդրում է բերել հայերենի բառագանձ, բայց ընդունելի պիտի համարել նաև այն, որ չարենցյան խոսքի նախասիրություններից է նաև բառընդգծումը: Սույն հոդվածում քննության ենք առել Ե. Չարենցի չափածոյի հեղինակային մեծատառերը: Նախքան չարենցյան լեզվանյութին անդրադառնալը փորձենք գտնել երևույթի տեսական բնութագիրը: Ինչպե՞ս անվանել դրանք՝ «հեղինակային մեծատառ», թե՞, պայմանականորեն, «հեղինակային հատկանուն», դիտե՞լ դրանք հեղինակային նորակազմություն, թե՞ համարել համալեզվական բառի ոճական կիրառություն:

Քննենք այդ հասկացությունները առանձին-առանձին:

«ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ // собственное имя, բառ կամ բառակապակցություն, որով անհատապես անվանվում է առարկան՝ այն առանձնացվելով միատիպ առարկաների շարքում. այսինքն՝ տրվում է տվյալ տեսակի առարկաներից մեկին, արտահայտում է անհատ առարկա»¹:

Հատկանվան ուղղագրական պարտադիր ցուցիչը մեծատառն է. չկա հատուկ անուն՝ առանց մեծատառի (բացառությամբ մեծատառագրուկ լեզուների), ընդունված չէ նաև հասարակ անվան մեծատառով գրությունը: Այս օրինաչափությունը խախտվում է անհատական ոճում, երբ որոշակի վերաբերմունքի դրսևորմամբ բառին վերագրվում է հատուկ լինելու «արտոնություն»: Վերջին դեպքում, փաստորեն, ոչ թե առարկան է հակադրվում նույն դասի այլ առարկաներին, այլ բառի տվյալ կիրառությունը՝ իր հարացույցին և համատեքստին: Այդ առումով՝ նմանատիպ կիրառությունները ևս կարող են համարվել հատուկ անուն (պայմանակա-

¹ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 358:

նորեն), թեկուզև՝ դիպվածային բնույթի: Հատկանվան դասական ըմբռնումից վերջիններս տարբերելու համար, իբրև եզր, կարելի է կիրառել «հեղինակային հատկանուն»-ը², որը կարող է մեկնաբանվել երկու կերպ՝ 1) հեղինակի ստեղծած հատուկ անձնանուն, տեղանուն (օր.՝ Քաջ Նազար, Պուլ-պուլ, Ճստունի, Ուրբաթ, Կարմիր Գլխարկ, Լիլիպուտիա...), 2) եղած բառի հեղինակային ընդգծում:

Ինչպես էլ որ անվանելու լինենք, ամեն դեպքում ունենալու ենք մի երևույթ, որը հեղինակային լեզվամտածողության ցուցիչ է և համակարգված քննության պակաս ունի բանասիրության ոլորտում:

Հեղինակային հատկանվան առանձնացումը իր հետ բերում է մեկ այլ հարց՝ «դիտել՝ հեղինակային հատկանունը նորաբանություն, թե՞ ոչ»: Մեր պատասխանը այս հարցին միանշանակ չէ. դա, կարծում ենք, պետք է պայմանավորել հատկանվան բնույթով: Եթե ստեղծված հեղինակային հատկանունը նոր հասկացություն է անվանում, նոր բառ է, իսկ եթե արտահայտում է հեղինակի վերաբերմունքը գործող հասկացության նկատմամբ՝ բառատարբերակ: Հեղինակային հատկանունացումը, ինչպես դժվար չէ նկատել, առավել հաճախ երևույթի նկատմամբ ընդգծված (հաճախ՝ դրական) վերաբերմունքի արտահայտություն է³:

Հոգվածում քննելու ենք չարենցյան հատկանունները (պայմանականորեն՝ բոլոր մեծատառով գրվող անհատական կիրառությունները)՝ քաղված հեղինակի չափածոյի լեզվանյութից⁴:

Ե. Չարենցի չափածոյում հաշվվում է հեղինակային հատկանունացման մոտ 70 դրսևորում, որոնցում կարելի է առանձնացնել թեմատիկ խմբեր: Իբրև այդպիսին՝ մենք նկատել ենք հետևյալները՝ 1) անձնանուն, 2) տեղանուն, 3) ժամանականուն, 4) այլ:

1. *Անձնանուն*: Թեմատիկ այս խմբում ընդգրկել ենք այն հեղինակային հատկանունները, որոնցով հեղինակը նկատի է ունեցել մարդկանց: Դրանք, բնականաբար, գոյականներ են, իսկ երկու դեպքում՝ անձնական դերանուն: Պայմանականորեն այստեղ ենք ներառել նաև Աստծուն տրված անունը՝ «Ոգի», ինչպես նաև «Մտքի ու Հանճարի գազաթներ», «Քերթության պետեր» կապակցությունները: Վերջիններում բուն հատկանուններն իրանիշ են (ընդգծվածները), և հեղինակը դրանք բաղադր-

² Ստորև «հեղինակային հատկանունը» կկիրառենք առանց չափերսների՝ բոլոր տեղերում, սակայն, ընդունելով նրա պայմանական լինելը:

³ Մեծատառերի ոչ օրինաչափ կիրառությամբ դրական վերաբերմունք է արտահայտվում հատկապես հոգևոր գրականության մեջ: Վերջին դեպքում ունենում ենք ոչ թե նոր բառ, այլ բառի ուղղագրական տարբերակ:

⁴ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1-3, Ե., 1986-1987:

յալ հատուկ անվան արժեքով չի ներկայացրել, որի դեպքում միայն կունենայինք մաքուր անձնանշություն: Բանն այն է, որ բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները հեղինակը տալիս է մեծատառերով, իսկ այստեղ այդպես չէ (հմմտ.՝ «Նաիրյան Մուսա» // «չուզունե Մարդը»): Անձնանուն օրինակներն են՝ 1) *Առաջնորդ* (3/77, 3/160)⁵, 2) «Ես – հազարանուն՝ *Մահ, Ավերք* ու *Նեռ*» (1/319), 3) *Արքան* – (3/57), 4) *Քո* («դու» դերանվան բառաձև) (1/45), «Ոչ մի փրկչի ուրիշ,- արդ *Քեզանից* բացի» (3/400), 5) *Թատրոնի Տնօրեն* (3/119), 6) *Կարմիր Կոմանդոր* (2/194), 7) *Կարմիր Ղեկավարը* (2/144), 8) *Հանձարեղ Հեղինակ* (3/160), 9) *Հերոս* (3/160), 10) *Հրեշ-Արքա* (3/58), 11) *Ղեկավարը* (2/144), 12) «*Մարդը* այդ չուզունե» (2/297), «....աչքերը Կարիքին.... ու *Մարդուն*» (3/91), 13) *Մեծ Հեղինակ* (3/119), 14) «Գազաթնե՛ր *Մտքի* ու *Հանձարի* և *Քերթության* պետե՛ր...» 3/48, 15) *Նաիրյան Մուսա* (3/406), 16) «Տիրանալ գանձերին *Շահի*» (1/413), 17) «Արդյոք ո՞ր *Ոգին* տվեց / Ձեր դեմքին լուսե գծեր» (1/146), 18) *Վարպետ* (3/52), «*Վարպետը* Մահու աշխարհի» (3/77), 19) «Վեր թռավ տեղից *Վետերանը* ծեր» (1/327), 20) *Ուսուցիչ* (3/174):

«Առաջնորդ», «Հերոս», «Թատրոնի Տնօրեն», «Հանձարեղ Հեղինակ», «Մեծ Հեղինակ» բառերն ու կապակցությունները «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիայի կերպարների հավաքական անուններն են, այսինքն՝ պայմանական անձնանուններ: «Առաջնորդ» և «Վարպետ» բառերը «Մահվան տեսիլ»-ում կիրառվում են Դանթեի համար, որին հեղինակն ընտրել էր որպես առաջնորդ, ինչպես Դանթեն իր «Աստվածային կատակերգություն»-ում՝ Վերգիլիոսին:

«Շահ», «Ուսուցիչ», «Վետերան» բառերը ծառայեցված են երևույթների հավաքական անվանմանը: «Մտքի ու Հանձարի գազաթներ», «Քերթության պետեր» կապակցություններով նկատի են առնված համաշխարհային գրականության մեծերը. դրական վերաբերմունքի արտահայտություն են:

Դրական մեկնաբանություն ունեն նաև «Ղեկավար» (Լենին), «Կարմիր Ղեկավար» (Լենին), «Կարմիր Կոմանդոր» (Ստ. Շահումյան), «Նաիրյան Մուսա» (հայոց բանաստեղծների ոգեշնչման աղբյուրը՝ որպես պայմանական գոյ) բառերը և «դու» դերանվան երկու բառաձև («Քո»՝ «Ծիածան» շարքի քնարական հերոսուհին, «Քեզանից»՝ Աստված): Արարչի այլընտրանքային անվանում է «Ոգի»-ն:

Իսկ «չուզունե Մարդը» կապակցության մեծատառն ակնարկում է որոշակի մարդու՝ Լենինին (դա 1927 թ. Ջազեսում բացված Լենինի արձա-

⁵ Կոտորակի գծից ձախ հատորի համարն է, աջ՝ էջը:

նի մասին է): Ասել, սակայն, թե հատկանունացումը հեղինակի համար վերաբերմունքներից միայն դրականի արտահայտությունն է, ճիշտ չի լինի, քանի որ նկատվում են նաև հակառակ դրսևորումներ: Այսպես՝ «Արքա»-ն և «Հրեշ-Արքա»-ն կիրառված են թուրք ջարդարար առաջնորդի համար: «Մահ» և «Ավերք» բառերը վերաբերում են հոների արքա Աթիլային. բացասական վերաբերմունքի դրսևորում են:

Մեր ընտրանքում տեղ են գտել նաև *հեղինակային բառատարբերակներ*, որոնք ընդունված անջատագիր բաղադրյալ հատկանունների կցական կամ գծիկով ուղղագրական տարբերակներն են (*Թեմուրլենկ* (3/107), *Մարամեփք* (3/13), *Չինգիզխան* (3/107), *Առյուծ-Միեր* (3/9), *Ջենով-Օհան* (3/14), *Կարդաշ-Ալի* (2/147)):

2. *Տեղանուն*: Այս իմաստային խմբում առանձնացրել ենք այն «բանաստեղծական» տարածքները, որոնցում կատարվում կամ դեպի որն են ուղղվում քնարական գործողությունները: Դրանք են՝ 1) «մռայլ *անտառ Ահի*» (3/7), 2) «Ճակատագրի որոշած *Անդին*» (1/314), 3) «Մտածումս.... նավարկում է դեպի *Անցյալը*.... դեպի ափը Մահվան *ու Սարսափի...*» (3/51), 4) «Դեպի – *Ապագան*» (1/369), (1/408), «դեպի վառվող *Ապագան*» (1/182), 5) «Դեպի *Արևն* էին գնում ամբոխները խելագարված» (1/362), 6) «Մայրամուտային⁶ *Եզերքը Կապույտ*» (1/45), 7) «Երագում են այն *Երկիրը* հեռավոր....» (1/231), 8) «*Քերթության ու Խոհի* դժվար *Ճանապարհ*» (3/51), 9) «այն *Կայանը* հեռավոր» (1/73), 10) «*Կապույտ Երկրի* բանբեր» (1/86), 11) «*Կապույտի լաբիրինթոսում*» (1/49), «*Լաբիրինթոսում քո Կապույտ*» (1/44), 12) «դեպի *Կարմիր Ապագա*» (1/365), 13) *Կարմիր Ավարայր* (3/52), 14) ««*Հայրենիք* կամ Մահ» դրոշին գրեցի» (3/57), 15) *Հավերժական Կապույտ* (1/98), «կմոտենանք *Հավերժի Կապույտին*» (1/98), 16) *Հավերժը* (1/89), «գնում ենք դեպի *Հավերժը* ամոքիչ» (1/89), 17) Հյուսիս (3/208), «Երբ մրրիկ մի ուրիշ, փրկարար / Շառաչեց Հյուսիսից կենսաբեր» (3/113), 18) «Վարպետը *Մահու աշխարհի*» (3/77), 19) «Օ՛, *Բնություն, օ՛ Մայր*» (3/198), 20) *Մեռած Քաղաք* (1/305), 21) *Սոսկումի ու Մահի* (եզերք) (3/51), 22) *Վարդստան* (1/210), 23) «*Տիեզերական Լաբիրինթոսում*» (1/45), 24) «ես դառնում էի սուրբ *Քաղաքից*» (2/22), 25) «*Քերթության ու Մտքի* լուսե *պարտեզ*» (3/70), 26) «*Քերթության ու Խոհի* դժվար *Ճանապարհ*» (3/51):

Նշված տեղանունները ևս, ինչպես և վերոնշյալ անձնանունները, արտահայտում են թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք: Այս-

⁶ Բանաստղի սկզբում լինելը անորոշ է թողնում «Մայրամուտային» բառի մեծատառով լինել-չլինելը:

պես՝ դրական են գնահատված *Ապագա, Արև, Կարմիր Ապագա, Կարմիր Ավարայր, Հայրենիք, Հավերժ, Հյուսիս, Բնություն, Վարդստան* (= Շիրազ), *Տիեզերական Լաբիրինթոս, Կապույտի Լաբիրինթոս, Քերթության ու Մտքի պարտեզ// Ճանապարհ, (սուրբ) Քաղաք* տեղանունները: Բացասական մեկնաբանություն ունեն *Ահի անտառ, Անցյալ, Մահու աշխարհ, Մահվան ու Սարսափի ափ, (հեռավոր) Կայան, Մեռած Քաղաք, Սոսկումի ու Մահի (եզերք)* տեղանունները: Անորոշ, խորհրդապաշտական գրականությանը հատուկ⁷, տակավին անձանաչելի և չգնահատված եզերքներ են՝ *Անդին, Կապույտ Երկիր, Հավերժական Կապույտ, Հավերժի Կապույտ, Տիեզերական Լաբիրինթոս*:

Դժվար չէ նկատել, որ մեր առանձնացրած տեղանուններից մի քանիսը ժամանականիշ բառեր են, որ «դեպի» կապի հետ միանալու արդյունքում են ստացել տեղանվան իմաստ. իրականում դրանք տեղայնացումներ են ժամանակի մեջ:

3. *Ժամանակի անուն*: Ի տարբերություն անձնանիշ և տեղանիշ բառերի՝ ժամանականիշները հայերենում հատուկ անուն չեն դառնում: Եթե այդպիսիք կան, ապա դրանք տոնանուններ կամ հիշատակի օրերի անուններ են: Մեր ընտրանքի ժամանականուններն են՝ 1) *Այգաբաց* (3/451), «Առաջինը ո՞վ երգեց գովքը *Այգաբացի*» (3/400), «ըղծյալ *Այգաբաց*» (3/449), 2) «երգ *Գալիքի* մասին» (3/95), «ես դարձա *Գալիքի*՝ երգիչ» (3/77), «Կապել եմ կյանքս *Գալիքի* հետ վառ» (1/366), 3) «ապրեն *Կարմիր Ապագա*» (1/373), 4) *Կարմիր Գալիք* (1/370), 5) *Մայրամուտ* (3/489):

Նշված շարքից դրական մեկնաբանությամբ են *Այգաբաց, Գալիք, Կարմիր Ապագա, Կարմիր Գալիք*: Ընդ որում՝ սրանք խորհրդանշական բառեր են՝ պատմական իրադարձությունների զարգացման որոշակի փուլերը մատնանշող. *Այգաբացը* զարթոնքն է խորհրդանշում, իսկ *Գալիքը* և *Կարմիր Ապագան* հեղափոխության ցանկալի ելքը: Իբրև բառընդգծման լրացուցիչ միջոց՝ օրինակներից մեկում մեծատառին ուղեկցում է տրամաբանական շեշտի գրառումը (Գալիքի՜): Ինչ վերաբերում է *Մայրամուտին*, ապա այն գալիքի հետ կապված սպասումների խորտակումն է խորհրդանշում, որն ընդգծված է ինչպես հեղինակային մեծատառով, այնպես էլ ամբողջ բանաստեղծության մեջ տարածված մ-ի բաղաձայնությով:

4. *Այլևայլ*: Այստեղ առանձնացրել ենք իմաստային ընդհանրություն չդրսևորած մյուս հատկանունները, որ հիմնականում մենաբաղադրիչ կամ բաղադրյալ գոյականներ են, երկու դեպքում՝ ածական (Աստվածաընծա – 1/333, Մասնավոր-Սեփական – 2/110. վերջինը գոյականացված է կիրառ-

⁷ Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, հ. 1, Ե. 1973, էջ 49:

ված), մեկ դեպքում՝ դերանուն (Նրա – 1/56): Այսպես՝ 1) *Աստվածաբնծա* (թևեր) (1/333), 2) *Արև* (3/449), *Արև* (3/449), «նա» *դերանվան բառածն* – «ժպիտ-ոսկին *Արևի* – *Նրա*» (1/56), 3) *Լույսի* ու *Խնդության* փարոս (3/70), 4) «Մի հրեշ՝ անունը *Կապիտալ*» (1/403), 5) «աչքերը *Կարիքին*... ու Սարդուն» (3/91), 6) *Կարմիր Հատուցում* (2/151) (= *հեղափոխականների ակնկալած արդարությունը*), 7) *Կարմիր Ուրագան* (3/208) (= *հեղափոխական շարժումը*), 8) «Հին⁸ *Կարոտի* վերջին դող» (1/96), 9) *Կացին արեգնացյալ* (3/450), 10) *Կոմիտե* (2/190), 11) «անարյուն *Հաց*» (3/450), 12) «Հիմնական *Սկզբունքը*, Որ կոչվում է *Մասնավոր-Սեփական*» (2/110), 13) *Հոգիս* (3/410-411), 14) «մեր *Հոկտեմբերը*» (2/167), 15) *Մահ* (1/397), «նույն կարոտը անսփոփ ու անունը – *Մահ*» (1/99), (1/104), 16) «Հայրենիք կամ *Մահ*» դրոշին գրեցի (3/57), 17) *Մտածումի նավ* (3/51), 18) «*Մտածումս*.... նավարկում է դեպի Անցյալը....» (3/51), 19) *Մուտ* (3/70):

Հպանցիկ ակնարկն իսկ ի հայտ է բերում չարենցյան չափածոյում հատուկ կարևորված «ներքին կերպարների» կազմ՝ *հոգի, միտք, արևակերպ կամ հոկտեմբերակերպ հույս, կացինակերպ տազնապ*՝ հոգևոր բովանդակությամբ (տե՛ս ստորև), *կապիտալ* և նրա հետևանք սաստիկ *կարիք*, հին *կարոտ*, *սուտ*, *մահ*: Այս շարքի բառերից շատերի խորհուրդն ընկալելի է առանց հատուկ մեկնաբանության, բայց դրանց կողքին կան նաև այնպիսիք, որ արժևորվում են միայն համատեքստում: Այսպես՝ «*Կարմիր Հատուցումը*» հեղափոխականների ակնկալած արդարությունն է, «*Կարմիր Ուրագանը*»՝ հեղափոխական շարժումը: Աստվածաշնչյան խորհուրդ ունեն նույն բանաստեղծության մեջ տեղ գտած «*անարյուն Հաց*» և «*Կացին արեգնացյալ*» բառակապակցությունները՝ աղերսվելով հաղորդության խորհրդին, ըստ որի՝ հացը Քրիստոսի մարմինն է, զինին՝ նրա՝ մարդկության փրկության համար թափած արյունը⁹: Մի կողմից հիշատակելով Նարեկացուն, մյուս կողմից՝ ակնարկելով աստվածաշնչյան հիշյալ խորհուրդը՝ Ե. Զարենցի քնարական կերպարը փրկության ելք է փնտրում, բայց որ դա լինի առանց արյան՝ «անարյուն Հաց»: Դրա անհնարինության տազնապն էլ ներկայացված է «արեգնացյալ//արեգյալ Կացնի» գեղարվեստական պատկերով:

Որպես կանոն՝ հատկանունները գոյականներ են լինում (ընդունելի է նաև հատկանունների շարքում ներառել նաև որոշ նախադասություններ, ըստ երևույթին՝ վերնագրային բնույթի¹⁰): Ածականը հատկանուն դառնալու դեպքում ենթարկվում է խոսքիմասային անցման՝ գոյականացման:

⁸ Բանաստեղծի սկզբում լինելը անորոշ է թողնում «հին» բառի մեծատառով լինել-չլինելը:

⁹ Աստվածաշունչ մատյան Հին ու Նոր կտակարանների, Ս. Էջմիածին, 2010, էջ 26-28:

¹⁰ St' u Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 473:

Մեր ընտրանքում, սակայն, տեղ է գտել մեկ ածական, որի մեծատառով գրությունը, կարծում ենք, պայմանավորված է սերող բաղադրիչի հատկանուն լինելով (*Աստվածաընծա* թևեր): Նկատելի է, որ Աստծո անունները, այդ թվում՝ դերանվանական, չարենցյան չափածոյում հատկանուն են, որը նորմ է (բացառությամբ՝ դերանվանականի), ուստի այդ շարքը չենք ներառել մեր ընտրանքում:

Հարաբերական նորաբանություններ են նաև այլ մշակույթներից առաջին անգամ հայալեզու գրական տարածք բերված հատկանունները: Այսպես՝ *Ամենտի Երկիր* (1/97), *Ամենտի եզերքը կապույտ* (1/84) (*եգիպտական անդրշիրիմյան եզերք, երբեմն՝ «դժոխք» իմաստով, թեև Ե. Չարենցի գործերում՝ «երկնային կյանք» իմաստն է*), կամ՝ «...կյանքի օվկիանոսը, որ կոչվում է *Սանսար*» (1/42) (*հին հնդկական*), *Երկիրն Ավետյաց*¹¹ (3/7) (*աստվածաշնչյան*):

Հեղինակային բառաստեղծումը իր դրսևորումներն է գտել նաև վերնագրային տարածքում: Դրանցից հեղինակային կազմություն ունեն հետևյալները՝ *«Ամենապոեմ»* (1/387) և *«Դազադաճառ»* (2/241), *«Տեսիլաժամեր»*, *«Չարենց-Նամե»* (1/411) (հայտնի «Շահնամե»-ի համաբանությամբ, որի ստուգաբանությունն է՝ «շահերի գիրք»), *«Շոգեզալուստ»* (2/18), *«Կես-գիշերային էսքիզ»* (2/347):

Վերադառնալով ներածական մասում նշված հարցին՝ փորձենք բերված հատկանուններից առանձնացնել նորաբանական արժեք ունեցողները՝ առաջնորդվելով նոր հասկացություն ունենալու սկզբունքով: Կարծում ենք՝ մեր ընտրանքի մեծ մասը նորաբանություն է, թեև դրանցից շատերը դիպվածային են. չեն կարող ընդհանրանալ և ունենալ համալեզվական բնույթ: Այսպես՝ «Ղեկավար» բառը բերում է «Լենին» հասկացությունը, «Մահ», «Ավերք» բառերը՝ «Աթիլա», «Վարդստան»՝ «Շիրազ», «Կարմիր Հատուցում»՝ «հեղափոխության արդյունքում արդարություն հաստատելու պահը» և այլն: Քանի որ ավելի քիչ են ոճային-վերաբերմունքային, ընդգծող նշանակությամբ, ոչ նորաբան հատկանունները, ուստի առավել նպատակահարմար ենք գտնում փակ շարքով ներկայացնել միայն դրանք: Այսպես՝ 1) «Գագաթնե՛ր Մտքի ու Հանճարի և Քերթության պետե՛ր...» (3/48), 2) «Տիրանալ գանձերին Շահի» (1/413), 3) «Մտածումս.... նավարկում է դեպի *Անցյալը....*» (3/51), 4) *Հավերժը* (1/89), «գնում ենք դեպի *Հավերժը* ամոքիչ» (1/89), 5) «Օ՛, *Բնություն, օ՛ Մայր*» (3/198), 6) *Աստվածաընծա* (թևեր) (1/333), 7) «Մի հրեշ՝ անունը

¹¹ «Ավետյաց Երկիր» տեղանվան հետ կապված թողնում ենք որոշակի կասկածի տեղ:

Կապիտալ» (1/403), 8) «աչքերը Կարիքին... ու Սարդուն» (3/91), 9) «Հին Կարոտի վերջին դոդ» (1/96), 10) Կոմիտե (2/190), 11) Հոգիս (3/410-411), 12) Մահ (1/397), (1/99), (1/104), (3/57), 13) Սուտ (3/70), 14) «Լույսի ու Խնդության փարոս» (3/70):

Ամփոփելով նշենք, որ հեղինակային մեծատառերի քննությունը լեզվաբանական հետազոտության համար ոլորտ է: Արժի այն դարձնել հատկանվանագիտության և նորաբանագիտության առանձին ենթաբաժին, քանզի հեղինակային հատկանունացումը անհատական ոճի ինքնատիպ դրսևորումներից է, հեղինակի ընդգծված հույզերի արտահայտիչը և բառաստեղծման տեխնիկայի կողմերից մեկը՝ ոչ անկարևորը:

Ջ. Ա. Мелконян. «*Авторские имена собственные*» в поэзии *Егисше Чаренца*. - Изучение авторских имен собственных в лингвистических публикациях пока что не нашло особого внимания. Однако было бы уместным иметь для этой цели отдельную отрасль в ономастике и в неологии, так как этот феномен является особым типом проявления индивидуального стиля и словообразовательной техники.

В статье представлены авторские имена собственные армянского поэта Е. Чаренца, выведенные из поэтических произведений автора.

Общее количество таких слов дошло до 70-и, в среди которых были отмечены 4 тематические групп: 1) антропонимы, 2) топонимы, 3) хрононимы, 4) разные имена.

Ключевые слова: авторские имена, имена собственные, поэзия, *Егисше Чаренц*.

H. A. Melkonyan. “*Authorial proper names*” in poetry *Eghiche Charents*. - In linguistic publications the study of authorial proper names has not received much attention. However, it would be appropriate to have for this purpose a separate field in onomastics and in neology, since this phenomenon is a special type of manifestation of individual style and word-building technique.

In the article authorial proper names of the Armenian poet E. Charents are presented, taken from the author's poetic works.

The total number of such words came to 70, among which are observed 4 thematic groups: 1) anthroponyms, 2) toponyms, 3) chrononyms, 4) other names.

Keywords: authorial names, proper names, poetry, *Egishe Charents*.

**ՀԱՅԵՐԱՆՔԸ ՉՈՐՄ ԲՆՈՒՑԹԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՄԵՐԵՆԻ, ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
(ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)**

Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Գ. Գրիգորյան

Բանալի բառեր՝ հնչերանգ, փորձառական ուսումնասիրություն, շեշտ, ձայնահատկանիշներ

Խոսքի հնչերանգը անչափ կարևոր է հաղորդակցվելիս: Հայտնի է, որ հնչերանգը լեզվի այն միջոցներից է, որ մասնակցում է նախադասության ձևավորմանը հնչյունական շղթայում: Դա մեղեդու, տեմբրի, խոսքի արագության, շեշտի արտահայտման միասնությունն է, որը հաղորդակցման գործընթացում ծառայում է տարբեր իմաստներ արտահայտելու համար:

Ավելի նեղ իմաստով հնչերանգը խոսքի շղթայի ռիթմիկական մեղեդային կառուցվածքն է, որը ծայնի բարձրացումն ու իջեցումն է, և որը տեղի է ունենում շեշտակիր և անշեշտ վանկերի հաջորդական հերթագայությամբ:

Հնչերանգը կատարում է հետևյալ գործառույթները՝

- 1) Տարբերակում է արտաբերված խոսքի հաղորդակցական տեսակը՝ հարցում, բացականչություն, հրաման և այլն:
- 2) Տարբերակում է արտահայտության մասերը (հնչաշարույթներ)՝ ըստ իմաստային կարևորության:

3) Ունկնդրի վրա ազդելու ուժեղ գործոն է՝ հուզական և գեղագիտական առումներով:

Մեր կողմից իրականացված փորձառական ուսումնասիրության նպատակն է համեմատել հայերենի, ռուսերենի և անգլերենի հնչերանգները տարբեր բնույթի նախադասություններում, համեմատության մեջ արդյունքներով գտնել հնչերանգային ունիվերսալիաներ՝ ներառելով տրամաբանական շեշտի առկայությունը:

Այդ նպատակով ընտրել ենք տարբեր բնույթի քսան նախադասություն, որոնք թարգմանվել են ռուսերեն և անգլերեն: Հաղորդավարները կարդացել են նախադասությունները, որոնք ծայնագրվել են: Ձայնագրությունները ներածվել են համակարգիչ և հատուկ ծրագրի միջոցով վերափոխվել են WAV կամ MP3 տեսակի, որպեսզի ծայնի վերլուծության

համակարգչային ծրագիրը կարողանա ընկալել ու կարդալ: Այնուհետև դրանք մտցվել են **Պռաատ**¹ ծրագրի մեջ, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության և համադրության համար: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել են հաշվարկներ և տվյալների մշակում:

Վերլուծվել է ավելի քան 3600 [(20+20+20)x3x20] միավոր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն նախադասությունները (5 պատմողական, 5 հարցական, 5 բացականչական և 5 հրամայական բնույթի)՝ երեք հաղորդավարների ընթերցմամբ: Ձայնագրությունները կատարվել են ոչ մասնագիտական լաբորատորիայում:

Ուսումնասիրվել են 11 ձայնահատկանիշներ՝

Հաճախականություն.

Հնչադասության սկզբի հաճախականությունը,

Հնչադասության առավելագույն հաճախականությունը,

Հնչադասության նվազագույն հաճախականությունը,

Հնչադասության հաճախականության ձայնածավալը:

Ուժգնություն.

Հնչադասության առավելագույն ուժգնությունը,

Հնչադասության նվազագույն ուժգնությունը,

Հնչադասության ուժգնության ձայնածավալը,

Միջուկային վանկի առավելագույն ուժգնությունը:

Տևողություն.

Հնչադասության տևողությունը,

Միջուկային վանկի տևողությունը,

Հնչադասության վանկի միջին տևողությունը:

Ուսումնասիրությունը կատարելիս օգտագործել ենք հետևյալ ծրագրերը՝

ա) Word – նախադասությունների կազմում՝ հաղորդավարներին ներկայացնելու՝ նախադասությունները կարդալու համար,

բ) Voice Memos - ձայնագրում,

գ) Excel – տվյալների մուտքագրում, միջինացում, աղյուսակների կազմում:

¹ ՊՐԱԱՏ ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչամիավորների՝ հնչյունների, հնչաբառերի, հնչադասությունների և հնչախոսքի տևողությունը և ուժգնությունը, հիմնական տոնի հաճախականությունը, ֆորմանտները, տեսնել սպեկտրերը և այլ ֆունկցիաներ:


դ) MP4 – ծայնագրությունների առցանց փոխակերպում wav կամ MP3 տեսակների,

ե) Praat – ծայնագրությունների վերլուծություն,

զ) Microsoft Office PowerPoint – ցուցադրություն:


Զայնագրությունները Պռաատ ծրագիրը ներմուծելուց հետո տեսանելի են դրանց հնչապատկերները, որոնք հնարավոր է թվայնացնել, այսինքն՝ ստանալ յուրաքանչյուր կետի թվային մեծությունները և կատարել համապատասխան հաշվարկներ:


Ստորև բերված հնչապատկերները երեք լեզուներով արտահայտված պատմողական բնույթի նույն նախադասության («Արևը փայլում է», «Солнце сияет», The sun is shining) պատկերներն են: Համեմատելիս նկատելի են հաճախականության և ուժգնության կորերի նմանությունները:



Արևը փայլում է: Солнце сияет. The sun is shining. նախադասությունների հնչապատկերները:

Հիմնական տոնի հաճախականության և ուժգնության գծապատկերները բացականչական բնույթի նախադասություններում ևս նմանություններ ունեն արտաքինապես:





Օ՛, Այս ո՛ւմ եմ տեսնում: О, кого я вижу ! О, whom I see ! նախադասությունների
հնչապատկերները:

Տեսնենք, թե թվային տվյալներով ինչ ցուցանիշներ են գրանցվել *Օ՛, այս
ո՛ւմ եմ տեսնում: О, кого я вижу ! О, whom I see !* նախադասությունների
դեպքում:

Աղյուսակ 1

ում кого whom	Օ՛, այս ում եմ տեսնո՛ւմ				О, кого я вижу!			Oh, whom I see!					
Զայնա- հատկա- նիշ ²	հաղ.1	հաղ.2	հաղ.3	միջ.	հաղ. 1	հաղ.2	հաղ.3	միջ.	հաղ. 1	հաղ.2	հաղ.3		
1	202.8	209	195	202	201	235	undef.	218	293	242	259	264	
2	311	299	262	275	310	313	282	301	311	296	294	300	

² Աղյուսակի առաջին սյունակի թվերը համապատասխանում են ստորև ներկայացված
ծայնահատկանիշներին.

1. Հնչադասության սկզբի հաճախականությունը,
2. Հնչադասության առավելագույն հաճախականությունը,
3. Հնչադասության նվազագույն հաճախականությունը,
4. Հնչադասության հաճախականության ծայնածավալը,
5. Հնչադասության առավելագույն ուժգնությունը,
6. Հնչադասության նվազագույն ուժգնությունը,
7. Հնչադասության ուժգնության ծայնածավալը,
8. Միջուկային վանկի առավելագույն ուժգնությունը,
9. Հնչադասության տևողությունը,
10. Միջուկային վանկի տևողությունը,
11. Հնչադասության վանկի միջին տևողությունը:

3	127	137	113	125	40	41	46	42	143	125	192	153
4	2.4	2.1	2.3	2.2	7.75	7.6	6.1	7	2.1	2.3	1.5	1.9
5	75.8	83	74	77	75.8	80	76	77	76.9	83	75	78
6	44	53	40	45	48.4	48	43	46	47	48	41	45
7	31.8	30	34	31	27.4	32	33	30	29.9	35	34	32
8	71.5	79	64	71	75.8	77	76	76	71.2	79	69	73
9	1.96	1.65	1.75	1.7	1.74	1.46	1.3	1.5	1.45	1.5	1.56	1.5
10	0.2	0.15	0.17	0.17	0.18	0.3	0.2	0.2	0.2	0.16	0.3	0.2
11	0.3	0.2	0.29	0.2	0.29	0.2	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3

Աղյուսակից երևում է, որ բոլոր ձայնահատկանիշների միջինացված տվյալները երեք լեզուներում մեծ տարբերություններ չեն տալիս, բացառություն է կազմում հնչադասության հաճախականության ձայնածավալը (2.2-7-1.9):

Աղյուսակ 2

	ՊԱՏՄՈՂԱԿԱՆ				ՀԱՐՑԱԿԱՆ				ՀՐԱՄԱՑԱԿԱՆ				ԲԱՑԱԿԱՆԱԶԱԿԱՆ			
	Հայ	Ռուս	Անգ		Հայ	Ռուս	Անգ		Հայ	Ռուս	Անգ		Հայ	Ռուս	Անգ	
1	204	215	199	206	218	196	196	203	181	199	225	201	209	200	216	208
2	271	291	286	282	289	286	293	289	283	278	273	287	297	300	291	296
3	96	90	86		92	95	105		99	90	81		89	83	86	
4	3.4	3.6	4		3.9	3.6	3.1		2.9	3.5	4		3.7	4.2	4.2	
5	77	76	77.5	76	77	77	78	77	77	76	78	77	77	77	78	77
6	44	40	43		46	44	43		45	44	43		43	42	42	
7	33	35	34.5		30	33	34		32	32	34		33	34	35	
8	73.5	71	72	72	73	74	83	76	72	73	75	73	73	73	74	73
9	3	3.4	3.4	Հ<Ռ<Ա	1.9	2.2	2.3	Հ<Ռ<Ա	1.9	2.1	2.3	Հ<Ռ<Ա	2.1	2.5	2.5	Հ<Ռ<Ա
10	0.21	0.25	0.3		0.14	0.2	0.18		0.26	0.24	0.24		0.23	0.21	0.25	
11	0.18	0.2	0.2		0.17	0.18	0.2		0.22	0.19	0.23		0.2	0.23	0.27	

Միջինացումներից հետո վերջնական աղյուսակը ստանալուց հետո (աղյուսակ 2) հանգեցինք հետևյալ եզրակացությունների՝ համաձայն հաճախականության, ուժգնության և տևողության տվյալների:

Հնչադասության սկզբի հաճախականությունը (առաջին ձայնավոր) բոլոր լեզուներում բոլոր 4 տեսակի նախադասությունների դեպքում ավելի փոքր է, քան հնչադասության առավելագույն հաճախականությունը: Հնչադասության առավելագույն հաճախականության և նվազագույն հաճախականության ձայնածավալը, այսինքն՝ հարաբերությունը, տատանվում է 2.9/4.2 սահմաններում 3 լեզուներում:

Հնչադասության առավելագույն ուժգնությունը՝ ըստ փորձառական տվյալների վերջնական արդյունքների, գերազանցում է միջուկային վանկի առավելագույն ուժգնությունը, որը նշանակում է, որ պարտադիր չէ, որ միջուկային վանկը լինի ամենաուժգինը:

Հնչադասության առավելագույն ուժգնության և նվազագույն ուժգնության տարբերությունը, այսինքն՝ ձայնաժավալը, բոլոր լեզուներում կազմում է միջինը 33 դեցիբել:

Միջուկային վանկի տևողությունը հիմնականում գերազանցում է հնչադասության վանկի միջին տևողությանը: Պատմողական և հրամայական բնույթի նախադասություններում այս օրինաչափությունը գործում է հարյուր տոկոսով, իսկ հարցական և բացականչական նախադասությունների դեպքում՝ հիսուն:


Նույն ինֆորմացիան 3 լեզուներով փոխանցելիս ամենից արագ փոխանցվում է հայերենի միջոցով, հետո՝ ռուսերենի, և վերջում անգլերենի: Սա նշանակում է, որ տևողության ամենից փոքր տվյալները գրանցվել են հայերենի համար, ամենից մեծ՝ անգլերենի, միջին դիրք է գրավում ռուսերենը:

Պատմողական՝	Հ<Ռ=Ա ³
Հարցական՝	Հ<Ռ<Ա
Հրամայական՝	Հ<Ռ<Ա
Բացականչական՝	Հ<Ռ<Ա

Բացականչական նախադասություններում, եթե միջուկային վանկը համընկնում է բացականչական բառի վանկի հետ, միջուկային վանկի տևողությունը գերազանցում է հնչադասության վանկի միջին տևողությանը:


Հավելված

Ստորև ներկայացված են մի քանի հնչամիավորների պատկերները:




1 հաղորդավարի՝ 3 լեզուներով 20 նախադասությունների հնչապատկերը


³ Հ- հայերեն, Ռ – ռուսերեն, Ա - անգլերեն



Վաղ առավոտյան ես այցելեցի ընկերոջս նախադասության հնչապատկերը



Խոստացի՛ր բառի հնչապատկերը



Խոստացի՛ր բառում **օ** հնչյունի հնչապատկերը

Г. Г. Григорян. Интонация в 4-х типа предложениях в сравнении трех языков (армянский, русский, английский) (экспериментальное исследование) - Цель нашего экспериментального исследования - сравнить интонацию армянского, русского и английского языков в разных предложениях, выявить некоторые тональные универсалии, установить общие черты интонации, включая логическое ударение. 11 звуковых характеристик были изучены с помощью звуковой программы PRAAT. Более 3600 единиц были проанализированы в армянском, русском и английском предложениях, что позволило прийти к разным выводам и заключениям.

Ключевые слова: *интонация, экспериментальное исследование, стресс, звуковые характеристики.*

G. G. Grigoryan. The intonation in 4-character sentences in comparison to 3 languages (Armenian Russian English) (experimental research) - The purpose of our experimental study is to compare the intonation of Armenian, Russian and English languages in different sentences, to find out some tonal universals, to establish commonalities in intonation including logical stress. 11 sound characteristics were studied through PRAAT sound program. Over 3600 units were analyzed in Armenian, Russian and English sentences which allowed to come to different conclusions.

Key words: *intonation, experimental study, stress, sound characteristics.*

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ

ԿԱՐԵՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի ժողովրդի ինքնության պահպանման համար չափազանց կարևոր է մայրենի լեզվի իմացությունը, պահպանումն ու տարածումը: Նման հրաշալի նախաձեռնությամբ է հանդես եկել Դ. Գյուրջինյանը: Լույս է տեսել ճանաչված լեզվաբանի «Հանուն մեր նյարդերի» գիրքը, որտեղ հեղինակը ներկայացնում է իր մտահոգությունները համացանցում, հեռուստատեսությամբ, մամուլում, առօրյա կյանքում գործառույթ լեզվի վերաբերյալ, հանգամանալից անդրադառնում հայերենի արդի խնդիրներին:

Հետաքրքրական է գրքի ստեղծման պատմությունը: Դեռևս երեք տարի առաջ հեղինակը, զայրացած հեռուստատեսությամբ ցուցադրվող հայկական մի սերիալի դերասանների խոսքից, ֆեյսբուքյան իր էջում գրառում է անում: Գրառումը շատ մեծ արձագանք է ստանում: Այս առաջին գրառմանը հետևում են ոչ պակաս և ուշագրավ մյուս գրառումները: Ի վերջո հեղինակը որոշում է ստեղծել արդի հայերենի խնդիրներին նվիրված գրառումների շարք՝ «Հանուն մեր նյարդերի» խոսում խորագրով:

Առաջին հայացքից փոքրիկ մի գրքույկ է, որը, սակայն, շատ մեծ առաքելություն ունի: Գրքում տեղ է գտել երկու հարյուր գրառում՝ նվիրված հայերենի ուղղագրությանը, ուղղախոսությանը, բառապաշարին, բառերի ընտրությանը, ձևաբանական և շարահյուսական զանազան խնդիրներին: Ըստ էության հեղինակն անդրադարձել է լեզվական հնարավոր բոլոր սխալներին: Ամեն օր հեռուստատեսությամբ, մամուլում, համացանցում ականատես ենք լինում հայերենի նկատմամբ ոտնձգությունների և լեզվական մեղանջումների: Հեղինակը հորդորում է «հանուն մեր նյարդերի և հայերենի» գերծ մնալ օտարաբանություններից, փոխարենը գործածել հայերեն գեղեցիկ և ոչ պակաս հնչեղ բառերը: Օտար լեզուների իմացությունը, իհարկե, խրախուսվում է, բայց ոչ հայերենի փո-

խարեն: Պետք է խուսափել բառերի սխալ գործածություններից, դրանք երբեմն նույնիսկ զավեշտի են վերածվում: Հեղինակը ներկայացնում և քննում է Ազգային ժողովի նիստերի ընթացքում, լրագրողների խոսքում հանդիպող նմանատիպ օրինակներ: Որոշ գրառումներում քննվում են արտասանական խնդիրները: Հեղինակը նույնիսկ հումորային անուններ է տվել արտասանական սխալներով լի լեզվին՝ «ծտերեն», «նանայերեն»:

Սխալները ներկայացվում են հետևյալ կերպ. հեղինակը քննում է լեզվական խնդիրը, այնուհետև հաջորդում է լուծումը: Լեզվաբանի սուր հայացքից չեն վրիպել նաև մեր գրական լեզվի երկու տարբերակներին՝ առնչվող խնդիրները, ինչպես նաև լեզվի պահպանման և զարգացման, ինչպես նաև լեզվաքաղաքականության հարցերը:

Հեղինակը հաշվի է առել ցանկացած մանրուք. հետևողական ձևով ընտրվել են ոչ միայն թեմատիկ և բովանդակային հարցերը, այլև դրանք ներկայացնելու միջոցները: Այսպես, օրինակ, նորմատիվ և հանձնարարելի ձևերը գրված են գլխատառերով, որ անմիջապես գրավեն ընթերցողի ուշադրությունը և ամրապնդվեն հիշողության մեջ: Իսկ մյուս կողմից՝ սխալ ձևերը հատուկ ձևով չեն ընդգծվել, որ առանձնապես ուշադրություն չգրավեն և չփոթնունք չառաջացնեն:

Աշխատանքը գրված է մտերմիկ ոճով, գրույցների ձևով, հետևաբար՝ հեղինակը փորձել է հնարավորինս զերծ մնալ նեղ մասնագիտական բառապաշարից, բարդ տերմիններից և խիստ պաշտոնական ոճից: Աշխատանքի շահեկան կողմերից մեկը գրքում տեղ գտած հումորն է. գրեթե բոլոր գրույցները համեմված են նուրբ հումորով, որն էլ գրավում է ընթերցողի ուշադրությունը և հեշտացնում լեզվական խնդիրների ընկալումը:

Յուրաքանչյուր գրույցի վերջում հեղինակը նշում է ֆեյսբուքյան հրապարակման օրը: Սա հնարավորություն է տալիս ընթերցողին դիտարկել գրառումը հասարակական-քաղաքական համատեքստում: Չէ՞ որ դրանցից շատերն անդրադառնում են երկրում տիրող հասարակական-քաղաքական իրադարձություններին՝ լեզվական տեսակետից: Այս առումով ուշագրավ են, օրինակ, թավշյա հեղափոխության օրերին կատարված գրառումները:

Ջրույց-գրառումները ներկայացվում են ոչ թե խմբավորված՝ ըստ լեզվական մակարդակների կամ խնդիրների, այլ ըստ հրապարակման հաջորդականության: Յուրաքանչյուր գրառում ունի հետաքրքրական վերնագիր, ինչպես, օրինակ՝ «Հոգի և հոգ», «Պատրմի դասը», «Թռանք», «Բառախուզ» և այլն:

Վերջին գրառումը՝ «Շնորհակալություն» վերնագրով, շնորհակալական խոսք է՝ ուղղված ընթերցողներին, ինչպես նաև այն մարդկանց, որոնք իրենց ներդրումն ունեն գրքի երևան գալու գործում:

Վերնագրերը բավական ընդգրկուն են և արտացոլում են տվյալ գրառման ողջ բովանդակությունը: Հետևաբար՝ ընթերցողը հեշտությամբ կարող է գտնել իրեն հետաքրքրող լեզվական խնդիրն նվիրված գրառումը: Ինչ վերաբերում է գրքի փոքր ծավալին, ապա նշենք, որ այն շատ հարմար է առօրյա գործածության համար: Հեղինակն ընտրել է նյութը ներկայացնելու սեղմ տարբերակ: Ծավալուն և խրթին գրառումներով չի ծանրաբեռնում ընթերցողի միտքն ու ուշադրությունը: Կարծում ենք՝ այս գրքույկն իր արժանի տեղը կգտնի ընթերցողների սեղանին:

Գիրքը հասցեագրված է ընթերցող լայն հասարակությանը: Այն կարող է օգտակար լինել թե՛ լրագրողներին, թե՛ դպրոցականներին և ուսանողներին, թե՛ ուսոցիչներին և դասախոսներին:

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. Սարգսյան

SCIENCE NEWS.

2019թ. հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար «Հնչերանգը 4 բնույթի նախադասություններում՝ 3 լեզուների համեմատությամբ (հայերեն, ռուսերեն, անգլերեն)» թեմայով: Ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի գիտաշխատող Գ. Գրիգորյանը կարևորեց խոսքի հնչերանգի դերը հաղորդակցման գործընթացում և հնչերանգն անվանեց լեզուների երաժշտություն: Նա ներկայացրեց իր փորձառական հնչյունաբանական հետազոտությունը, որի նպատակն է համեմատել հայերենի, ռուսերենի և անգլերենի հնչերանգները տարբեր բնույթի նախադասություններում: Ի դեպ, սա առաջին հետազոտությունն է, որ իրականացվել է 3 լեզուների նկատմամբ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, մասնավորապես ձայնի վերլուծության համակարգչային նոր ծրագրերի օգտագործմամբ:

Սկզբում խոսվեց հնչերանգի՝ որպես խոսքի շղթայի ռիթմիկ մեղեդային կառուցվածքի մասին, նշվեց, որ հնչերանգը ձայնի բարձրացումն ու իջեցումն է, շեշտակիր և անշեշտ վանկերի հաջորդական հերթագայությունը: Դա մեղեդու, տեմբրի, խոսքի արագության, շեշտի արտահայտման միասնությունն է:

Փորձառական հնչյունաբանական մասի նկարագրության ժամանակ բանախոսը նշեց, որ ուսումնասիրվել են 14 ձայնահատկանիշներ՝ հաճախականության, ուժգնության և տևողության վերաբերյալ: Ընտրվել են 4 բնույթի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասություններ, որոնք թարգմանվել են ռուսերեն և անգլերեն: Հաղորդավարները կարդացել են նախադասությունները, որոնք ձայնագրվել են և ներածվել համակարգիչ՝ ձայնի վերլուծության «Պռաատ» ծրագրի մեջ: Կատարվել են հաշվարկներ և տվյալների մշակում, որից հետո նշվել են օրինաչափություններ և արվել եզրահանգումներ: Տրվեցին հարցեր, որոնց պատասխանեց բանախոսը:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը՝ նշելով փորձառական հետազոտությունների կարևորությունը և նոր տեխնոլոգիաների օգտագործումը կիրառական լեզվաբանության բնագավառում:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ս.թ. հունիսի 19-ին տեղի ունեցավ կլոր սեղան – քննարկում՝ նվիրված հայոց լեզվի արդի խնդիրներին: Քննարկմանը մասնակցեցին ակադեմիական և բուհական հաստատությունների ներկայացուցիչներ, մտավորականներ: Բացման

խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը, որն առաջարկեց լեզվի խնդիրներն արծարծելիս անել առաջարկություններ, նշել խնդիրների լուծման ուղիներ: Հայոց լեզվին առնչվող տարբեր խնդիրների շուրջ ելույթներ ունեցան ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու.Սուվարյանը, ԳԱԱ թղթակից անդամներ Ա.Սարգսյանը, Ա.Դոլուխանյանը, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Յու.Ավետիսյանը, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ.Սուքիասյանը, լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Ջ.Բառնասյանը և այլք: Քննարկմանը մասնակցում էր և ելույթ ունեցավ նաև ամերիկահայ մտավորական Հ. Այնթապյանը:

Միջոցառման ընթացքում դրականորեն գնահատվեց լեզվի ինստիտուտին կից գործող Լեզվի երտասարդ պաշտպանների խորհրդի գործունեությունը. խորհրդի համակարգող Մ. Սարգսյանը ներկայացրեց կատարված աշխատանքները: Լեզվի երտասարդ պաշտպաններին հավաստագրեր հանձնեցին Յու.Սուվարյանը, Ա.Սարգսյանը և Հ.Այնթապյանը:

Տեղի ունեցավ նաև Հ.Այնթապյանի և Ա.Սարգսյանի հեղինակակցությամբ լույս տեսած «Անհարկի յաճախակի գործածուող օտար բառերու հայերէն համարժէքներու բառարան» գրքի շնորհանդեսը:

2019 թ. սեպտեմբերի 27-29-ին Գյումրիում կայացավ «Շիրակի պատ-

մամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով 10-րդ հոբելյանական միջազգային գիտաժողովը: Մասնակիցների թվում էին ավելի քան 120 գիտնականներ ՀՀ-ից և 25-ը արտասահմանյան 10 երկրներից:

Լսվեցին զեկուցումներ պատմությունից, ազգագրությունից, հնագիտությունից, լեզվաբանությունից, արվեստից և ճարտարապետությունից: Հոբելյանական գիտաժողովն անցավ ամենաբարձր մակարդակով:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Հ. Մեսրոպյանը, Ա. Վարդանյանը, Հ. Խաչատրյանը, Ջ. Բառնասյանը, Հ. Թադևոսյանը, Լ. Ղամոյանը, Հ. Սուքիասյանը և Հ. Հովհաննիսյանը:

Սույն թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հյուրընկալվեց Միլանի պետական համալսարանի բանասիրության և լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր, հայագետ Անդրեա Սկալան: Հանդիպումը անցավ ջերմ բարեկամական մթնոլորտում: Պրոֆ. Ա. Սկալան համառոտ պատմեց ամբիոնում կատարվող հետազոտական ուղղությունների, ինչպես նաև հայագիտությանն առնչվող իր վերջին ուսումնասիրությունների մասին՝ նշելով, որ դրանցում իրենց ուրույն տեղն ունեն հայերենի բարբառներին նվիրված հետազոտությունները: Ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը, կարևորելով միջազգային գիտական կապերը, ներկայացրեց

ինստիտուտի գիտական գործունեության այն ուղղությունները, որոնց գծով կարելի է համագործակցել: Հանդիպման ավարտին նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Միլանի պետական համալսարանի բանասիրության և լեզվաբանության ամբիոնի միջև համագործակցություն սկսելու վերաբերյալ:

2019 թ. նոյեմբերի 7-8-ը Աղվերա-նում կայացավ հայերենագիտական գիտաժողով՝ նվիրված հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներին, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության գիտական տարբեր կենտրոններ ներկայացնող 22 հետազոտողներ: Նպատակն էր խթանել հայերենագիտության զարգացումը, ի մի բերել և գիտական շրջանառության մեջ դնել նորագույն ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև կազմակերպել այս ոլորտի մասնագետների փորձի փոխանակում:

Գիտաժողովը մեկնարկեց ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանի բացման խոսքով, որ մասնավորեց գիտաժողովի և՛ կենտրոնաձիգ, և՛ տարածական ուժը, հատկապես հայերենագիտության՝ դեպի միջազգայնացում ուղղվածությունը: Տնօրենն իր ելույթում շնորհակալության ջերմ խոսքեր ասաց համաժողովի աջակից Հայագիտական ուսումնասիրությունները

ֆինանսավորող հայագիտական հիմնադրամին:

Գիտաժողովը քննարկումների հարթակ էր Հայաստանի Հանրապետության տարբեր համալսարաններից, գիտական կենտրոններից ժամանած մասնագետների համար: Ժամանակագրական տեսանկյունից ընդգրկում էր վաղնջահայերենից մինչև լեզվի նորագույն շրջանի ուսումնասիրությունները: Գիտաժողովի նիստերում լսվեցին 22 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին հայոց լեզվի պատմության զարգացման հիմնական ուղղություններին, գիտական նորություններին ու մեթոդաբանությանը, արտացոլում էին հայոց լեզվի ուսումնասիրության արդի մակարդակը:

Ջեկուցումների մեծ մասը նվիրված էր բարբառային հնաբանությունների հարցերին, հայերենի բարբառների բառապաշարում գործող լեզվամտածողության տարբերակային արտահայտությունների դրսևորումներին, Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունական առանձնահատկություններին (Վ. Կատվալյան, Հ. Խաչատրյան, Ա. Վարդանյան, Ջ. Բառնասյան):

Ջեկուցումների մի ամբողջ շարք նվիրված էր գրավոր հուշարձանների լեզվական և բանասիրական քննությանը, դիտարկումներ եղան դասական հայերենի բարբառների վերաբերյալ (Ս. Գրիգորյան, Հ. Թադևոսյան, Վ. Խաչատրյան): Հեղինակները բնագրագիտական հետազոտությամբ պարզում էին նշված աղբյուրների ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, նախօրինակների և լեզ-

վական առանձնահատկություններին առնչվող հարցեր:

Հետաքրքիր էին հայոց ցեղանուններին և հայոց էպոսի մի քանի անձնանունների քննությանը վերաբերող զեկուցումները (Ա. Պետրոսյան, Ա. Ղարիբյան):

Հայոց լեզվի պատմության նախորդ փուլերի բառապաշարի ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում են Լ. Հովհաննիսյանի Լ. Ղամոյանի զեկուցումները: Աստվածաշնչի հայերեն թարգմանության հարցի շուրջ ուշագրավ դիտարկումներ ներկայացրեց Գ. Մխիթարյանը:

Լայնորեն քննարկվեցին պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայերենի և այլ լեզուների շփումների ու փոխհարաբերությունների հարցերը (Տ. Սիրունյան):

Բառաքնությանն ու ստուգաբանությանն էին նվիրված Ն. Սիմոնյանի, Մ. Քունունցի և Հ. Ջաքարյանի զեկուցումները:

Արդի հայերենին նվիրված զեկուցումները ևս աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ՝ տերմինաբանական դիտարկումներ (Ս. Պապիկյան), հայերենի բառակազմության խնդրահարույց հարցեր (Մ. Սարգսյան), գրական հայերենի նորմավորման հարցեր (Հ. Սուքիասյան), հուշագրության լեզվակառուցվածքային հարցեր (Ա. Գալստյան), համակարգչային լեզվաբանությանն առնչվող գրաբարի էլեկտրոնային պատմական բառարանի կազմության սկզբունքների քննություն (Ֆ. Հակոբյան):

Նիստերն ընթանում էին բուռն քննարկումներով, կարծիքների և տեսակետների արծարծումով:

Ամփոփելով գիտական երկօրյա աշխատանքը՝ Վ. Կատվայանն իր խոսքում նշեց, որ լեզվի ինստիտուտը հատուկ ուշադրություն է դարձնում հանրապետության բուհական տարբեր ամբիոնների հետ գիտամշակութային հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը, նա շեշտեց նաև հայերենագիտությանը նվիրված նյութերի ուսումնասիրության ու դրանց արդյունքները գիտական լայն շրջանակներին հասու դարձնելու կարևորությունը:

Այսպիսով, կարելի է արձանագրել հետևյալը.

ա) Աղվերանում կայացած հայերենագիտական գիտաժողովը, ամփոփելով հայերենագիտության ասպարեզում տարվող աշխատանքների արդյունքները, ակնհայտ դարձրեց այն փաստը, որ զգալիորեն աճել է հետազոտողների գիտական հետաքրքրությունը հայերենի նկատմամբ:

բ) Բացահայտեց հայագիտության հետագա առաջընթացի հեռանկարները:

դ) Ցույց տվեց, որ ներկայումս հայոց լեզուն ուսումնասիրվում է իր ժամանակագրական, տարածական ու գործառական տարբերակների ամբողջությամբ՝ լեզվաբանական տարբեր գիտակարգերի և ուղղությունների հայեցակետից:

Նոյեմբերի 29-ին ԳԱԱ լեզվի ինստիտուտում կայացավ հայագիտական այս կարևորագույն կենտրոնի լեզ-

վաբանների գիտագործնական հանդիպումը մայրաքաղաքի դպրոցների հայոց լեզվի ուսուցիչների հետ: Ներկա էին նաև ԵՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոսներ:

Ողջունելով լեզվաբանների հետ հանդիպման եկած ուսուցիչներին՝ ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը նախ ներկայացրեց ինստիտուտի տարբեր բաժիններում իրականացվող աշխատանքները, ապա նաև խիստ կարևորեց նմանատիպ հանդիպումներ կազմակերպելու անհրաժեշտությունը, քանզի հանդիպման նպատակը ոչ միայն ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ դպրոցում հայերենի դասավանդման խնդիրները, առկա դժվարություններն ու թերությունները ներկայացնելն է, այլև միասնաբար լուծման ուղիների փնտրելն ու ջանադիր աշխատանքով իրականացնելը:

Լեզվաբանները մտահոգված էին, որ այս տարվա ավարտական քննությունները փաստեցին դպրոցականների՝ մայրենի լեզվի իմացության ցածր մակարդակը:

Մայրաքաղաքի դպրոցների տարբեր դասարանների ուսուցիչները հույս հայտնեցին, որ այսպիսի հանդիպումները կլինեն պարբերական ու կդառնան գործնական խնդիրներ ներկայացնելու և միասնաբար լուծումներ գտնելու հարթակ: Ծավալվեց խոսակցություն դպրոցների առջև կանգնած դժվարին և շատ դեպքերում անլուծելի խնդիր դարձած ներառական կրթության մասին:

Հասարակությանը հուզող հարցերն նաև կրթական առկա ծրագ-

րերն ու դասագրքերը: Գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտություններ դպրոցը պիտի տա, սակայն դպրոցական դասագրքերով քերականախեղդ անելով աշակերտին՝ նրան չեն տալիս մայրենի լեզվին պատշաճ չափով տիրապետելու, իր մտքերն անկաշկանդ արտահայտելու ունակություն և հմտություն: Դասագրքային սխալ քաղաքականությունը հավասարապես քննադատեցին թե՛ գիտաշխատողները և թե՛ ուսուցիչները: Հետագա հանդիպումների ժամանակ այդ խնդիրը քննարկելու և միասնաբար լուծումներ առաջարկելու հարցը երկուստեք հավանության արժանացավ: Բոլորը համակարծիք էին, որ լեզվի կանոնարկման խնդիրը օրվա հրամայականն է, և դասագրքեր ստեղծելիս բուհական դասախոսներից բացի պետք է ներգրավել նաև դասավանդող ուսուցիչներին և լեզվի ինստիտուտի գիտնականներին: Արդի լեզվաքաղաքականություն իրականացնող բոլոր օղակները՝ դպրոց, բուհ, ուսումնական կենտրոններ, պետք է գործեն նպատակաուղղված, քանզի լեզուն բացարձակ արժեք է:

Հանդիպման մասնակիցները պայմանավորվեցին հաջորդ անգամ հանդիպել 2020թ. հունվարի 17-ին: Քննարկման նյութ կդառնան դպրոցում հայոց լեզվի դասավանդման ծրագրային խնդիրները և դասագրքային քաղաքականությունը:

Սույն թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը հյուրըն-

կալել էր Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը, ներկայացրեց ինստիտուտի անցած ուղին, ձեռքբերումները, հեռանկարային ծրագրերը:

Ելույթներով հանդես եկան և բաժինների գործունեությունը ներկայացրին ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ Վ. Համբարձումյանը, բառարանագրության բաժնի վարիչ Ա. Գալստյանը:

Ինստիտուտի աշխատակից Ս. Սիրունյանն անդրադարձավ հայոց լեզվի պատմության բաժնի աշխատանքներին: Ուսանողների հետ հետաքրքիր քննարկում ծավալեց արևմտահայերենի բաժնի աշխատա-

կից Ռ. Թոխմախյանը: Մ. Սարգսյանը ներկայացրեց «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագիրը, ինչպես նաև ուսանողներին առաջարկեց միանալ ինստիտուտին կից գործող Լեզվի երիտասարդ պաշտպանների խորհրդի աշխատանքներին և ձեռք բերել կամավորական աշխատանքի առաջին փորձառությունը:

Ամփոփելով ելույթները՝ ինստիտուտի տնօրենն առաջարկեց պարբերական դարձնել նմանատիպ հանդիպումները և համագործակցությունը: Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ուսանողներն ինստիտուտից հեռացան նվերներով. տնօրենն ուսանողներին նվիրեց գրքեր՝ ինստիտուտի վերջին հրատարակություններից:

Մ Ե Ր Հ Ո Ր Ե Լ Յ Ա Ր Ն Ե Ր Ը.

ՎԱՍՏԱԿՈՎ ԵՎ ԲԱՐՈՒԹՅԱՄԲ ԼԵՑՈՒՆ ԻՆԸ ՏԱՄՆԱՄՅԱԿ

Արդի հայ լեզվաբանության և բուհական կրթության նշանավոր ու սիրված դեմքերից է լեզվաբան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աշոտի Գալստյանը:

Այս տարի գիտնականը դառնում է 90 տարեկան:

Անվանի հայագետն ու սիրված դասախոսը ծնվել է 1929 թ. Կապանի շրջանի Կեմանց գյուղում: 1947 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1952-ին դարձյալ գերազանցությամբ՝ Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1953-56 թթ. ուսանել է համալսարանի ասպիրանտուրայում՝ ժամանակակից հայոց լեզու մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ ակադ. Գ. Սևակ):

1956 թ. Ս. Գալստյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն («Մ. Նալբանդյանի լեզուն ըստ հրապարակախոսության տվյալների»), իսկ 1986 թ.՝ դոկտորական ատենախոսություն («Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում»), 1987 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1957 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1962-2013 թթ. աշխատել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնում:

Անվանի գիտնականի գրչին են պատկանում հայերենի գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ և դասագրքեր, տարբեր բնույթի բառարաններ, մի քանի տասնյակից ավելի գիտական հոդվածներ և գրախոսություններ:

1963 թ. լույս է տեսել «Ակնարկներ աշխարհաբարի պատմության (1850-1860-ական թվականներ)» հետազոտությունը՝ նվիրված 19-րդ դարի 50-60-ական թթ. մեր գրական լեզվի խնդիրների լուսաբանմանը: Այդ աշխատության մեջ նա քննել է «Հիւսիսափայլ» ամսագրի լեզվական հիմնական իրողությունները՝ հնչյունական, բառային և քերականական երևույթները:

1974 թ. հրատարակվել են «Ածանցների հոմանշությունը և հոմանիշ ածանցները», մեկ տարի անց՝ «Գոյական հիմքերից ածական կազմող վերջածանցները ժամանակակից հայերենում» աշխատությունները: 1978 թ. լույս է տեսել Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից

հայերենում» հետազոտությունը, որում տրված է ժամանակակից հայերենի ածանցական կառուցվածքների և ածանցման կաղապարների համաժամանակյա նկարագրությունը: Ուսումնասիրված են ածանցման առանձնահատկությունները և ածանցյալ բառերի կաղապարները, նախածանցավոր և վերջածանցավոր բաղադրությունները, ածանցման ածանցավոր հիմքերը, բայական ածանցման առանձնահատկությունները, ածանցների հոմանշության և հարակից այլ խնդիրներ: Նշված գիտական արժանիքների համար աշխատությունը բարձր գնահատվեց մասնագետների կողմից՝ որակվելով որպես նոր խոսք հայ լեզվաբանության մեջ. հեղինակին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Ս. Գալստյանը, գիտական խորը, ամբողջական և համակողմանի քննության նյութ դարձնելով արդի հայերենի բառակազմական մասնիկները, դրանք ուսումնասիրել է նոր եղանակով: Աներկբայորեն կարելի է ասել, որ նա արդի հայերենի բառակազմության համակարգը ամենից համակողմանի ուսումնասիրած լեզվաբաններից է:

Առանձնապես մեծ է պրոֆ. Ս. Գալստյանի վաստակը հայ բառարանագրության ասպարեզում: 1975 թ. լույս տեսած «Լեզվաբանական բառարանը» (հեղինակակիցներ՝ Հ. Պետրոսյան և Թ. Ղարազուլյան) նոր տիպի բառարանագրական աշխատություն է, որի բառացանկն ընդգրկում է ոչ միայն հայ լեզվաբանական-քերականագիտական եզրույթները՝ սկսած V դ. մինչև նորագույն ժամանակները, եզրույթների մեծ մասն ունի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, մասամբ և լատիներեն ու հունարեն համարժեքները: Հանրագիտական բնույթ ունեցող այս բառարանում համառոտ տեղեկություններ են տրվում աշխարհի լեզուների և գրատեսակների վերաբերյալ:

Արժեքավոր է նաև «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (հեղինակակից՝ Ա. Սուքիասյան). պարունակում է ավելի քան 24 հազար դարձվածային միավոր և ընդգրկում է ինչպես արդի գրական հայերենի, այնպես էլ ժողովրդական, գավառական-բարբառային այն դարձվածքները, որոնք լայնորեն թափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ էլ գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում:

Վաստակաշատ գիտնականի աշխատասիրությամբ կազմվել է մոտ 150 հազար բառահոդված պարունակող «Հայոց լեզվի բառակազմական բառարանը» (անտիպ, համահեղինակ՝ Աշոտ Սուքիասյան): 2011 թ. լույս տեսավ «Դպրոցական բառակազմական բառարանը»՝ հիշյալ անտիպ բառարանի հիման վրա: Այն հայերենի հրատարակված առաջին բառակազմական բառարանն է, ներառում է մոտ 20 հազար բառահոդված, որոնք արտացոլում են ավելի քան 30 հազար բառի կազմություն:

Գիտնականը եռանդուն մասնակցություն է ունեցել արդի գրական արևելահայերենի և արևմտահայերենի մոտ 240 հազար բառ և դարձվածային միավոր պարունակող «Արդի հայերենի բացատրական նոր բառարանի» (անտիպ) ստեղծմանը. ավելի քան 500 հեղինակային մամուլ կազմող այս նոր քառահատոր բառարանի քառորդ մասի հեղինակն ու գլխավոր խմբագրական եռյակի անդամ է նա:

Ս. Գալստյանը պրոֆ. իս. Բաղկյանի հետ հրատարակել է Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության վերջին հատորը: Անվանի բառարանագիրը խմբագրել է 2015 թ. լույս տեսած «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարանը» (հեղինակներ՝ Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան). 1200 էջ ծավալով այս բառարանը ներառում է շուրջ 14000 եզրույթ: Գիտնականի գրչին է պատկանում նաև «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկը» (ինչյունաբանություն, բառագիտություն) բանասիրական և հումանիտար ֆակուլտետների համար (ԵՊՀ հրատ. 2003 թ., 2007թ., 2008 թ.):

Ս. Գալստյանը արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի օտարազգի և սփյուռքահայ ուսանողների համար գրել է դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ («Ընթերցարան», 1967թ., թ., հեղինակակիցներ՝ Ս. Արևշատյան, Գ. Գարեգինյան, «Հայոց լեզու», 1968թ., «Հայերենի գրուցարան», 1990 թ., հեղինակակից Գ. Գարեգինյան) և այլն:

Ս. Գալստյանը հաջողությամբ համատեղել է դասախոսական, վարչական ու գիտահետազոտական աշխատանքները. 1964-70 թթ. և 1980-81 թթ.՝ բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-79 թթ.՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-80 թթ.՝ նույն ֆակուլտետում իր հիմնադրած հայոց լեզվի ամբիոնի վարիչ: Տասնամյակներ շարունակ «Բանբեր Երևանի համալսարանի» (հայագիտություն) հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է: Ներկայումս «Հայկական բանակ» ամսագրի գիտախորհրդատվական խորհրդի անդամ է, «Նոր բառեր» մատենաշարի համահեղինակ:

ՀՀ Նախագահի 2014 թ. սեպտեմբերի 8-ի հրամանագրով «Գիտության և կրթության բնագավառների զարգացման գործում ներդրած ավանդի, երկարամյա արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար» պրոֆ. Ս. Ա. Գալստյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

Սիրելի հոբելյարին ցանկանք քաջառողջություն և նոր հրապարակումներ հայերենագիտության բնագավառում:

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Բալոյան

ՌՈՔԵՐՏ ԼԻՊԱՐԻՏԻ ՈՒՌՈՒՏՅԱՆ

(1934-2019)

Կյանքի 85-րդ տարում վախճանվեց ՀՀ ԳԱԱ հնագույն աշխատակից, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի առաջատար գիտաշխատող, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Լիպարիտի Ուռուտյանը:

Ռ. Ուռուտյանը այն հազվագյուտ հետազոտողներից էր, որն իր գիտական աշխատանքներում զուգակցում էր ճշգրիտ և հումանիտար գիտությունների հետազոտական մեթոդները՝ մի նոր աստիճանի բարձրացնելով հայ բանասիրության նվաճումները: Նրա գիտական գործունեությունը սկսվել է ՀՀ ԳԱ հաշվողական կենտրոնում, որտեղ նա, աշխատելով որպես ինֆորմացիայի վերամշակման մասնագիտացված մեքենաների լաբորատորիայի վարիչ, մեծ նպաստ է բերել հաշվողական տեխնիկայի կատարելագործման ու արդիականացման գործին: Մասնավորապես մեծ է եղել նրա մասնակցությունը 1967 թ. մինչ այդ նախադեպ չունեցող թարգմանական մեքենան («Գառնի») նախագծելիս և ստեղծելիս:

1972 թ. ՀՀ ԳԱ նախագահության որոշմամբ Ռ.Ուռուտյանը տեղափոխվել է լեզվի ինստիտուտ՝ որպես ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիայի վարիչ: Երկար տարիներ նա զբաղվել է լեզվական ու լեզվաբանական կադապարների մշակման և հաշվողական տեխնիկայի օգնությամբ դրանք փորձարկելու հարցերով: Մեծ է նրա վաստակը հատկապես հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման աշխատանքներում: Ռ. Ուռուտյանի մշակած ծրագրով ներկայումս կատարվում է բարբառագիտական նյութերի ներածում և համակարգչային մշակում:

Ռ. Ուռուտյանը հեղինակ է երկու մենագրության և ութ տասնյակից ավելի գիտական հոդվածների: Նրա հեղինակությամբ լույս տեսած «Կիբեռնետիկական և լեզվաբանությունը» (Ե., Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 160 էջ) և «Ժամանակակից հայերենի բայական բառակապակցությունների ձևային նկարագրություն» (Ե., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 168 էջ) գրքերը մնայուն արժեք են հայ լեզվաբանության բնագավառում:

Նրա հիշատակը վառ կմնա հարազատների, գործընկերների, բազմաթիվ սաների հիշողության մեջ:

ԱՆԻ ՆՇԱՆԻ ՀԱՆԵՅԱԼ

(1941-2019)

Երկարատև, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ճանաչված բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի (Անահիտ) Նշանի Հանեյանը:

Ա. Հանեյանը ծնվել է 1941 թ. մարտի 3-ին, Երուսաղեմում՝ Մեծ Եդեռնից փրկված և Պաղեստինում հաստատված քեսաբցիների ընտանիքում: 1947 թ. նրանց ընտանիքը հայրենադարձվել է և հաստատվել Երևանում, որտեղ ավարտել է միջնակարգը և Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Ա. Հանեյանի մասնագիտական ողջ գործունեությունը կապված է եղել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, որտեղ ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, երկար տարիներ աշխատել որպես բարբառագիտության բաժնի գիտաշխատող, ավագ գիտաշխատող և բարբառների ուսումնասիրության թեմատիկ խմբի ղեկավար:

Նա հեղինակ է հայերենի բարբառների հնչյունաբանության, բարբառագիտության, ձևաբանության հարցերին նվիրված բազմաթիվ գիտական աշխատանքների, Տիգրանակերտի բարբառին նվիրված մենագրության («Տիգրանակերտի բարբառը», Ե., Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 231 էջ): Ա. Հանեյանը մեծ ներդրում ունի հայերենի բարբառների բաղաձայնական համակարգի ուսումնասիրության մեջ: Իր գործուն մասնակցությունն է ունեցել «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի» հավաքման ծրագրի ստեղծման աշխատանքներին:

Ա. Հանեյանը իր հայրենիքին, նրա մշակութային արժեքներին հոգու ամենամոլորական թելերով կապված մտավորական էր, որի վկայությունն է, մասնավորապես, լեզվի ինստիտուտում հիմնված, հետագայում լայն ճանաչում գտած «Ակունք» ազգագրական համույթին նրա մասնակցությունը:

Վաստակաշատ գիտնականի և ազնիվ մտավորականի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, գործընկերների սրտերում:

ԺԱՆՆԱ ԱՆՂՐԱՆԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

(1946-2019)

Կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի վարիչի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Անդրանիկի Միքայելյանը:

Ժ. Միքայելյանը ծնվել է 1946 թվականի դեկտեմբերի 15-ին, Քանաքեռում: 1949 թվականից նրանց ընտանիքը տեղափոխվել է Գորիս: 1965 թվականին ավարտել է միջնակարգը և ընդունվել Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ֆրանսիական բանասիրության բաժինը, որն ավարտել է 1969 թվականին: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում աշխատել է 1977 թ. , բարբառագիտության բաժնում՝ 1979 թ., իսկ 2011 թ. բարբառագիտության բաժնի վարիչի տեղակալն էր:

2006 թվականին պաշտպանել է ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նրա բազմամյա հետազոտությունների ամփոփումն էր «Վասպուրականի տարածքի բարբառները» (Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 144 էջ) մենագրությունը, որում տարածքի քմային ձայնավորների գործառական ծագումնաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմամբ բացահայտել է բարբառային միավորների հնչյունական համակարգերի կազմավորման և զարգացման օրինաչափությունները: Հմուտ բարբառագետը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, որոշակի ներդրում ունի հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով նախատեսված երեք տասնյակից ավելի բնակավայրերի խոսվածքների գրանցման գործում, տարիներ շարունակ ղեկավարում էր բարբառների համակարգչային թվայնացման աշխատանքները:

Ժ. Միքայելյանը հայրենասեր, շիտակ և ազնիվ քաղաքացի էր, մայրենի լեզվին և հայրենի մշակույթին կապված մտավորական: Հարազատ քրոջ՝ Մելադա Աղաբեկյանի և մյուս գործընկերների հետ մեծ ջանքեր էր ներդրել լեզվի ինստիտուտում «Ակունք» ազգագրական համույթի ստեղծմանը:

Նվիրյալ գործընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, գործընկերների սրտերում:

ՆՎԵՐ ԺՈՐԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ (1949-2019)

Ճանաչված լեզվաբան, ԳԱԱ լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ Նվեր Սարգսյանի վաղաժամ մահը մեծ կորուստ էր հայագիտության համար:

Ն. Ժ. Սարգսյանը ծնվել է 1949թ., Երևանում, 1971 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ընդունվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ ժամանակակից հայոց լեզու մասնագիտությամբ: 1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, տարիներ շարունակ եղել է ինստիտուտի բարբառագիտության բաժնի վարիչ, թեմատիկ խմբի ղեկավար, այնուհետև ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչ:

Նա հայերենի հմուտ մասնագետ էր: Նրա «Հավելական հարաբերության արտահայտությունը հայերենում» (Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 204 էջ) մենագրությունը գիտական լուրջ ներդրում է: Նա հեղինակ է «Լեզվի և ոճի հարցեր» (պրակ, 6, 10) ժողովածուներում, ինչպես նաև գիտական հանդեսների էջերում լույս տեսած ծավալուն աշխատանքների:

Ն. Սարգսյանը բազմիցս մասնակցել է հայերենագիտական գիտաժողովների և կոնֆերանսների, հանդես եկել հայերենի արդիական խնդիրներին վերաբերող զեկուցումներով:

Տարբեր տարիների ղեկավարելով լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը, իսկ վերջին շրջանում՝ արդի հայերենի բաժինը՝ Ն. Սարգսյանը դրսևորել է իր մասնագիտական բարձր մակարդակը և այդ շատ կարևոր բաժինները ղեկավարելու հմտություններ:

Ինստիտուտի աշխատակիցներս ծանր ու ցավալի կորստի զգացողություն ունեցանք, որովհետև նա վայելում էր գործընկերների սերն ու հարգանքը՝ որպես բարձրակարգ մասնագետ, բանիմաց ղեկավար և սրբտաքավ ընկեր: Նա ընտանիքի հոգատար հայր էր, պատվախնդիր և հայրենանվեր քաղաքացի:

Ն. Սարգսյանի հիշատակը մնալու է ընկերների և գործընկերների, հարազատների և ճանաչողների սրտերում:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱԾՆԵՐ

Ռ. Մ. Թոխմախյան, Թվի քերականական կարգի հոգնակիության դրսևորումը հայերենում. հավաքական գոյականներ	3
Մ. Ա. Սարգսյան, Կիրառական լեզվաբանության բնագավառի զարգացումը և խնդիրները Հայաստանում	9
Ա. Ս. Սուվարյան, Ժամանակակից գրական արևելահայերենի և գերմաներենի թվականի բառագիտական և ձևաբանական տիպաբանություն	15

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վ. Զ. Պետրոսյան, Հնչոյթի հասկացական արժեքայնությունը գործառական հնչոյթաբանության մեջ	27
Ս. Ա. Միքայելյան, Արդի գրական հայերենի՝ արաբերեն ծագման մի քանի փոխառությունների մասին	38
Ք. Ս. Ռաֆայելովա, Համեմատության և փոխաբերության հարաբերակցությունը (ռուսերեն, հայերեն և արաբերեն նյութերի հիման վրա)	43
Ս. Ռ. Ավետյան, Լեզվաբանական տիպաբանության զարգացման հիմնական փուլերը	50

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Գ. Բարսեղյան, Խոսքի տրամաբանական կապը Թումանյանի քառյակներում	62
Հ. Մելքոնյան, «Հեղինակային հատկանունը» Եղիշե Չարենցի չափածոյում	70
Գ. Գ. Գրիգորյան, Հնչերանգը չորս բնույթի նախադասություններում հայերենի, ռուսերենի, անգլերենի համեմատությամբ (փորձառական հետազոտություն)	78

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ. Ա. Սարգսյան, Հայերենի կանոնարկմանը նվիրված կարևոր աշխատություն	86
ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ	89
ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ	95
ԼՐԱՏՈՒ	98

СОДЕРЖАНИЕ

Статьи: Р. М. Т о х м а х я н, Грамматическая категория множественности существительных в армянском языке: собирательные существительные: 3. М. А. С а р г с я н, Развитие и проблемы прикладной лингвистики в Армении: 9. А. С. С у в а р я н, Лексическая и морфологическая типология числительного в современном литературном восточноармянском и немецком: 15. **Дискуссии и обсуждения:** В. З. Петросян, Концептуальная значимость фонемы в функциональной фонологии: 27. С. А. М и к а е л я н, О некоторых заимствованиях слов арабского происхождения в современном армянском языке: 38. К. С. Р а ф а е л о в а, Соотношение сравнения метафоры (На материале русского, армянского и арабского языков): 43. С. Р. А в е т я н, Основные периоды в развитии лингвистической типологии: 50. **Сообщения:** А. С. Б а р с е г я н, Логические отношения в катренах Туманяна: 62. Э. А. М е л к о н я н, «Авторские имена собственные» в поэзии Егише Чаренца: 70. Г. Г. Г р и г о р я н, Интонация в 4-х типа предложениях в сравнении трех языков: 78. **Рецензия:** 86. *Научная жизнь*: 89. **Хроника:** 98.

CONTENTS

Articles: R. M. T o k h m a k h y a n, The grammatical order of the plural of nouns in Armenian language: common nouns: 3. M. A. S a r g s y a n, The development and problems of Applied Linguistics in Armenia: 9. A. S. S u v a r y a n, Lexical and morphological typology of the numeral in modern literary Eastern Armenian and German: 15. **Discussion:** V. Z. P e t r o s y a n, Conceptual Value of the Phoneme in Functional Phonology: 27. S. A. M i k a e l y a n, A Number of Borrowings of Arabic Origin in Modern Literary Armenian: 38. K. S. R a f a y e l o v a, The correlation of a comparison and a metaphor. /based on russian, armenian and arabic/: 43. S. R. A v e t y a n, Main Periods in the Development of Linguistic Typology: 50. **Reports:** A. C. B a r s e g h y a n, The Logical Relationship in the Quatrains of Tumanyan: 62. H. A. M e l k o n y a n, "Authorial proper names" in poetry Eghiche Charents: 70. G. G. G r i g o r y a n, The intonation in 4-character sentences in comparison to 3 languages: 78. **Review:** 86. **Science News:** 89. **News:** 98.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Գայքեջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Языкиязыкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- TimesNewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru